

ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հրատարակիչ՝ «ՀԱՅՐԵՆԻՔ» ակումբ

*Երկրորդ, լրացված եւ բարեփոխված
հրատարակություն*

Երեւան - 2008

Մուշեղ Լալայան, Ազգային գաղափարախոսության խնդիրների
շուրջ: Յրատարակիչ՝ «Հայրենիք» ակումբ: Երևան, 2008, 104 էջ:

Գրքույկում ներկայացված են Հայ ազգային գաղափարախոսության հիմնահարցերը, շարադրված են նրա հիմնական դրույթները: Քննարկվում են Ազգային գաղափարախոսության իրացման ուղիները եւ հարակից այլ հարցեր:

© «Հայրենիք» ակումբ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ

Սահմանումը, ըմբռնումները

Յուրաքանչյուր կենսունակ՝ իր առաքելության գիտակցումն ունեցող ազգ, ելնելով սեփական աշխարհըմբռնումից, սահմանում է իր արժեքների համակարգը, նպատակներն ու իղձերը, նախանշում իր հարատեւման ռազմավարությունը, որոնց տեսաբանված ամբողջությունը հանդես է գալիս իբրեւ տվյալ ազգի գաղափարախոսություն: Այն նրա համար դառնում է մի տեսակ Ավետարան, որով նա առաջնորդվում է իր գոյության ընթացքում: Առանց այդ գաղափարախոսության, որեւէ ազգ կենսունակ չէ ազգերի գոյության պայքարում: Առանց դրա, նա դառնում է պատեհապաշտ՝ գործելակերպի մեջ անսկզբունք, նպատակի եւ անելիքի մեջ չկողմնորոշվող, եւ, հաճախ, իբրեւ դեպքերի խաղալիք, դուրս է մնում պատմության ասպարեզից: Վկա՝ ազգերի գոյապայքարը: Այդ է ցույց տալիս նաեւ մեր պատմությունը, որի արյունոտ ու արցունքոտ էջերից շատերը արդյունք են սեփական գաղափարախոսության բացակայության եւ օտար արժեքների, ուսմունքների ազդեցության:

Այդուհանդերձ, Ազգային գաղափարախոսությունը մեկ, ամբողջական փաստաթուղթ չէ, այլ՝ բազմաշերտ է: Օրինակ, հրեական գաղափարախոսությունն իր մեջ ներառում է գաղափարական մի շարք համակարգեր՝ Թորա, Թալմուդ, Կաբբալա, Սիոնիզմ եւ այլն, որոնք թեւ ժամանակների ու շոշափվող հարթությունների առումով տարբեր են, բայց էաբանորեն նույնն են:

Հայկական գաղափարախոսության մեջ առկա են եւ Այբուրբենը, եւ Էպոսը, եւ հայոց Աստվածաճանաչողությունը, եւ Ցեղակրոնությունը, եւ Տարոնականությունը... Եւ ապագայում ստեղծվելիք արժեքավորը, որոնք ունենալով իրենց ուրույն տեղը գաղափարախոսության մեջ՝ ամբողջացնում են այն:

Մեզանում հաճախ է խոսվում Ազգային գաղափարախոսության՝ կեղծ կամ իրական կատեգորիա լինելու առնչությամբ: Ազգային գաղափարախոսությունը կեղծ հռչակողները, թերեւս, ելնում են նրանից, թե չի՛ կարող լինել մեկ, միասնական գաղափարախոսություն հայության բոլոր անդամների կամ

հատվածների (իմա՝ հայ ժողովրդի) համար: Մենք էլ ենք պնդում, որ չկա՝ համընդհանուր գաղափարախոսություն բոլոր հայ կոչվողների (օրինակ՝ ազգասերի ու ազգադավի, աշխատավորի եւ թալանչիի) համար: Բայց անպայմանորեն կան ընդհանրական գաղափարներ եւ արժեքներ (Հայրենիք, Անկախություն, Լեզու, Մշակույթ եւ այլն) բոլոր այն հայորդիների համար, որոնք շատ թե քիչ պարտավորվածություն են զգում Ազգի եւ Հայրենիքի հանդեպ: Իսկ Ազգային գաղափարախոսությունը, մեկ այլ ձևակերպմամբ, այդ ընդհանրական՝ Ազգի անդամներին իրար հոգեպես կամ գիտակցորեն կապող, շողկապող գաղափարների ու արժեքների համակարգն է: Թյուրիմացությունն (եթե այն, իհարկե, միտումնավոր չէ) այն է, որ «Հայ ազգ»-ի մեջ ոմանք ներառում են բոլոր հայանուններին (իրականում նկատի ունենալով *հայ ժողովուրդը*), իսկ մենք՝ հայ մնալ կամեցողներին, հայորեն ապրել ձգտողներին (այսինքն՝ *հայ ազգը*):

Վերոնշյալը, նաեւ, «ազգ» եւ «ժողովուրդ» եզրերը շփոթելու, դրանք չտարբերակելու ակնառու օրինակ է, ինչը պարտադրում է վերացնել այդօրինակ հասկացությունների՝ մեզանում առկա խառնաշփոթը, տալով դրանց սահմանումն ու տարբերակումը:

Ազգային գաղափարախոսությունը եւ մեր առաքելությունը

Հասկանալի է, որ Ազգային գաղափարախոսությունը պիտի բխի սեփական առաքելության գիտակցմամբ սահմանված՝ ազգային գերնպատակից:

Հայոց գերնպատակ-առաքելությունը մենք հասկանում եւ սահմանում ենք այսպես. *սեփական Ոգու անընդհատ զարգացմամբ եւ Հայաստանում Հայ ցեղի հավիտենության ապահովմամբ՝ Բացարձակին ու Հավերժին, որ է՝ Արարչին մերձենալը:*

Սա մեր նախասահմանված առաքելությունն է, որ տրված է ի բնե:

Կա, սակայն, մի այլ առաքելություն եւս, որ ստանձնում ես կամովին, երբ տեսնում ես աշխարհի աստվածային-բնական կարգը խախտված:

Նեմզ կամքի կրողները միշտ էլ ուզում են աշխարհին տեր լինել, այսինքն՝ աշխարհին տիրել՝ իրենց անբնական կարգը պարտադրել-հաստատելով: Այնինչ *հարկ է աշխարհին տիրություն անել*՝ աստվածային-բնական կարգը պահպանել-հաստատելով:

կարգ, որում յուրաքանչյուր ազգ՝ իր բնական հոգեմտավոր կերպին համապատասխան, իր ավանդն է բերում մարդկության ընդհանուր գործին, նպատակներին:

Համաշխարհային այդ առաքելությունն իրագործելի է, երբ կա զինակցությունը բոլոր նրանց, ովքեր հոգեւորն ու մարդկայինը պահելու եւ ազգերի ներդաշնակ բազմազանությունն ապահովելու մտահոգությամբ՝ պատրաստ են մաքառելու հանուն ճշմարիտ արժեհամակարգի եւ աշխարհակարգի հաստատման:

Մի դեպքում մենք պատասխանատու ենք միայն մեզ համար, մյուս դեպքում՝ բոլորի:

Ե՞րբ է այն առաջագել

Մեր կարծիքով, Ազգային գաղափարախոսությունը՝ իբրեւ ազգային գաղափարների համակարգ, իբրեւ **Ազգի առաքելության իմաստաբանություն**, գոյություն ունի ի սկզբանե, Ազգի ծնունդի հետ, եւ խնդիրը ո՛չ թե այն ստեղծելը, այլ՝ *ճանաչելը, հայտնագործելն է:*

Պատմական ի՞նչ դրսեւորումներ է ունեցել

Ցավոք, մենք չգիտենք՝ արդյո՞ք եղել է ձեւակերպված գաղափարական համակարգ նախաքրիստոնեական Հայաստանում՝ մեհենական իմաստություններում: Գիտությունն այդ մասին առայժմ բան չի ասում: Իսկ միջնադարյան կամ նորդարյան հայ իմաստասիրական միտքը, բացառությամբ աննշան առկայծումների, կարելի է ասել, այդ բնագավառում մնաց ամուլ: Այս շրջանում մեզանում գաղափարախոսական շատ թե քիչ ամբողջական ազգային համակարգերի գոյության մասին պետք է արտահայտվել մեծ վերապահությամբ: Ավելի ճիշտ կլինի խոսել այդ շրջանում ազգային այս կամ այն գաղափարի բյուրեղացման, դրա իրացումը որպես նպատակ դարձնելու մասին: Որպես այդպիսին առավել ցայտուն էին սեփական ինքնության պահպանման (հայքրիստոնյայի) եւ դրան միտված՝ «վասն հավատո եւ հայրենյաց» նահատակվելու, ինչպես նաեւ՝ օտարի լծից ազատագրվելու եւ սեփական պետություն ունենալու գաղափարախոսությունները: Հասկանալի է, որ այստեղ գաղափարախոսության գոյության մասին խոսելը պայմանական է:

Նորագույն ժամանակներում եղան ամբողջական գաղափարական համակարգեր տալու հաջողված փորձեր, որոնց

շարքում հատկապես պետք է առանձնացնել Գարեգին Նժդեհի, Չայկ Ասատրյանի եւ այլոց կողմից ձեւակերպված Ցեղակոծությունը եւ Տարոնականությունը: Ինչեւէ, ամբողջական հայկականության տեսությունը դեռ պիտի վերակերտվի:

Ո՞վ է որոշելու այդ գաղափարախոսությունը

Ոմանք, տուրք տալով ամբոխավարությանը, պնդում են, թե ժողովուրդը պետք է որոշի՝ ո՞րն է իր Ազգային գաղափարախոսությունը, եւ իբրեւ դրա իրականացման միջոց՝ առաջարկում են հետեւյալը. թող ժողովուրդը ընտրությունների միջոցով նախընտրի այս կամ այն կուսակցության գաղափարախոսությունը, որն էլ նրա համար կդառնա Ազգային գաղափարախոսություն: Չարկ չենք համարում հիմնավորել, թե որքան անլուրջ եւ ամբոխին դուր գալու ձգտում ունի այս մոտեցումը:

Ազգի մտավոր ընտրանին է մշակողն ու ամբողջացնողը Ազգային գաղափարախոսության, որն էլ ազգի մնացած անդամների համար դառնում է աշխարհընկալման հիմք, կյանքի կողմնորոշիչ: Իսկ մտավոր ընտրանին, անշուշտ, չի որոշվում ընտրությունների ու քվեարկությունների միջոցով, այլ՝ ձեւավորվում է բնական ընտրության ճանապարհով: Ընտրյալներն ի հայտ են գալիս հատկապես պատմության անկյունադարձերի ժամանակ, եւ շնորհիվ իրենց մտավոր ու բարոյական կարողականության՝ բնականորեն դառնում տվյալ ազգի մտավորականներ:

Արդի վիճակը

Չայ կյանքում այսօր առկա ճգնաժամն, առաջին հերթին, հետեւանք է մեր քաղաքական եւ մտավոր ընտրանու հիմնական մասի՝ օտար արժեհամակարգերից կախվածության, արժեքների սեփական համակարգ հաստատելու նրա անկարողության, որի արդյունքում՝ հայությունը, համատարած կապումի պայմաններում, դառնում է անդիմազիծ:

Ազգային գաղափարախոսության վերաբերյալ շուրջ 20-ամյա խոսակցությունները կարծես մտել են փակուղի: Չ՞ առաջին իշխանության կողմից այն միանշանակորեն մերժվում էր: Չաջորդ իշխանության համար Ազգային գաղափարախոսության խնդիրն օրակարգի հարց չդարձավ:

Մեր պետությունը պարտավոր է ասել իր քաղաքացուն, թե որն է նրա կյանքի իմաստը, ինչու ինքը պիտի հա՛յ մնա, ապրի

Հայրենիքում, դրա համար մեռնի՛, զոհաբերի՛ հանուն սերունդների, կամ ինչ ասել է՝ լինել լավ քաղաքացի, լավ հայ...

Սրանք կենսական հարցադրումներ են, որոնց պատասխանները պետք է փնտրել հոգեւոր-բարոյական արժեքների հարթության մեջ: Այդ պատասխաններն են կանխորոշելու մեր անելիքը, իմաստավորելու՝ մեր պատմական ընթացքը:

Մեզանում դեռ չի գիտակցված, որ ամեն մի բարեփոխում սկսվում է մարդուց՝ նրա հոգեբարոյական կերպարի ձեւավորումից: Քանզի, եթե մարդու՝ իբրեւ հայի եւ Հայաստանի քաղաքացու համար չի սահմանված բարոյական արժեքների համակարգ եւ դրանից բխող վարքի կանոններ, ու այդ ամենը չի հասցված նրա սրտին եւ ուղեղին, անընդհատ պիտի գանգատվենք օրենքների չգոյությունից, դրանց անկատարությունից, տնտեսական ոչ ճիշտ քաղաքականությունից, դատական համակարգից, աշխարհագրական դիրքից, ճակատագրից... Աստծուց:

Հայաստանի այսօրվա հասարակական-քաղաքական դաշտը չի ձեւավորված Ազգային գաղափարախոսության պահանջներին ու տրամաբանությանը համապատասխան: Նույնիսկ քաղաքական այն ուժերը, որոնք սովորաբար հանդես են գալիս Ազգային գաղափարախոսության գոյության եւ պետականորեն անհրաժեշտ լինելու օգտին, այսօր գործի եւ գաղափարի ներդաշնակեցման դժվարին խնդրի առաջ են:

Հայ եկեղեցին, որ Ազգային գաղափարախոսության ամբողջական կրողի հավակնություններ ուներ, ներկայումս նախընտրել է աշխարհիկ խնդիրների ոլորտը, վտանգելով իր՝ հոգեւոր հաստատություն լինելու հանգամանքը:

Իսկ մտավորականությունը՝ Այսօր Հայաստանում մտավորականությունը՝ որպես ազգային-հոգեւոր դաշտում գործող, իրար ընդհանուր գաղափարով շաղկապված մարդկանց մի համախումբ, ցավոք, չկա՛: Կան անհատ մտավորականներ, որոնք այս կամ այն կերպ փորձում են Ազգային գաղափարախոսության թեման օրակարգի հարց դարձնել:

Այսպիսով, Ազգային գաղափարախոսության ամբողջացումը եւ գործադրումը կենսական անհրաժեշտություն է, օրվա հրամայական:

Այն ենթադրում է մեզանում որոշակի կարծրատիպերի հաղթահարում եւ աշխարհայացքային նոր մոտեցումներ, ինչը

հետեւողական աշխատանք է ու պահանջում է ուժերի կենտրոնացում:

Մյուս կողմից, գաղափարախոսությունն արժեւորվում է, եթե դրա կրողներն ու հավատավորները լծվում են այն իրականացնելուն՝ գործելով դրա հռչակած բարոյական արժեքներին ու սկզբունքներին համապատասխան:

Ազգային գաղափար

Ազգային գաղափարախոսության առիթով, հաճախ է արժարծովում «Ազգային գաղափար» եզրը: Ոմանք այդ եզրի տակ հասկանում են Ազգի գերնպատակ, առաքելություն եւ գաղափարախոսությունը կառուցում դրա շուրջ:

Մենք ելնում ենք կառուցվածքային հետեւյալ մեկնակետից. նախ հարկ է ունենալ սեփական առաքելության գիտակցմամբ սահմանված՝ ազգային գերնպատակ, տեսլական (*իդեալ*), դրանից բխող գաղափարախոսություն (*իդեալ-լոգիա*) եւ օրվան պատշաճ Ազգային գաղափար (*իդեա*):

Անշուշտ, Ազգային գաղափարախոսությունը նաեւ ազգային գաղափարների համախումբ է, սակայն ազգերի պատմության անկյունադարձային ամեն ժամանակահատված առաջ է մղում մեկ կամ մի քանի գաղափարներ, որոնք, պատմական ընթացքի այդ պահին, իրենց ձգողական ուժով տվյալ ազգի համար դառնում են ոգեշնչման աղբյուր, պայքարի ուղենիշ: Եվ իրենց կենսունակությունը չկորցրած ազգերի ընտրանին, սեփական կոչումին հավատարիմ, պարտավոր է վճռորոշ պահերին առաջադրել իր ժամանակի Ազգային գաղափարը:

Օրինակ՝ հայության համար 19-րդ դարի վերջին իբրեւ ազգային գաղափար առաջադրվեց Արեւմտահայոց ազատագրությունը, եւ այդ գաղափարի շուրջ ձեւավորված ուժերը հանդիսացան առավել ազդեցիկը հայ հասարակական կյանքում: 1988-ի առաջնային գաղափարը Արցախի վերատիրումն էր, ապա՝ Անկախությունը, եւ այդ գաղափարները շեփորող ուժերը դրսեւորվեցին իբրեւ համեմատաբար կենսունակ քաղաքական դաշտում: Այնուհետեւ հայությունը ունակ չգտնվեց կամ չհասկացավ կարելորությունը՝ առաջադրելու նոր Ազգային գաղափար, թեւ, այդպիսին կարող էին լինել՝ ազատագրված հայրենի տարածքների վերաբնակեցումը, հայրենադարձու-

թյունը... եւ բնականաբար, չունեցավ նոր ժամանակներին համապատասխան հասարակական ընտրանի:

Ո՞րն է այսօրվա Ազգային գաղափարը: Ըստ մեզ, այսօրվա մեր առաջնահերթ գաղափարը Հայոց ազգային գոյությանը սպառնացող՝ հոգեւոր-գաղափարական, քաղաքական, տնտեսական եւ տարաբնույթ ազդեցություններին համահայկականորեն դիմակայելն է՝ *Հայկական Դիմադրությունը*, քանզի պատմականորեն ստացվել է այնպես, որ առանց օտար-այլասերիչ ազդեցությունների դեմն առնելու, դրանց ներխուժմանը դիմակայելու, ասել է թե՛ առանց մեր ազգային ամրոցը կառուցելու, մենք անկարող կլինենք կայանալ իբրեւ հայկական պետություն, իբրեւ սեփական արժեքներով հարատեւող ազգ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր հայության առաջ վերստին դրված է սպառնազին հարցը՝ «ո՞ր ենք գնում»: Իսկ մենք չգիտենք ո՞ր ենք գնում, քանզի չենք ճշտել, թե «ի՞նչ ենք ուզում»: Մեր նախնիներն ասում եւ պատգամում էին, որ մենք ուզում ենք մի երկիր-Հայաստան՝ իր բնական սահմաններով, ուր Հայն ապրի ինքնիշխան եւ իր բարոյականին համապատասխան: Նրանք ավանդում էին նաեւ, որ դրա համար հարկ է մշտապես պայքարել եւ Կյանքի մարտադաշտ հասցնել պայքարի՝ սերունդ:

Այսօր մենք խարխափում ենք անորոշության մեջ: Ո՞րն է արժեքների մեր համակարգը, հանուն որի հաստատման պարտավոր ենք պայքարել: Հայ մարդու ինչպիսի՞ կերպար ենք ակնկալում, որի միջոցով պետք է իրականություն դարձնենք ազգային պետությունը:

Իսկ մեր փոխարեն այդ բացերը յուրովի լրացնում են աշխարհի այսօրվա տերերը: Նրանք «դեմոկրատական» պետության, «քաղաքացիական» հասարակության եւ «ազատ» մարդու իրենց արժեքներն են մեզ պարտադրում*: Արդյունքում, մեր հասարակությունը կուրորեն կապկում է հոգեզուրկ «ամերիկացիզմը», հայ մարդը դառնում է «տնտեսական» էակ, կենսաբանական ռոբոտ, որի նյութական բարեկեցությունը եւ դրա առաջնային միջոց նկատվող փողը հռչակված են իբրեւ գերազույն արժեքներ:

Ու այս ընթացքով, ստացվելու է այնպես, որ շատ շուտով «ընտանիք», «բարոյականություն», «ավանդույթ», «ազգ», «հայրենիք» եւ նմանօրինակ՝ հոգեւոր բովանդակությամբ հասկացությունները որակվելու են իբրեւ «հետադիմական», իսկ աղանդավորներն ու միասեռականները, պացիֆիստներն ու դասալիքները, ծախվածներն ու կեղեքիչները ձեւավորելու են մեր հասարակության «վերնախավը»:

Մեր ազգային դիմադրողականությունը չի գործում: Մենք բնավ չենք դիմադրում թշնամուն եւ մեզ հանձնել ենք նրա ողորմածությանը: Իսկ թշնամին նենգ է ու անողոր:

Սակայն հայությունը օտարի լուծ է կրել, բայց այն հաղթահարել, խավարի դարեր է տեսել ու վերածնվել, եղեռն է տարել, բայց հարատեւելու կամք դրսեւորել...

Աշխարհն ի՛նքը ճգնաժամի մեջ է, եւ ամենագոր Բնությունը պահանջում է արժեքների վերարժեւորում: Բարոյական արժեքների հեղաշրջում, հոգեւոր հեղափոխություն. ահա՛ ժամանակի պահանջը:

Մենք տեսնում ենք հայության կրավորական կեցվածքը, մեծ վտանգի հանդեպ նրա անտարբերությունը, բայց գիտենք, որ օրհասական պահերին, երբ դրվել է էության կամ գոյության խնդիր, նա միշտ էլ ապավինել է իր ազատատենչ Ոգու դիմադրականությանը. եւ ահա՛ վերստին ելքը տեսնում ենք Հայկական Դիմադրության մեջ:

Հայության հավաքական դիմադրության ձեւավորում՝ ընդդեմ օտար հոգեբարոյական, քաղաքական, տնտեսական ներխուժման. դիմադրություն՝ հանուն սեփական արժեքային համակարգի հաստատման. սա՛ է այսօրվա մեր Ազգային գաղափարը:

Հայկական Դիմադրությունը, այսպիսով, կոչված է թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում դիմակայելու մեր ազգային գոյությանը (եւ առաջին հերթին՝ էությանը) սպառնացող օտար ազդեցություններին՝ հաստատելու համար հայկական արժեքային համակարգի վրա հիմնված ինքնիշխան կենսածեւ: Հանուն սեփական ինքնության հաստատման՝ դիմակայել օտարի ներխուժմանը. սա՛ է Հայկական Դիմադրության խնդիրը:

Հայկական Դիմադրության գաղափարն ընկալելի է բոլոր հայրենագգաց հայորդիների համար՝ անկախ դավանանքից ու քաղաքական համոզումից, անկախ սոցիալական դիրքից եւ աշխարհում գտնվելու վայրից, քանզի արտաքին վտանգի առաջ (լինի այն ֆիզիկական ոչնչացում, թե բարոյական այլասերում) բոլորը հավասար են իբրեւ հայեր: Վկա՛ 1915-ը, վկա՛ Սփյուռքը: Այս տեսակետից, Հայկական Դիմադրության գաղափարը իշխանամետ եւ ընդդիմադիր դաշտերից վեր է. այն դրանք ներդաշնակող, ընդհանրացնող է:

* Արեւմտյան քարոզչությամբ մեզանում ձեւավորվում են ստերեոտիպեր, որոնցում կեղծիքն այնքան էլ բացահայտ չէ, եւ որոնց հաղթահարումը մեզ համար առաջնային խնդիր է: Այսպես, օրինակ՝ մերժելով բնական բազմազանությունը եւ պարտադրելով աշխարհին միօրինակություն, սահմանվում է նաեւ կեղծ բազմազանության սկզբունքը. ըստ այդմ, հասարակության մեջ, ասենք, կրոնախետերն ու միասեռականները

նույնքան տեղ ունեն, որքան հոգով ու մարմնով առողջները: Իհարկե, սա էլ բազմազանության դրսևերում է, բայց անբնական եւ աններդաշնակ. ապահայրենացած աղանդավորն ու հայրենակրոն մարտիկը երբեք բնականորեն ներդաշնակելի չեն: Կամ՝ ազգերին մեկ աշխարհայացք պարտադրելով, հռչակվում է կարծիքների ազատություն: Բազմաթիվ թերթեր, կուսակցություններ, ռադիո եւ հեռուստաալիքներ ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը, բայց հենց այդ տեղեկատվական հեղեղով է խլացվում արեւմտյան այսօրվա արժեքային համակարգին ընդդիմացող կարծիքը, որին վերապահված է լուսանցքային դեր:

Առհասարակ, արեւմտյան քարոզչության ժամանակակից տեխնոլոգիաները բավական նուրբ են, եւ, որպես կանոն, մենք դրանց կործանարար ազդեցությունը հասկանում ենք կատարված իրողություններից հետո: Օրինակ, եթե ասենք, որ արտաքին հարձակումն այսօր մեզ վրա բոլոր ուղղություններով է, միգուցե շատերի տարակուսանքը շարժենք, որովհետեւ պատերազմ՝ մեզանում շատերը դեռեւս հասկանում են միայն ռազմական գործողություններ: Այնինչ, մենք ամեն օր տանուլ ենք տալիս պատերազմները ինֆորմացիոն, հոգեւոր, տնտեսական եւ այլ ոլորտներում: Եվ քանի դեռ չենք ընդունել տոտալ պատերազմի փաստը եւ, հետեւաբար, դրան դիմակայելու խնդիր չունենք, անընդհատ կորուստներ ու անհաջողություններ ենք արձանագրելու:

Կամ օրինակ, հարց տվե՞լ ենք մեզ, թե բնակչության ինչ թվաքանակ են պլանավորել Հայաստանի համար գլոբալացման այսօրվա ճարտարապետները, եւ ինչո՞ւ են նրանք բոլոր հնարավոր միջոցներով խրախուսում արտագաղթը (մենք բնավ հակված չենք անտեսելու արտագաղթի ներքին պատճառները, որոնք պակաս էական չեն): Բնակչության, ավելի շուտ՝ բնիկ տարրի այնպիսի թվաքանակ, որի պայմաններում հասարակական եւ ազգային դիմադրության հնարավոր օջախները կանխատեսելի ու վերահսկելի են. այնպիսի՝ թվաքանակ, որից հետո անխուսափելիորեն առաջանալու է աշխատուժի պակաս, ինչը լրացվելու է այլազգի էժան աշխատուժով (սույն երեւոյթը բնորոշող նույնիսկ հատուկ եզր կա՝ *լիքանանիզացիա*): Կարճ ասած, ունենալու ենք ազգերի, կրոնների խառնարան՝ միմի Ամերիկա:

Այս առումով, Արեւմուտքը հաջողում է հայության ներուժը պարպել ներքին պայքարներում՝ մեր արտաքին ճակատը լրիվ բաց պահելով իր ներխուժման համար: Հետեւաբար, մեր բոլոր քայլերն այսուհետ պետք է բխեն հերթական նվաճման շեմին կանգնած ու արտաքին ներխուժմանը համակողմանիորեն դիմակայելու դատապարտված երկրի ու ժողովրդի կարգավիճակից, որքան էլ ծանր լինի այդ կարգավիճակի ինքնախոստովանումը:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ազգային գաղափարախոսության հիմքում չեն կարող դրվել ներմուծված արժեքներ, օտար ուսմունքներ կամ դրանց պատճենումներ, քանզի մի ազգի հարատեւումը իրականանալի է միայն սեփական, այլ ոչ փոխառյալ գաղափարներով: Այս առումով, Հայ ազգային գաղափարախոսությունը աշխարհընկալման համակարգ է, որ բխում է Հայ ազգի էությունից:

Ազգային գաղափարախոսությունը պետք է կարողանա պատասխանել հետեւյալ հարցերին. ո՞վ ենք մենք, ո՞րն է մեր տեղն աշխարհում՝ ազգերի ընտանիքում, կամ՝ ո՞րն է մեր պատմության խորհուրդը եւ ի՞նչ առաքելություն ունենք:

Ազգային գաղափարախոսության աշխարհայացքային հիմքում պետք է դրվեն Ցեղի¹ եւ Հայրենիքի հավիտենարժեք գաղափարները:

Հարկ կա, անշուշտ, մեկնաբանելու այդ գաղափարները:

Ցեղային իմաստաբանությունն ասում է. մենք Արարչի² կամոք արարված ենք իբրեւ ինքնատիպ՝ Հայ տեսակ եւ գոյություն ունենք արարչագործության սկզբից: Ահա՛ այս ինքնատիպության հավիտենացումը եւ դեպի Արարիչ հավիտենական ձգտումը՝ Ազգային գաղափարախոսության մեջ պետք է հաստատագրվի իբրեւ ազգային գերնպատակ-առաքելություն:

Այսպիսով, Ազգային գաղափարախոսությունը պիտի հաստատի մեր արարչագործ ծագումը (մեր ծագման կամ կազմավորման սկիզբը չկապելով որեւէ պատմական իրադարձության հետ), եւ իբրեւ տեսակ՝ մեր նախաստեղծ (այլ ոչ տարբեր ցեղերի խառնումից առաջացած) լինելու հանգամանքը³:

Հայ ցեղին ի վերուստ հատկացված բնատարածքը, հողագնդի այն կտորը, որին են միայն հարազատ եւ բնիկ մեր Մարմինն ու Ոգին, *Հայկական բարձրավանդակ*⁴ է, որից դուրս՝ ոգու եւ բնատարածքի անհամատեղելիության պայմաններում, հայը ենթակա է այլասերման, ուժացումի:

Բնատարածքի հետ կապված, Ազգային գաղափարախոսության մեջ պետք է տրվի ամբողջական, բնական Հայաստանի սահմանումը եւ, ըստ այդմ, հիմնավորվեն հայրենատիրական՝ Հայրենիքի կորսված տարածքների վերատիրման մեր ձգտումները:

1. Մեզ համար «Հայ ցեղ» եւ «Հայ ազգ» հասկացությունները նույնանուն են, քանզի Հայ ազգն իր մեջ ամփոփում, ներառում է ոչ թե մի շարք ցեղերի, ինչպես դա ազգերի մեծ մասի մոտ է, այլ նույն ինքը Հայ ցեղն է՝ պատմական բնաշրջում ապրած:

2. Աստծո (Արարչի) գաղափարի տակ մենք հասկանում ենք տիեզերաստեղծ մի Ուժ, բարձրագույն մի էություն՝ Հավիտենական, Բացարձակ եւ Կատարյալ:

3. Դրանից ամենեւին էլ չի հետեւում, թե աշխարհում միայն հայերս ենք նախնական տեսակ: Կարծում ենք նաեւ, որ պետք չէ այստեղ չափից ավելի տուրք տալ գիտականությանը, քանզի նման հարցերում գիտության խոսքը միշտ էլ սրբագրելի է: Եթե ճապոնացիները կամ հրեաները սպասեին, թե երբ է գիտությունը հիմնավորելու իրենց, այսպես ասած, աստվածային ծագումը, ապա դժվար թե նրանք մինչ այժմ գաղափարախոսություն ունենային: Թեեւ՝ գիտությունն արդեն մասամբ ընդունում է, որ Հայկական լեռնաշխարհը նախահայրենիք է, իսկ այնտեղի բնիկները նախաստեղծ ցեղ՝ հնդեվրոպացիների (արիացիների) համար:

Ի դեպ, արիացիների եւ արիականության մասին:

Մենք կարծում ենք, որ ոչ թե սկզբում եղել է ինչ-որ արիական (հնդեվրոպական) հանրություն, որի մեջ մտել է նաեւ հայկականը, այլ՝ *արիականությունը հայկական քաղաքակրթության դրսեւորումն է այնպես, ինչպես հելենիզմը՝ հունականի:* Արիականությունը, այսպիսով, հայկական աշխարհայացքից բխող՝ համամարդկային բարոյական արժեքների ու տիեզերաճանաչման համակարգն է, որը շնորհիվ Հայկական Բարձրավանդակից քաղաքակրթական-մշակութային արժեքների տարածման, ընդգրկել է եվրասիական զգալի տարածքներ:

4. Իսկ ո՞վ է որոշում ո՞րն է Հայկական բարձրավանդակը, որո՞նք են նրա բնական սահմանները: Կան անհատականություններ, որոնք ունեն հոգեւոր ունակություններ եւ կարող են, այսպես ասած, վերելից նայել երկրին եւ մեր հայրենիքը նշմարել որպես մի լեռնային կղզի՝ խիստ որոշակի բնաշխարհագրությամբ, յուրահատուկ կենսադաշտով, այնտեղ ապրող մարդկանց եւ բնության ներդաշնակ, էներգետիկ կապով: Այդ մարդիկ եզակի են (օր.՝ Գարեգին Նժդեհը, Հայկ Ասատրյանը): Մենք պարզապես հավատում ենք նրանց այդ մարգարեացմանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԸ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է (կամ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՀԱՅԵՐԻՆ)

«Հայկական բարձրավանդակն է Հայոց պատմության գլխավոր թատերավայրը եւ դա է պատկերվում ու զգացվում իբրեւ մեր ամբողջական հայրենիք՝ անկախ ազգագրական պայմաններից եւ ժամանակների քաղաքական սահմանազծումներից»:

Հայկ Ասատրյան

Մարդու եւ աշխարհագրական միջավայրի փոխադարձ կապը վաղուց հաստատված է գիտությամբ: Այս իմաստով, ինչպես ուսուցանում է Ցեղային աշխարհայեցողությունը, Ազգը եւ Հայրենիքը՝ Բացարձակի ու Հավերժի հարթության մեջ կազմում են մեկ, անքակտելի ամբողջություն. Հայաստանը մնայուն հայրենիք է միայն հայերի համար, իսկ հայը հարատւելի է միայն Հայաստանում: Ըստ այդմ, երբ մասնատված է հայոց հայրենիքը, խաթարված է նաեւ հայի էությունը, եւ քանի դեռ չունենք ամբողջական Հայաստան, հոգեբանորեն, հետեւապես եւ դիմագծորեն մնում ենք աղճատված:

Իսկ ո՞րն է այդ բնական Հայաստանը՝ հայոց հավիտեանական հայրենիքը, որին, ինչպես ծնողին, չեն ընտրում:

Ցեղային աշխարհայեցողության մեջ առկա է տարբերակումը պատմական ու բնական Հայաստանի: Առաջինը պատմա-ազգագրական հասկացություն է, որով՝ հարափոփոխ, ենթակա սեղմումի կամ ընդլայնումի: Կա, սակայն, բնական Հայաստանը՝ որպես բնաշխարհագրական ըմբռնում, խիստ որոշակի բնական սահմաններով, որով եւ անփոփոխ: Դա բնաշխարհագրական այն անբաժանելի ամբողջությունն է, շրջապատի նկատմամբ բարձրադիր «լեռնային կղզին», որն աշխարհագրական գիտության կողմից կոչվում է Հայկական բարձրավանդակ: Հայկական բարձրավանդակը Աստուծոց կամ Բնությունից հայերիս տրված այն հողակտորն է, որին են միայն հարազատ եւ բնորոշ մեր հոգե-մարմնական գծերը: Սա այն բնատարածքն է, հայերիս միակ եւ կայուն «անվտանգության գոտին», որից դուրս այլ «հայրենիքներ» փնտրելը ազգային

ինքնասպանություն է, որից դուրս՝ ոգու եւ բնատարածքի անհամատեղելիության պայմաններում, հայը ենթակա է վատասերումի, ձուլումի:

Պատկերացրեք, որ հայերը, թեկուզ հոծ զանգվածներով եւ մեկուսացված, ապրում են, օրինակ, Մադագասկարում, ուր չեն տեսնում եւ չեն տեսնում Արարատն ու Սեւանը, Արագածն ու Արաքսը, ապրում են տեղի բնական պայմաններից թելադրված կենցաղով, բարձրաբերձ լեռների փոխարեն՝ անծայրածիր օվկիանոսն է դառնում նրանց մտքի եւ հոգու երեւակայության սնուցիչը, փոխվում է նրանց դիմագիծը եւ այլն. անվիճելի է, որ նրանք աստիճանաբար կհեռանան իրենց էությունից ու կենթարկվեն տեսակափոխումի:

Քաղաքական սահմանագծումներով, Հայկական բարձրավանդակի մեծ մասն այսօր մերը չէ. ազգագրական պայմանները եւս ի նպաստ մեզ չեն՝ Արեւմտահայաստանը գերազանցապես բնակեցված է թուրքերով եւ քրդերով: Բայց արդյո՞ք այդ կորսվածը դադարում է Հայոց հայրենիք լինելուց: Դիմենք Նժդեհի խորհրդին. *«Իմ երկիրը ժամանակավորապես մնալով օտար լծի տակ, չի՛ կարող դառնալ այդ օտարի Հայրենիքը, քանզի Արեւելքի անուղղա խուժը, որ թրքություն կկոչվի, ոչինչ ունի տված այդ երկրին - ո՛չ մեծ մեռելներ, ո՛չ միտք, ո՛չ զգացում... այն ամենը, որ աննյութեղեն Հայրենիքը կստեղծե»*: Ահա՛ թե ինչու է Ցեղակրոնությունը նշանաբանում՝ *«Հայաստանը՝ հայերին»*, որ ասել է՝ Հայկական բարձրավանդակը միայն Հայ ցեղի հայրենիքն է: Այլ կերպ ասած՝ Հայկական բարձրավանդակի նկատմամբ հայրենատիրոջ (կուզեք՝ սեփականատիրոջ) մենաշնորհի իրավունքը հայերինն է:

Վերն ասվածից հետեւում է նաեւ, որ Հայկական բարձրավանդակի ամբողջական սահմաններում (իմա՝ ողջ բարձրավանդակին տիրելով) միայն մենք կարող ենք իբրեւ ազգություն եւ պետություն ներդաշնակորեն զարգանալ ու հարատեւել: Հայկական բարձրավանդակի՝ Առաջավոր Ասիայի այս ռազմավարական բանալու ամբողջական ձեռքբերումով է միայն Հայաստան պետությունը հնարավորություն ստանում ունենալու աշխարհառաջավարական նշանակություն. այն վերստին դառնում է տարանցիկ ուղիների խաչմերուկ, հսկում առաջավորասիական չորս խոշոր գետերի ակունքները (հանգամանք, որը զգալի դեր է խաղում՝ այսօր Թուրքիան դարձնելու տարածաշրջանում գերիշխող),

ինչպես եւ, որ պակաս կարելոր չէ, տեր դառնում շատ ժողովուրդների բաղձանք հանդիսացող մեր փարթամ արոտավայրերին (մի գրեթէ անտեսված իրողություն, որը էական է հանդիսացել քոչվոր մի շարք ցեղերի՝ մեր բարձրավանդակույն վերջնական հանգրվան գտնելու գործում): *«Չայկական լեռնաշխարհը ներկայացնում է աշխարհագրական, մշակութապատմական, ինչպես նաեւ տնտեսական եւ ընդհանուր էթնիկական մի ամբողջություն: Այստեղ հիմնված պետությունը չի կարող համարվել կայուն, եթէ ամբողջապես չի զբաղեցնում այդ լեռնային տանիքը՝ իր բնական թեքություններով»*, - ասում է Ադոնցը:

Այսօր խաթարված է նաեւ մեր էության ամբողջականությունը. հայությունը սեղմված է իր Չայրենիքի ընդամենը 1/10-ում, իսկ դա նշանակում է, որ մնացած մեծ մասի բնական ներուժը նա չի ստանում: Չի կարելի հիշողության կամ մտապատկերի մեջ տեղավորել պապերից լսած, գրքերում կարդացած եւ լուսանկարներում տեսած Նենրուֆի վեհությունը կամ Վանա լճի գեղեցկությունը եւ համարել, թե սեփական հոգեկան կերտվածքն անհրաժեշտ սնունդ ստացավ բնական միջավայրից: Պետք է այդ միջավայրում ապրել: Կորցնելով այս կամ այն բարբառը, տարագր, մոռացության տալով «տեղական» սովորույթ կամ ավանդույթ՝ հայությունը կորցնում է իր էության ամբողջականությունը: Ահա՛ թե ինչու հայության առաջնային խնդիրն է՝ **հայրենատիրություն**:

Սա մեզ համար տնտեսական խնդիր չէ, այլ՝ գոյաբանական, ուր փնտրում ենք ո՛չ թե տնտեսական շահավետություն, այլ՝ էություն: *«Չայրենիք տենչալով, մենք ավելի կուզենք Մասիսի ճակատը տեսնել, քան Արարատյան դաշտի մեջ բամբակ մշակել: Մեր նախահայրերու սրբաստանները եւ գերեզմանները ձգողական ավելի մեծ խորհուրդ ունին, քան Մշո, Կարնո կամ Վանա շուկաները»*, - այսպես էին ասում 30-ականների ցեղային-հայրենատիրական շարժման մեր մեծերը. այդպես պետք է հասկանանք եւ մենք:

Այսպիսով, հայրենատիրությունը հայության մոտակա առաքելությունն է, որը պատմության բերումով, պետք է իրականացվի նախ թուրքի հետ անխուսափելի բախումով: Այո՛, բախումով, քանզի մնացած ճանապարհները պատմությամբ արդարացված չեն: Եվ «խաղաղ գոյակցության» անարժեք քարոզները միայն մեզ կարող են խաբել, բայց ո՛չ թուրքին:

- Թող լինի խաղաղ գոյակցություն,- ասում ենք մենք,- միայն ո՛չ մեր Հայրենի հողում:

Ի՞նչ է նվաճել Հայոց բանակը Արցախյան ազատամարտի տարիներին: Նա ազատագրել է այն, ինչն ի վերուստ տրված է մեզ: Մնացած բացատրությունները, պատմության հավիտենության մեջ, արժեք չունեն:

- Ենթադրենք ազատագրել ենք Արեւմտահայաստանը եւ Հայկական բանակը հուսալիորեն պաշտպանում է այն, միեւնույն է՝ այդ տարածքները վերաբնակեցնել չենք կարող, քանզի ոչ ոք չի գնա այնտեղ ապրելու,- այսպես դատողներ մեզանում քիչ չեն: Մենք նայում ենք պատմությանը եւ փաստում, որ այն հազեցած է ժողովուրդների զանգվածային վերաբնակեցումներով: Ինչո՞ւ Շապուհն ու Շահ Աբասը, թուրքերն ու բուլշեւիկները, կանգ չառնելով միջոցների առաջ, կարողացան հայերիս տեղահանել եւ հաստատել օտար ափերում, իսկ մենք ընդունակ պիտի չլինենք սեփական ժողովրդին վերաբնակեցնել Հայրենի հողում: Հրեաները՝ մեծագույն կամքի ուժով, վերատիրեցին ու վերաբնակեցրին թշնամիներով շրջապատված եւ շուրջ երկու հազարամյակ կորսված իրենց հայրենիքը*:

Ուրեմն, էականը նպատակադրումն է եւ այն իրացնելու անընկճելի կամքը:

Մենք հավատում ենք մեր Ցեղի կամքի ամենազորությանը, եւ մնում է, որ հաղորդակից լինենք նրան:

* Հայրենատիրության խնդրի հետ կապված՝ հաճախ են տարվում զուգահեռներ մեր եւ հրեաների միջեւ, ինչը, կարծում ենք, հիմնազուրկ չէ: Հակաճառողներն ասում են՝ մի՞թե կարելի է մեզ համեմատել հրեաների հետ. նրանք գաղափարախոսություն ունեն, կապիտալ, իսկ մե՞նք... Երեւի թե հասկանալի է, որ այդ ամենը միանգամից կամ ինքնին չի ստեղծվել: Սկզբում շարադրել են Մովսեսի հնգամատյանը (Թորա), տարագրվելուց հետո՝ պայմանները ստիպել են գրել Թալմուդը: Երկար դեգերումներից հետո, մի շարք մտածված քայլերով՝ նախ հիմնել են ընդամենը 14.000 քառ. կմ տարածքով պետություն, ապա՝ իրենց հարեւանների հաշվին ընդլայնել այն... Մենք ստեղծած ունենք Ցեղակրոնություն, Տարոնականություն, որոնց հիմքի վրա, նույնիսկ մեկ սերնդի նպատակամղված ջանքերով, կարելի է ամբողջացնել Հայոց ազգային գաղափարախոսությունը: Բայց, ի տարբերություն հրեաների, դրանք մեզ համար կյանքի ուղենիշ չեն, եւ մեզանում, որպես կանոն,

յուրաքանչյուր նոր սերունդ փորձում է ամեն ինչ սկսել նորից: Անշուշտ, նաև համեմատելի չեն մեր եւ հրեաների կապիտալները, հատկապես, որ հայ մեծահարուստները, հիմնականում, նախընտրում են իրենց ունեցվածքը թողնել օտարներին, քան ծառայեցնել Հայրենիքին (դարձյալ՝ ի տարբերություն հրեաների): Բայց չհուսահատվենք. Իսրայելը ստեղծվեց գրեթե ոչնչից, իսկ մենք ունենք Հայաստան պետություն եւ, որ պակաս կարելուր չէ, միատարր բնակչություն:

* * *

Այսպիսով, Հայրենի կորսված տարածքների վերատիրումն ու վերաբնակեցումը Ազգային գաղափարախոսության մեջ պիտի հաստատագրվեն իբրեւ անհրաժեշտություն՝ Հայ էության ամբողջականացման եւ Ցեղի հարատեւման համար: Իսկ *անկախ եւ բնորեն ամբողջական հայկական պետությունը** Ազգային գաղափարախոսության մեջ պետք է ամրագրվի իբրեւ քաղաքական նպատակ:

Հայրենատիրության գաղափարը երբեմն օգտագործվում է *Հայկական հարց* (կամ Հայ դատ) անունով: Իբրեւ միջազգային դիվանագիտության հարց, ընդունված է ասել, որ այն սկզբնավորվել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո՝ որպես Թուրքիայի տիրապետության տակ գտնվող արեւմտահայերին վերաբերող հարց, թեւ մի շարք հեղինակներ Հայկական հարցի առաջացումը կապում են մեր ազգի ծագման կամ էլ պատմական այլ իրադարձությունների հետ: Ըստ իս, այն պահից, երբ մենք կորցրինք մեր բնատարածքի մի մասը եւ Հայկական բարձրավանդակի ամբողջության վրա դադարեց գոյություն ունենալ Հայոց պետությունը (չեշտում ենք՝ ամբողջության վրա), այդ պահից էլ գոյություն ունի Հայկական հարց, որը՝ *ամբողջական Հայրենիքի վրա Հայկական պետության վերստեղծման հարցն է:*

* Ի դեպ, Ազգային գաղափարախոսության տեսակետից՝ նպատակ չէ միապետություն կամ հանրապետություն, սոցիալիստական կամ կապիտալիստական կարգեր, դեմոկրատիա կամ դիկտատուրա ունենալը, էականը՝ բովանդակությամբ ազգային (տվյալ ազգի կենսածեւոլ առաջնորդվող, նրա խնդիրներն իրականացնող) վարչաձեւ, վարչակարգ ունենալն է:

Ասվածի հետ սերտորեն առնչվում է **սփյուռքահայության խնդիրը**:

Ո՞րն է սփյուռքի հայրենն գոյատևելու իմաստը, մի՞թե ինքնանպատակ է հայապահպանումը Հայրենիքից դուրս, եւ կամ՝ ի՞նչ է սփյուռքի կորուստը հայության համար: Սրանք հարցադրումներ են, որոնք պատասխանների կարիք ունեն հատկապես մեր օրերում, երբ սփյուռքի ծուլման աննախադեպ տեմպերը աչքի առաջ են, իսկ շատ սփյուռքահայեր իրենց հարց են տալիս, թե ինչու պիտի օտար միջավայրում դպրոց, եկեղեցի պահեն, այլազգիների հետ չխառնվեն, երբ այդ ամենը այլոց շրջապատում դժվարացնում է իրենց կյանքը, անձնական բարեկեցության խնդիրը:

Մենք ասում ենք. գաղթաշխարհի հայապահպանումն ունի միայն մեկ նպատակ՝ *Հայաստան վերադառնալ որպես հայեր*, այսինքն՝ հայ մնալ մինչեւ հայրենադարձություն:

Սփյուռքը հավիտենորեն հայ մնալու միայն մեկ ճանապարհ ունի՝ վերադարձ իր նախահայրերի սրբազան հողը. հակառակ դեպքում՝ նա դատապարտված է՝ աստիճանական ուժացումի ճանապարհով, պատմության ասպարեզից հեռանալու: Ահա՛ թե ինչու *«Դարձ դեպի Հայրենիք»*, *«Հայահավաք Ցեղի բնօրրանում»* կարգախոսները պիտի ամրագրվեն իբրեւ սփյուռքահայության գոյության նպատակներ:

Անշուշտ, սփյուռքի կորուստը մեզ համար նաեւ քանակական կորուստ է, բայց առավելապես՝ որակական, ասել է թե՛ էության կորուստ: Սփյուռքահայության կորուստը նույնքան սպառնում է մեր էությանը, որքան օտարի կողմից նվաճված Արեւմտահայաստանի կորուստը: Եվ հայրենաբնակ հայության կապը սփյուռքահայության հետ մեզ համար առաջին հերթին էակցական կապ է:

Կորսված հայրենիք տենչալով՝ մենք ոչ թե բաղձում ենք տնտեսական կամ այլ կարգի շահավետություն, այլ՝ նախ եւ առաջ աղճատված էության ամբողջացում. սփյուռքահայություն կորց-

Ունենալ՝ մենք վերստին կորցնում ենք էություն, այն առավել աղճատում:

Եվ այն սփյուռքահայերը, որոնց համար հայ մնալը, հայեցի ապրելը, իրենց սերունդների հայկականորեն դրսևորվելը կյանքի իմաստ են, իհարկե, պետք է ձգտեն եւ կձգտեն Չայրենիք վերադառնալ: Եթե այդ զգացումները չկան, գիտակցական այդ դաշտը ձեւավորված չէ, պարզ է, որ մարդն իր բնօրրան չի վերադառնա: Այդօրինակ մարդկանց հետ հարաբերությունները պետք է կառուցել այլ հարթության մեջ՝ ելնելով հայկական գլոբալ համակարգի (համահայկական ցանցի) կայացման անհրաժեշտությունից:

* * *

Ազգային գաղափարախոսությունը, ըստ հնարավորի, պետք է սահմանի Ազգի բարոյական չափանիշները եւ կարողանա տալ դասական հայի վարքականոնը: Նա պետք է պարզաբանի տղամարդ-կին, զավակ-ծնող, նոր սերունդ-հին սերունդ եւ նմանօրինակ հարաբերությունների խնդիրը՝ սահմանելով յուրաքանչյուրի տեղն ու դերը հայ հասարակության մեջ:

Ազգային գաղափարախոսությունը պետք է ներկայացնի ընտանիքը որպես տեսակի շարունակելիության ու սերնդի դաստիարակության անհրաժեշտ օղակ, մատնանշի խառնազգի (հատկապես խառնացեղ) ամուսնությունների վտանգը:

ՑԵՂԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՅԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ*

«Ես ցեղահավատ եմ, եւ ահա՛ պաշտում եմ եւ մի այլ աստվածություն՝ ցեղիս արյունը, որի անարատության մեջ է իմ ցեղի ապագան»:

«Ցեղակրոնության Հավատամք»-ից

Ինչպես ուսուցանում է ցեղային աշխարհայեցողությունը, մարդկության տեսակավորումը (բնության բազմազանությունն ընդհանրապես) Աստծո կամոք է եւ գոյություն ունի ի սկզբանե: Յետեւաբար, մարդկային ամեն ցեղ, ձգտելով պահպանել իր անկրկնելի տեսակը, աստվածահաճո գործ է անում: Ինքնահավիտենացման ձգտումով է ցեղն ապահովում Աստծո հետ կենդանի կապը, իսկ յուրաքանչյուր անհատ միայն ցեղի միջոցով է հնարավորություն ստանում մերձենալ Բացարձակին ու Հավերժին: Սակայն բնության օրենքը ստիպում է տեսակներին**

մշտական պայքարի մեջ լինել գոյության համար: Այդ պայքարում բնությունն ընտրում է ուժեղ եւ կարող ազգերին, իսկ թուլերն ու անկենսունակները հեռանում են պատմության ասպարեզից: Նրանց անհետացումը կատարվում է կամ բնաջնջման, կամ էլ ձուլման ճանապարհով:

Պատմության մեջ շատ չեն դեպքերը, երբ ազգերը վերացել են զանգվածային ոչնչացման միջոցով, մինչդեռ բազմաթիվ են ձուլման հետեւանքով նրանց անհետացումները:

Այս պարագայում բռնի մեթոդները՝ լեզվի արգելում, դավանանքի պարտադրում, ազգությունից ստիպողական իրաժարում եւ այլն, այնքան էլ արդյունավետ չեն, քանզի, հաճախ ուժի ազդեցությունն առաջ է բերում բնական հակազդեցություն: Ազգերի ձուլումն առավելապես իրականացվում է մշակութային կլանման կամ արյունախառնության միջոցով:

* * *

Սելեկցիայից հայտնի է, որ լավ տեսակ ստանալու համար, հաճախ դիմում են խաչասերման: Բայց արդյո՞ք մարդկային տեսակների մետիսացումը դրական երեւույթ է, արդյո՞ք խառնազգի սերունդն ավելի լավն է:

«Ով պատկանում է մաքուր, անխառն ցեղի, ամեն քայլափոխի զգում է դրա հմայիչ ուժը. ցեղային աստվածը երբեք չի լքում նրան». ասում էր անգլիացի հայտնի ցեղաբան Յուստոն Չեմբերլենը (1855-1927): Անցյալ դարի ֆրանսիացի նշանավոր հանրաբան-ազգագրագետ Ժոզեֆ Գոբինոն (1816-1882) անհետացող բազմաթիվ ցեղերի վրա կատարած ուսումնասիրությունների արդյունքում հանգեց այն եզրակացության, թե անհետացման պատճառն արյունախառնությունն է: Ինչպես պնդում են մի շարք գիտնականներ, հին հույների ու հռոմեացիների բարձր քաղաքակրթության անհետացման բուն պատճառներից մեկը նրանց՝ իբրեւ ազնիվ ու ազատ ազգեր, ստորին գերի ազգերի հետ խառնվելն էր: *«Յին մշակույթների մահացման միակ պատճառը եղել է արյան խառնումը եւ այստեղից բխող՝ ցեղի մակարդակի անկումը».* գտնում էր մեր

դարի միապետներից մեկը: Եթե Չեմբերլենին կամ Գոբինոյին այսօրվա լիբերալներն ու երեկվա կոմունիստները միանշանակորեն պիտակում են իբրև ռասիստներ (անշուշտ՝ վատ իմաստով), իսկ նրանց դատողությունները՝ «հակամարդկային», ապա, գոնե համընդհանուր ընդունելության արժանացած Կանտի խոսքերը մտորելու տեղիք պիտի տան. *«Չկա ավելի ճշմարիտ բան, քան այն, թե տարբեր ցեղերի խաչասերումը, որ վերջին հաշվով հանգեցնում է նրանց ոչնչացման, միանգամայն անթույլատրելի է մարդկային ցեղերի նկատմամբ»:*

Արյունախառնության կողմնակիցները գտնում են, որ իբր խաչասերումից առաջացած սերունդն ավելի ուժեղ եւ խելոք է լինում: Դժվար թե: Ճապոնացիները երբեք չեն խաչասերվել, սակայն բացառիկ տաղանդ ունեն: Նույնը կարելի է ասել սկանդինավյան ազգերի մասին:

Կան նաեւ պնդողներ, թե հայերը՝ որպես հնագույն ազգերից մեկը, ապրում են իրենց ծերության շրջանը եւ, որպեսզի չանհետանան, պետք է, օտար արյան ներմուծմամբ, «թարմացնեն» իրենցը, որով եւ կերիտասարդանան, կդառնան կենսունակ: Եվ օրինակ են բերում թուրքերին՝ փորձելով հիմնավորել, թե ինչպես է օտար գեների ներմուծումը նպաստավոր լինում տվյալ ազգի համար:

Նախ, ազգի կենսունակությունը նրա տարիքով չի պայմանավորվում, այլ՝ իր արմատներից սնվելու հանգամանքով: Հայրենիք կորցրած եւ ակունքներից հեռացած ազգերը կարող են ծերանալ եւ մահանալ, իսկ հայրենի հողից ու իրենց արարչական ակունքներից սնուցվող ազգերը միշտ էլ կենսունակ են: Այժմ, թուրքերից ընդօրինակելու մասին: Այսօրվա Անատոլիայի թուրքերը, շնորհիվ նաեւ արյունախառնության, մեծամասամբ, մարդաբանական հատկանիշներով այլեւս միջինասիական տափաստանների բնիկները չեն, իսկ բազմակի խաչավորման արդյունքում դեռեւս նոր մշակութային կամ գիտական արժեքներ չեն ստեղծել: Ի դեմս նրանց՝ մենք առավելաբար տեսնում ենք ոչ թե ազնվացած թուրքին, այլ՝ այլասերված հային, հույնին... Տեղին է վկայակոչել Հայկ Ասատրյանին. *«Հայտնի է, որ կենսաբանական թե հոգեբանական պատճառներով ցեղերի արեւնախառնումով չի*

ազնվանում նրանցից նվազարժեքը, այլ՝ խաթարվում, վատասերվում է արժեքավորը: Այսպես՝ քրիստոնյա ժողովուրդներից ստացած արյունը ո՛չ թե բարեխառնություն մտցրեց թուրքերի բնազդների աշխարհում, այլ հոգեբանությամբ թուրքացրեց ծուլվածներին»:

Հավատ ընծայելով, թե մեր ցեղը բնականից օժտված է բարձրորակ հատկանիշներով, աներկբա ասում ենք, որ օտարներից հոգեւոր կամ մարմնական գծեր ներմուծելու կարիք բնավ չունենք, իսկ Տեսակը խաթարելու բարոյական իրավունք չունենք: Թուրքերը՝ իբրեւ ստորին ցեղ, ներմուծման խնդիր միգուցե ունեն, իսկ մենք պետք է վերագտնենք մեր հոգեգծերը, վերականգնենք մեր դիմագծի անաղարտությունը: Թերեւս, այս է հաստատում նաեւ սփյուռքահայ գիտնական Հակոբ Պողոսյանը, որից հարկ ենք համարում ընդարձակ մեջբերում անել.

«Հայերուն պարծանքը եղած է այն, թե դարավոր հալածանքներու եւ տառապանքներու ընթացքին՝ մինչ ուրիշ շատ մը ցեղեր իրենց գոյությունը կորսնցուցած են, իրենք դեռ կապրին. ամոռնք այս իրողությունը ամեն բանե առաջ կպարտին իրենց ազնիվ արյան: Թուրքն ալ այս իրողության վերահաս ըլլալով էր, որ իր անարգ ու վատ արյունը ազնվացնելու համար, հայ ցեղին հետ ամուսնանալու եւ խառնվելու ամեն միջոց որոնեց, եւ այսօրվան գեղեցիկ Թուրքին երակներուն մեջ Հայու ազնիվ արյունը կհոսի: Ավա՛ղ, որ այս իրողությունը տակավին շատերու կողմն լավ ըմբռնված չէ:

Անհրաժեշտ է, որ ապագա ազգին վերաշինության ու ազնվացման աշխատող թե՛ ազգային իշխանություններ եւ թե՛ հասարակական պատասխանատու առաջնորդներ այս խնդրին վրա լուրջ ուշադրություն դարձնեն»:

Ոմանք էլ, մեզանում առկա մի շարք ժառանգական հիվանդություններ, հատկապես, «երեւանյան» կոչվող հիվանդությունը, համարում են հայերիս՝ երկար ժամանակ մեկուսացված լինելու, ուրիշների հետ չխառնվելու արդյունք: Չմոռանանք, որ սա ընդամենը վարկած է՝ դեռեւս կարոտ գիտական հիմնավորումների: Բայց ուշադրության արժանի է նաեւ հետեւյալը. «երեւանյան» հիվանդությամբ տառապողները, հիմնականում, մեր

հարթավայրային շրջանի բնակիչներն են, ուր խառնազգի ամուսնությունները համեմատաբար շատ են, իսկ լեռնային շրջաններում, որտեղ, իբրեւ կանոն, «դրսից աղջիկ» հազվադեպ են բերում, նման հիվանդներ գրեթե չկան:

Այժմ անդրադառնանք խառնազգի ընտանիքին, որն արյունախառնության հիմնական ձեւն է:

Ընտանիքը, լինելով ազգի կարեւորագույն օրգաններից մեկը, նախասահմանված է՝ սերնդագործմամբ ազգի ժառանգական հաջորդականությունն ապահովելու եւ իր ներսում նորահաս սերնդի ազգային սկզբնական դաստիարակությունն իրականացնելու: Ըստ այդմ՝ ընտանիքի ապագայնացումը, որն իրականացվում է արյունախառնության եւ օտար բարքերի ընդօրինակման ձեւով, կործանարար է ազգի գոյության համար:

Որքան էլ խառնազգի ընտանիքում ամուսինները լինեն լայնախոհ կամ, այսպես ասած, փոխադարձ սիրով, միեւնույն է՝ նրանց էությունների բնական տարբերությունն, ի վերջո, իրեն զգալ է տալիս: Լավագույն դեպքում, ամուսիններից մեկը «մոռացության» է տալիս իր ազգությունը՝ լիովին կանգնելով մյուսի ազգության կողմը (հաճախ՝ ընտանիքը չքայքայելու մտածումով) եւ այդպիսով՝ արհեստականորեն ազգափոխ լինում: Իսկ սերո՞ւնդը: Նա երկվության մեջ է լինում, նրանում մշտապես երկու տարբեր հոգեբանությունների պայքար է ընթանում եւ արդյունքում՝ հոգեբանորեն նա մնում է երկփեղկված, ասել է՝ անլիարժեք: Ինչպես նկատում է Լ. Շանթը. *«Այս տեսակ հարկի մը տակ մեծացող սերունդը երկակենցաղ էակ մըն է, ջուրի ու ցամաքի վրա միաժամանակ ապրող, բայց ո՛չ ջուրին մեջ կարգին լողալ գիտե, ո՛չ ցամաքի վրա մարդավարի քայլել. եւ հաճախ կվերջանա անով, որ ջուրն ալ կատե, ցամաքն ալ, թեեւ իր հոգիին խորքը լուռ տենչանք մը կմնա միշտ վառ՝ կա՛ն ջուրինը ըլլալու, կա՛ն ցամաքինը»:*

Հայոց պատմության մեջ դժվար է մատնանշել դեպք, երբ օտարից ծնված զավակը օգտակար է եղել մեր ազգին: Նրանք, եթե ունեցել են շնորհներ, որպես կանոն, հայության համար որեւէ ծառայություն չեն մատուցել: Իսկ հակառակը եղել է. Տիգրան Մեծի՝ պոնտացի կնոջից ծնված զավակները չարիք էին հայկական

կայսրության համար, հայերին բնաջնջող սուլթան Չամիդի մայրը հայուհի էր: Այս առումով, ուսուցանող է նաև մեր էպոսը. Իսմիլ Խաթունից եւ Մեծ Սիերից ծնված Մելիքը պատուհաս է դառնում հայության գլխին, Դավիթը սպանվում է իրենից սերված խառնածին աղջկա կողմից:

Մխալ կլինի կարծել, թե մեզանում խառնամուսնությունների խնդիրը երբեւէ ուշադրության չի արժանացել: Հայ եկեղեցին, արգելելով «լուսավորչական» հայերի ամուսնությունն այլադավանների հետ, այդպիսով, փաստորեն, անուղղակիորեն մերժել է խառնազգի ամուսնությունները: Ազգային բարերար Ալ. Մանթաշյանցը, իր հարստությունը որդիներին կտակելիս, ընդգծում էր մի կարելոր նախապայման. որդիները կգրկվեն ժառանգության իրավունքից, եթե չամուսնանան հայադավան օրիորդների հետ: Ռ. Պատկանյանն իր հայտնի «Վարդապետարան»-ում, հայկական մոլորությունների շարքում նշելով նաև օտարի հետ ամուսնությունը, հորդորում էր՝ իբրև ազգասիրական գործ, չամուսնանալ այլազգիների հետ:

Հաճախ է պատահում, երբ լավագույն հայորդիներ, ինչ-ինչ պատճառներով, ամուսնանում են օտարների հետ՝ ազգի համար չթողնելով արժանավոր սերունդ: Պատկառանք տածելով Քր. Միքայելյանի հանդեպ՝ անվանի հրապարակախոս Միք. Վարանդյանը, միաժամանակ, ցավով նշում է, որ արեւմտահայ ազատամարտի ռահվիրան ամուսնացած էր օտարի հետ, տղան էլ, մոր ազդեցությամբ, ընդմիջտ հեռացավ հայ կյանքից ու ամուսնացավ ռուսի հետ: Եվ Վարանդյանը եզրակացնում է. «այդպես են վերջանում գրեթե բոլոր ամուսնությունները օտարի հետ»: Իհարկե, օրինակների թվարկումը կարելի է շարունակել՝ Ռուբեն Սեւակ, Արամ Խաչատրյան, Տիգրան Պետրոսյան, Վիկտ. Համբարձումյան... Բայց զանք ներկային:

Երբ տարիներ առաջ մեր հայտնի ժառանգաբաններից մեկին հարցրինք, թե արդյոք ինքը համաձայն կլիներ, որ հայը, օրինակ, նեգրի հետ ամուսնանար, նա պատասխանեց.

- Եթե ընտրեց, ամուսնացավ, այո, համաձայն եմ: Կարելորդ՝ որ նա հայկական միջավայրում ապրի եւ հայանա: Ի՞նչ

վատ կլինի, եթե նեգրի երաժշտականությունը, ռիթմի զգացողությունը ներմուծվեն:

Թե ինչպես պիտի նեգրը հայանա, նույնիսկ երեւակայությունը թույլ չի տալիս պատկերացնել: Իսկ որ հայերս երաժշտականության բնածին պակաս ունենք եւ ստիպված պիտի ուրիշից ներմուծենք, շատ անլուրջ է:

Ներկայումս խառնազգի ամուսնությունները մեզանում (լինի Չայրենիքում, թե Սփյուռքում) առավելապես կատարվում են հաշվեմկատորեն, երբ, բարեկեցիկ կյանքի ակնկալիքով, շատ հայեր «ամուսնանում» են եվրոպացիների, ամերիկացիների, արդեն նաեւ պարսիկների, արաբների հետ:

Խառնամուսնություններին զգալի չափով նպաստում են օտարի տիրապետությունը, պանդխտությունը, ազգերի կրոնակցությունը, բայց, ամենամեծ չափով, աշխարհաքաղաքացիական քարոզչությունը: Ու մինչ մեր ազգային դաստիարակության գործը մնում է այսպես՝ տոսկ փաստեր արձանագրող, ականատեսն ենք դառնում հայ-նեգրական, հայ-թուրքական ամուսնությունների...

* * *

Վերջում՝ մի էական հանգամանք: Պատմության բերումով մեզ են խառնվել տարբեր ազգեր, եւ այդ արյունախառնման շնորհիվ է նաեւ, որ մեր հոգեմարմնական շատ գծեր խեղված են: Ուրեմն ի՞նչ իմաստ ունի խոսել արյան մաքրության, ցեղի անաղարտության մասին:

Ձուլալ ակունքից սնվող առվակը պղտորվում է, երբ փոխում է իր հունը կամ նրա մեջ սկսում են լցվել անմաքուր ջրեր, եւ բավական է փակել այդ ջրերի ճամփան ու վերականգնել բնական հունը՝ այն աստիճանաբար կդառնա այնպես մաքուր, ինչպես եղել է հազարամյակներ շարունակ. կմաքրվի, եթե ակունքը դեռեւս անաղարտ է: Այդպես էլ մասնակի արյունախառնության ենթարկված ու սեփական հունից շեղված հայությունը վերստին կնույնանա իր ակունքին՝ Ցեղին, այսինքն՝ կվերականգնի իր դասական-ցեղային հոգեմարմնական գծերը, եթե բացառի օտար արյան ներմուծումը եւ առաջնորդվի

սեփական հոգեւոր-բարոյական արժեքներով: Եականը հավատն է այդ վերականգնելիության նկատմամբ, հավատը, որ Ցեղը դեռ անեղծ է: Եվ պատահական չէ, որ Ցեղակրոնության Հավատամքում ցեղահավատությունն ու արյան անարատության պաշտամունքը Նժդեհը դրել է կողք կողքի:

* Արյունախառնության խնդիրը, լինելով նրբին ու ոչ երկրորդական, մեզանում դեռեւս անհրաժեշտ չափով լուսաբանված չէ, եւ մեր դատողություններն, անշուշտ, դեռ կարիք ունեն գիտական ամենալուրջ հիմնավորումների: Կարծում ենք՝ ժամանակն է, որ այս խնդիրն ընկալվի իբրեւ համազգային գործ եւ դառնա մեր պետության ու նրա գիտական հիմնարկների ուշադրության առարկա:

** Շարադրանքը պարզեցնելու համար, իբրեւ տեսակներ՝ նկատի ենք առել ազգերին, որոնք, ինչպես ընդունված է ասել, ձեւավորվել են երկու կամ ավելի ցեղերի միությունից կամ ձուլումից: Իբրեւ բնական (արարված) տեսակներ՝ մենք համարում ենք ցեղերին, իսկ ազգերը դիտում՝ որպես պատմականորեն առաջացած, բայց բնության կողմից «հանդուրժող» տեսակներ:

Մեր համոզմամբ, շատ թե քիչ կայուն ազգեր առաջանում են միեւնոյն ռասայի ցեղերի ձուլումից, իսկ տարբեր ռասայի ցեղերի խառնումից երբեք լիարժեք ազգություն առաջանալ չի կարող: Այս իմաստով, օրինակ, ամերիկյան ազգ (կամ սոցիալիստական ազգ, իսլամական ազգ...) ասվածը շինծու է ու երբեւէ իրականություն դառնալ չի կարող:

* * *

Ազգային գաղափարախոսությունը պետք է հաստատի գոյության կռիվը որպես ազգերի միջեւ հարաբերության (կարելի է հասկանալ նաեւ՝ ազգերի «փորձության») Բնությունից (կամ Աստուծոյ) սահմանված օրենք:

Այս առումով, Ազգային գաղափարախոսությունը պետք է մերժի ծուլ ճակատագրապաշտությունը եւ Ազգի կենսունակությունն ու հարատեւումը պայմանավորի մշտական պայքարով ու Աստծո հետ հաղորդակցվելու (կամ, որ նույնն է՝ իր արմատներից մշտապես սնվելու, դրանց հավատարիմ մնալու) հանգամանքով:

Միաժամանակ նաեւ, Ազգային գաղափարախոսությունը պետք է պարզաբանի պատերազմի եւ խաղաղության ընթացքը՝ նրանց հերթագայությունը բնորոշելով իբրեւ գոյության պայքարով թելադրված օրինաչափություն:

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒՎՈ ԱԶԳԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Կյանքը գոյության անընդհատ պայքար է: Առանց այդ պայքարի՝ չկա կյանքում զարգացում, կատարելագործում:

Լինելով մասնիկը Բնության՝ ազգերը ենթակա են գոյության կռիվի հավերժական օրենքին եւ, ըստ այդմ՝ մշտապես պիտի պայքարեն իրենց ապրելու իրավունքի համար: Ազգերի մեջ, ինչպես Բնության մեջ ընդհանրապես, իշխում է բնական ընտրության սկզբունքը. Բնությունն ընտրում է ուժեղներին, եւ ազգերը դատապարտված են ուժով նվաճելու ապրելու սեփական իրավունքը՝ իրենց հոգու, մտքի եւ բազկի բովանդակ ուժով:

Եվ այդ «փորձությունում» իբրեւ մարդկային տեսակ՝ մենք կարող ենք ինչպես հավերժել, այնպես էլ վերանալ, կախված մեր՝ սեփական ինքնության հանդեպ հավատարմությունից եւ անընդհատ զարգանալու, ժամանակի ոգուն համընթաց գործելու ունակությունից:

Այն ազգերը, որոնք ճանաչում են Բնության օրենքներն ու օրինաչափությունները եւ գործում են դրանց համապատասխան, առավել կենսունակ ու մրցունակ են գոյության պայքարում: Եվ

յուրաքանչյուր ազգ, որ ձգտում է ինքնահավիտենականացման, փորձում է որակապես ու քանակապես գերազանցել մյուսներին: Լավ է դա, թե վատ, այդպես է թելադրում Բնությունը, եւ բոլոր փորձերը՝ սրբագրելու այն, դատապարտված են ձախողման:

Միաժամանակ, սակայն, սեփական բնատարածքից ավելիին ձգտելը (ծավալապաշտություն) եւ սեփական բարքերը ուրիշ ազգերի պարտադրելը կամ նրանց ծուլելը եւս հակաբնական են, քանզի խաթարում են տիրապետող ազգի նկարագիրը, որով՝ սպառնում նրա գոյությանը:

Գոյության պայքարի բնական դրսեւորումներից է պատերազմը, որը, Նժդեհի բառերով ասած՝ «մեկն է մարդկային էվոլյուցիայի ամենաբուռն արտահայտություններից»: Որքան բնական է գիշերվա եւ ցերեկի հերթափոխությունը, նույնքան բնական է եւ՝ պատերազմի ու խաղաղության հաջորդականությունը: Եվ աղոթել «խաղաղության աստծուն», կնշանակի չհասկանալ, որ պատերազմները գալիս են մեր կամքից անկախ, հակառակ մեր «բարի ցանկության», քանզի այդպես է պահանջում գոյության կռվի անսրբագրելի օրենքը: Իսկ խաղաղությունը, եթե այդպիսին կա ընդհանրապես, պետք է նվաճել, նվաճել հաղթանակած:

Այսպիսով, ամեն ազգ ինքն է կերտում իր ճակատագիրը. կերտում՝ անցյալի հիշողությամբ, ապագայի հաստատուն հավատով եւ օրվա հարատեւ պայքարով, միաժամանակ: Եվ երբ մեռնում է ազգի մեջ ինքնահավիտենականացման կամքը, վերջինս՝ ենթակա բնական ընտրությանը, դադարում է արեւի տակ տեղ զբաղեցնելուց՝ զիջելով այն առավել ուժեղներին:

* * *

Ազգային գաղափարախոսությունը պետք է սահմանի այն հավիտենարժեք հասկացությունները եւ տա ընդհանրական այն արժեքները, որոնց շուրջ, անկախ անհատի քաղաքական ու կրոնական համոզմունքներից, ընկերային դիրքից ու աշխարհում գտնվելու վայրից, պիտի կայանա մեր ազգային միությունը: Այն պետք է լինի հիմնական երաշխավորը հայության տարանուն հատվածների միջեւ ազգային համերաշխության (միասնության) հաստատման:

ՆԵՐՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

«Տվե՛ք ինձ ներցեղային բարոյականով առաջնորդվող մի հատիկ սերունդ - եւ ես ապահովեմ հայ ժողովրդի տեղն արեւի տակ»:

Գ. Նժդեհ

- Մեր օրերու հայը չունի ներցեղային բարոյական, այլ միայն նախանձի, հաշվի վրա հենված ներկուսակցական բարոյական,- գրում էր «Տարօնի Արծիւ»-ը 1939թ.: Էապես նույնն է պատկերը նաեւ այսօր. հայությունն, իր ընդհանրության մեջ, մնալով հատվածապաշտ ու եսակենտրոն, դեռեւս զուրկ է ազգային ամբողջականության զգացումից, որով եւ՝ ազգային միության գիտակցումից: Կուսակցական, կրոնական, թայֆայական հատվածականությունը, նեղ անձնապաշտությունը շարունակում են խարխուլել մեր ազգային հավաքականության հիմքերը: Անշուշտ, եսականության այդ ախտը ոչ այսօր եւ ոչ էլ դարի 30-ականներին է ի հայտ եկել: Դրա ակունքները պիտի փնտրել ավելի վաղ ժամանակներում: Մեզ համար, սակայն, առավել կարեւոր է ոչ թե ժամանակի ճշգրտումը, այլ, ընդհանուր տեսակետից, Ազգի միասնության խախտման պատճառների բացահայտումը եւ այն ուղիների նախանշումը, որոնցով հնարավոր կլինի կյանքի կոչել այդ միությունը:

Մինչ այժմ, որպես կանոն, մենք հիմնականում բավարարվել ենք մեր անմիաբանությունը դատափետեղելով կամ ազգային համերաշխության անօգուտ քարոզներ կարդալով (հատկապես, վերջին ժամանակներս, Չարենցի հայտնի պատգամը տեղի-անտեղի շահարկելով): Արդյունքում՝ չեն դադարել «հնչակ-դաշնակ»-յան տիպի զգվռոցները, էջմիածին-Անթիլիաս հակամարտությունը, կա իշխանություն-ընդդիմություն վտանգավոր անհանդուրժողություն, Հայրենիք-Սփյուռք անհամաձայնություն... Ծիշտ է, այսօր էջմիածնի կաթողիկոսը չի բանադրում հայ բողոքականներին, հնչակներն էլ, երեւի թե, աղջիկ տալիս են դաշնակներին, Արցախի ազատագրությանը կամ Գյումրիի վերաշինությանը մասնակցել են հայեր աշխարհի ու Հայաստանի տարբեր վայրերից, բայց, այդուհանդերձ, մենք դեռեւս մնում ենք ներքուստ պառակտված:

Թեեւ այսօր ունենք պետություն, սակայն ազգային անհամաձայնությունը հայության տարբեր շերտերի միջեւ ավելի է խորանում. մի մասն աղքատանում է, մյուսը՝ հարստանում, մի մասը Հայրենիքին կառչած, մյուսը՝ այն լքող, մեկը բապտիստ, մյուսը՝ ադվենտիստ, ոմանք՝ արեւմտասեր, ոմանք՝ ռուսասեր եւ այլն... Եվ եթե առկա քաղաքական նեղմտությունը, կրոնական հարանվանությունները, ընկերային շերտավորումը, որոնց համար մենք հաճախ հատուցել ենք Ազգի ու Հայրենիքի մի մասի կորստով, շարունակեն այսպես անարգել խորանալ, ապա ստիպված կլինենք արձանագրել եւս մեկ «դար կորստյան»:

Բազմաթիվ կուսակցությունները միգուցե չլինեին չարիք, եթե հանդես չզային կուսակցամոլության դիրքերից: Դրանց գերակշռող մասը մերժում է այն ամենը, ինչն իր կուսակցության անունով չէ, իր մենաշնորհը չէ: Շարունակվում է հայության մասնատումը նաեւ ըստ կրոնական հատկանիշի. ներմուծվող աղանդները շատերին դարձնում են կրոնախեւ, շատերին էլ՝ ագրեսիվ ապազգայիններ: Օրեցօր մեր կյանքում ամրապնդվող եսապաշտությունը հայության (հատկապես հայ երիտասարդության) մի ստվար մասին, մարդու իրավունքների գերակայության մերժելի սկզբունքի անունով, մղում է դեպի տիեզերաքաղաքացիություն:

Հակազգային երեւոյթների այս շարքը կարելի է շարունակել... Ինչեւէ, խոսենք անելիքի մասին:

Նախ հաստատագրենք, որ ազգի անհատների կամ տարբեր հատվածների բնական միությունը կայանալի է ոչ թե կողմերի

սակարկություններով, այլ՝ ընդհանուր նպատակի ու արժեքների գիտակցումով եւ դրանց անվերապահ ենթարկվելու կամքով:

Իսկ ի՞նչ ընդհանրական արժեքների ու նպատակի շուրջ պիտի կայանա ազգային միությունը: Ցեղային կենսահայեցողությունն ասում է. արժեքներն են՝ Ցեղը եւ Հայրենիքը, նպատակը՝ դրանց հավիտենացումը: Այս նպատակի ու արժեքների գիտակցումի, ինչպես նաեւ՝ դրանց ծառայելու կամքի պակասն են ի հայտ բերել անհամաձայնություն Ազգի առանձին տարրերի միջեւ: Իհարկե, դժվար է միանշանակ ասել, թե ինչն է հանգեցրել այդ պակասին, այդուհանդերձ՝ թվարկենք մի քանի պատճառներ: Օրինակ՝ օտար գեների ներմուծումը (խառնամուսնությունները), որը, ինչպես ուսուցանում է ցեղային իմաստաբանությունը, դիմագծի խեղումից բացի, արյան եւ ոգու փոխադարձ կապի շնորհիվ, բերում է նաեւ հոգեգծերի փոփոխության, ասել է թե՛ սեփական աշխարհընկալման խեղման. կամ՝ իր արժեքների չգիտակցման հետեւանքով (որը տեղի է ունենում, երբ նախորդ սերունդը չի կարողանում անհրաժեշտ դաստիարակություն տալ նորահաս սերնդին) ազգի մեջ առաջացած օտարահակությունը՝ օտար բարքերի ընդունում, քաղաքական տարբեր կողմնորոշումներ եւ այլն:

Իսկ երբ բացակայում է Ցեղի եւ Հայրենիքի գիտակցումը եւ չկա դրանց ծառայելու կամքը, կրոնական, կուսակցական, դասակարգային, անձնական եւ այլ կարգի «ես»-երը գալիս են մասնատելու ազգային օրգանիզմը: Հարկ չկա հիշեցնելու, թե ինչ կատարվեց, երբ տիեզերական քրիստոնեության գաղափարը վեր դասվեց հայկականությունից, համաշխարհային դասակարգային հեղափոխությունը գերադասվեց ազգային գոյատեւման խնդրից, այս կամ այն թագավորի անձնական ու դինաստիական խնդիրները լուծվեցին ազգային շահերի ուրացման հաշվին եւ այլն:

Կարելու է նաեւ հաշվի առնել հետեւյալ հանգամանքը: Անհնար է այսօր ակնկալել միասնություն բոլոր հայ կոչվողների համար, քանզի Ցեղի եւ Հայրենիքի գաղափարները, ցավոք, արժեք են եւ կարող են արժեք լինել հայության մի մասի համար միայն: Օրինակ՝ հնարավոր չէ ակնկալել միասնություն Հայրենիքը դավաճանողի եւ նրա համար մարտնչողի, անձնապաշտորեն ազգափոխ եղողի եւ նահատակության գնով իր ազգությունը պահողի միջեւ, պետություն շենացնողի եւ այն թալանողի, ազգային արժեքներ ստեղծողի եւ դրանք վաճառողի միջեւ... Ըստ

ցեղային աշխարհայեցողության, այն, ինչն այսօր կոչվում է հայություն կամ հայ ժողովուրդ, կազմված է զգայագիտակցական հետեւյալ շերտերից՝ տեսակը կրող ցեղից, դեռեւս անտարբեր եւ չկողմնորոշված ժողովրդից եւ Հայ տեսակի համար մեկընդմիշտ մեռած՝ ազգուրաց տականքից: Այս առումով, Ցեղը եւ Հայրենիքը արժեքներ են ցեղորեն նտածող տարրի եւ այդպիսին կարող են դառնալ ժողովրդի համար՝ վերջինս ցեղելու, դեպի ցեղը կողմնորոշելու միջոցով: Այսպիսով, ազգային միասնությունն ասելիս, խոսք կարող է լինել միայն Ցեղ-ժողովուրդ միասնության մասին:

Անշուշտ, պետք չէ միամտորեն կարծել, թե դարերով կորցրած ազգային միությունը կարելի է շուտափույթ վերականգնել: Պարզ է նաեւ, թե որքան շուտ սկսվի այդ վերականգնման ընթացքը, այնքան հնարավոր կլինի դրա իրականացումը:

Ուրեմն, ինչի՞ց սկսել:

Վերելումն արդեն ասվեց, որ հայության տարանուն ուժերի միջեւ չկա ազգային համաձայնություն, որովհետեւ կամ չկա ընդհանրական արժեքների եւ միասնական նպատակի գիտակցում, կամ էլ, եթե կա գիտակցումը, չկա դրանց նվիրաբերվելու կամեցողություն: Այլ խոսքով, ազգային միություն ունենալու համար պիտի ձեռնամուխ լինել անհատի ազգային գիտակցության ձեւավորմանը եւ նրանում Ազգին ծառայելու կամքի մշակմանը, որի հիմնական միջոցը դաստիարակությունն է*:

Միաժամանակ, ավելի լայն առումով, ազգային միասնության խնդիրը հանգում է մեզանում հանրապարտադիր բարոյականի արմատավորմանը՝ կոչված ապահովելու մեր ներքին միությունը: Հասկանալի է, որ այդ բարոյականը ինքնին մասն է այն ավետարանի, որ կոչվում է ազգային գաղափարախոսություն. վերջինս պետք է լինի հիմնական երաշխավորը հայության տարանուն հատվածների միջեւ ազգային համերաշխության հաստատման:

* * *

Ցեղային աշխարհայեցողությունը՝ Ցեղի ներքին կյանքը ներդաշնակելու համար, սահմանել է **Ներցեղային բարոյականը**, որի հիմնական սկզբունքները համառոտակի կներկայացնենք ստորեւ:

Համաձայն այդ բարոյականի՝ անհատը, որպէս ինքնու-
թյուն, Յեղից դուրս գոյություն չունի, քանզի Յեղի ընդհանրական
հատկանիշներով է պայմանավորված իր անհատական կերտ-
վածքը. նա հայ՝ մարդ է, եւ ոչ՝ սոսկ մարդ:

Լինելով ապադասակարգային, վերկրոնական ու վերկու-
սակցական բարոյական, որն ունի Յեղն ամեն բանից վեր դասելու
անխախտ սկզբունք (նախ Հայ), այն յուրաքանչյուր հայրենա-
զգաց ու ազգահոգ հայից պահանջում է՝ հանուն Հայ ցեղի եւ
Հայաստանի հավերժության զոհաբերել իր «ես»-ը, լինել հպա-
տակն ու մարտիկը Յեղի, անկախ քաղաքական կամ կրոնական
հանդուժմանից, ընկերային դիրքից եւ աշխարհում գտնվելու
վայրից: Ըստ այդ բարոյականի, եթե անհատն ընտրում է այս կամ
այն քաղաքական, կրոնական կազմակերպությունը, մասնա-
գիտությունը, ապա միայն նրա համար, որպէսզի գտնի իր
անհատական խառնվածքին համապատասխան դրսեւորման
դաշտ՝ լավագույնս օգտակար լինելու Յեղին եւ Հայրենիքին:
Ներցեղային բարոյականը ժխտում է ներքին ճակատում տարվող
պայքարը՝ մատնանշելով արտաքին ճակատը եւ քարոզում
անհանդուրժող կեցվածք այն ներքին տականքի դեմ, որը, հանուն
իր հատվածական շահերի, հրահրում է այդ պայքարը:

Ներցեղային բարոյականի պահանջով, յուրաքանչյուր
հայրորդի, գիտակցելով մահով անմահանալու խորհուրդը, պատ-
րաստ է մեռնել, որ ապրի ցեղը Հայոց:

Ըստ դրա՝ անհատն ազատ է այնքանով, որքանով չի
հակադրվում Յեղի շահերին ու բարոյականին, որ իրենն են նաեւ.
միաժամանակ, նրան տրվում է այնքան ազատություն, որ իր
անհատականության լիարժեք դրսեւորմամբ ծառայի Յեղին:

Ներցեղային բարոյականի սկզբունքներով՝ անհատի
անձնական երջանկությունը պայմանավորված է Յեղի հավա-
քական երջանկությամբ, եւ այս գիտակցությամբ է նաեւ, որ
յուրաքանչյուր անհատ պիտի ձգտի աշխատել Յեղի բարօրության
համար (տեղին է բերել Ներսես Աստվածատուրյանի դասական
սահմանումը՝ *«չկան բախտավոր կամ դժբախտ անհատ հայեր, կա
միայն երջանիկ կամ անբախտ հայություն»*):

Այդպիսի բարոյականով հայրորդուն հարազատ են այն
բոլոր հայերը, որոնց համար ազգային շահը բարձր է եսակենտրոն
ու հատվածական շահերից:

Ներցեղային բարոյականի առանցքային սկզբունքներից են՝ համահայկական ազգասիրությունը եւ համահայաստանյան հայրենասիրությունը:

Համահայկական ազգասիրություն

Ներցեղային բարոյականը մեր պատմության ընթացքում ստեղծված կամ ստեղծվելիք ամեն իրողություն արժեւորում է համահայկականության սկզբունքով: Ըստ այդմ, հայկականության իմաստով նույնարժեք են հեթանոս Հայկը, քրիստոնյա վարդապետ Խորենացին, դաշնակցական Շանթը, ռամկավար Թեքեյանը, համայնավար Չարենցը, կաթոլիկ Վարուժանն ու Ալիշանը, բողոքական Գերսամ Ահարոնյանը... Համաձայն դրա, հայության մեջ չկա խտրականություն՝ հայաստանցիներ եւ սփյուռքահայեր, քաղաքացիներ ու գյուղացիներ, կամ՝ «ախպարներ», «ֆռանգներ» եւ այլն:

Համահայաստանյան հայրենասիրություն

Ներցեղային բարոյականը մերժում է տեղական «հայրենասիրությունը» եւ սահմանում, թե սուրբ է Հայրենիքի ամեն մի կտոր հող՝ լինի Արցախը թե Երեւանը, Տարոնը թե Վասպուրականը...

Այսպիսով, հայության տարանուն հատվածների համախմբման անհրաժեշտ պայման համարելով ներցեղային բարոյականի արմատավորումը մեր կյանքում՝ մենք կրկին ասում ենք. վաղվա հայության համար ազգային համաձայնություն հնարավոր է ակնկալել միայն՝ նորահասներին Ցեղի եւ Հայրենիքի հավիտենարժեք գաղափարներով դաստիարակելով եւ նրանց մեջ այդ արժեքներին ծառայելու կամք մշակելով: Եվ այդժամ միայն կունենանք երանելի այն սերունդը, որն անհրաժեշտ է Ցեղի վաղվա առաջնորդին՝ ապահովելու համար հայ ժողովրդի տեղն արեւի տակ:

* Մենք համոզված ենք, որ մարդու մեջ դաստիարակությամբ կարելի է սերմանել, հարազատել տալ միայն այն, ինչը կա նրա էության մեջ: Եվ եթե հայեցի դաստիարակությունը չի տալու արդյունք որեւէ հայ կոչվող անհատի, կնշանակի ժառանգականորեն նա խեղված է՝ իբրեւ Հայ:

* * *

Հաստատագրելով, թե մարդկությունը կազմող ազգերից յուրաքանչյուրն ունի իր դերն ու առաքելությունը (ամշուշտ, իր հայրենիքում եւ իր կենսածեւի մեջ), Ազգային գաղափարախոսությունը պետք է կարողանա զուգորդել ազգայինը եւ համամարդկայինը: Ինքնատիպ ազգայինը եւ օրինակելի մարդկայինը պետք է համադրվեն նրանում:

Միաժամանակ, Ազգային գաղափարախոսությունը պետք է մերժի տիեզերաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմ) եւ ազգային անհատականությունը եղծող ամեն մի վարդապետություն (կոնունիզմ, գլոբալիզմ եւ այլն):

ԱԶԳԱՅԻՆԸ ԵՎ ՀԱՄԱՍԱՐԴԱՅԻՆԸ

Բնության բազմազանությունը, տեսակավորումը գոյություն ունեն ի սկզբանե: Ինքնին վերացական մարդկություն գոյություն չունի. մարդկությունը կազմում են ազգերը, եւ ամեն մարդ իր ազգությամբ մտնում է ընդհանուր մարդկության մեջ: Յուրաքանչյուր ազգ իր հոգեկերտվածքով ինքնատիպ է եւ անկրկնելի: Մարդկությունը հարուստ է ազգերով, եւ որեւէ ազգի կորստով այն աղքատանում է՝ կորցնելով զգալու, մտածելու եւ արտահայտվելու մի յուրահատուկ բնական ձեւ, մի առանձին հոգեաշխարհ: Հետեւաբար, *այն, ինչ ուղղված է ազգայինի դեմ, ուղղված է մարդկության դեմ:*

Ամշուշտ, ազգային ինքնատիպությունը չի ենթադրում աշխարհից մեկուսացում կամ ազգային եսականություն: Ազգերը, բացի առանձնահատկություններից, ունեն նաեւ ընդհանրական հատկանիշներ: Դրանք ակնառու են Աստծո հետ հարաբերությունները ճշտելիս (պատահական չի ասված, թե բոլոր ճշմարիտ կրոնները տանում են դեպի միեւնոյն Աստված), ինչպես նաեւ՝ հասարակարգերի, տնտեսածեւերի եւ գիտության հանդեպ մոտեցումներում: Սակայն այս բոլորն էլ իրենց վրա այս կամ այն չափով կրում են տվյալ ազգի կնիքը: Ըստ այդմ, յուրաքանչյուր ազգ ունի ի՛ր քրիստոնեությունը կամ ի՛ր սոցիալիզմը, կարելի է ավելացնել նաեւ՝ իրեն հատուկ լիբերալիզմը, ի՛ր ընկալումներից

համապատասխան դեմոկրատիան են: (Նույնիսկ բնական գիտությունների պարագայում, որոնց արդյունքներն անխոս վերազգային են, այդ արդյունքներին հասնելու մոտեցումները, որպես կանոն, ազգային յուրահատկություն ունեն):

Այսպիսով, թեև բոլոր ազգերը՝ իբրև Արարչի ծնունդ, Չավերժի եւ Բացարձակի հարթության մեջ մերձենում են, սակայն յուրաքանչյուրն ունի դեպի Արարիչ տանող ի՛ր ճանապարհը, իսկ ավելի ստույգ՝ իրեն տրված ճանապարհը: Սա՛ է ազգերի ներդաշնակ գոյակցության բնական-արարչական կարգը: Դա ասել է նաեւ, թե յուրաքանչյուր ազգային միայն կատարելության ճանապարհով է դառնում համամարդկային:

Ազգային ինքնատիպություն, թե՞ համաշխարհային միօրինակացում. այս հարցը մշտապես դրված է մարդկության առաջ՝ հերթական մարտահրավեր նետելով նրան:

Միօրինակություն քարոզող տեսությունների եւ դրանց հետեւում կանգնած ուժերի խնդիրն ակնհայտ է. շահարկելով ինտեգրացման բնական գործընթացները՝ բոլոր ազգերին պարտադրել միօրինակ բարքեր, միօրինակ մշակույթ, մտածելակերպ, հասարակարգ, տնտեսաձեւ, կարճ ասած՝ աշխարհաքաղաքացու համընդհանուր կենսակերպ:

Ազգերի մշակութային մերձեցում (բայց ո՛չ ձուլում), գիտատեխնիկական, տնտեսական միավորում (եւ ո՛չ մեկուսացում), այսինքն՝ հոգեւոր-մշակութային ինքնատիպություն եւ քաղաքակրթական ընդհանրություն. այսպես ենք մենք հասկանում աշխարհի բնական կարգը, այսպիսին է ազգայինի եւ համամարդկայինի մեր ընկալումը:

* * *

Անհրաժեշտ է շեշտել, որ Ազգային գաղափարախոսությունը պետք է խարսխվի ո՛չ թե օտարատյացության, այլամերժության, այլ՝ հայրենապաշտության եւ ցեղապաշտության, ասել է՝ առողջ **ազգայնականության*** հիմքի վրա: Այդուհանդերձ, նա պետք է սերմանի Ազգի թշնամու նկատմամբ արդար վրեժի զգացում, եւ, միաժամանակ, ներելու վեհամձնություն՝ նրան հաղթելուց, պատժելուց հետո՝ միայն:

Ազգային գաղափարախոսությունը պետք է ամրագրի, որ մեր անցյալը, ներկան եւ ապագան մի անխզելի ամբողջություն են՝ Հայ ոգու դրսեւորման հարատեւ ընթացք, որով եւ՝ անհրաժեշտ համարի սերունդների միջեւ հոգեհաղորդակցությունը:

Մեր պատմության տարբեր ժամանակաշրջանների արժեքները գնահատելով՝ ազգայինի առաջնայնության սկզբունքով՝ Ազգային գաղափարախոսությունը պետք է օրինակելի եւ դրվատելի համարի այն ամեն ազգային-հայկականը, որ առկա է Հայոց պատմության ողջ ընթացքում՝ նրա հեթանոս դարերում, քրիստոնեության շրջանում, համայնավարության օրոք եւ այլն:

Ազգային գաղափարախոսությունը պետք է պարզաբանի նաեւ ազգության եւ կրոնի փոխհարաբերությունը՝ հիմնավորելով, որ ազգությունը վեր է կրոնական դավանանքից (բուն ազգային կրոնի գոյության դեպքում՝ ազգը նույնանում է իր կրոնի հետ) եւ դա է միակ բնական կապը ազգի տարբեր դավանանք ունեցող անդամների միջեւ:

* ՄԵՐ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետք է ասել, որ հասարակական գիտության կողմից առայսօր չի տրված **ազգայնականության** միասնական, ընդունված սահմանում. կա շփոթ՝ ազգայինի, ազգայնականության եւ ազգայնամոլության: Մենք, հետեւելով Հայ ազգայնականության դասական մոտեցումներին, նույնացնում ենք «ազգային» եւ «ազգայնական» հասկացությունները (պատահական չէ, որ արեւմտահայերենում դրանք նույնիմաստ են),

միաժամանակ, մերժում՝ ազգայնամոլությունը, ինչպես ամեն մի մոլություն: Ըստ այդմ, ազգայնականությունը (նացիոնալիզմ)՝ իբրև զգացում, մտածում եւ գործելակերպ, որևէ ազգի արդար եւ բնական ձգտումն է հավատարիմ մնալ սեփական կենսաձեւին եւ հարատեւել իր հայրենիքում, առանց ուրիշի հայրենիքի վրա աչք տնկելու, առանց ուրիշին իր կենսակերպը պարտադրելու, այսինքն՝ առանց ազգերի ներդաշնակ գոյակցության բնական-արարչական կարգը խախտելու: Ազգայնականությունն, ուրեմն, ինքնին թելադրված է ազգերի գոյությամբ եւ որպես այդպիսին՝ հավիտենական արժեք է:

Այս ձեւակերպմամբ, ազգայնականությանն անհարիր է այլամերժությունը, օտարատյացությունը, անբնական ծավալապաշտությունը, որը հատուկ է ազգայնամոլությանը (շովինիզմ): Մեզանում, ցավալիորեն, դեռեւս ընդունված է ազգայնականությունը գնահատել արեւմտյան ինչ-ինչ չափանիշներով կամ մախկին կոմունիստական ըմբռումներով եւ այն ներկայացնել իբրև ծայրահեղականություն, ազգայնամոլություն: Այսօր էլ մեր գիտնականների, պետական ու քաղաքական գործիչների զգալի մասը ազգայնականությունը գնահատում է այլ երկրների այն քաղաքական հոսանքների օրինակով, որոնք իբրև հենարան օգտագործում են հասարակության անգիտակից եւ խաժամուժ (յրումպեն) տարրերը. երբեք ի ցույց չեն դրվում այդ երկրների ազգայնական առողջ ուժերը: Գրեթե ուրացության են մատնվում բուն հայ ազգայնականության պատմությունը, արդեն ձեւակերպված գաղափարաբանությունները, այն ներկայացնող անհատների հզոր իմացականությունը:

Կարծիք կա, որ ազգայնականությունն այսօր մեզանում հող չի կարող ունենալ, քանզի Չայաստանն էթնիկապես գրեթե միատարր է: Սա, անշուշտ, ազգայնականության էությունը չընկալելու եւ այն ստվերոտ կողմերով տեսնելու արդյունք է: Ազգայնականությունը, ինչպես վերը նշեցինք, տվյալ ազգի՝ իր բնական հայրենիքում հարատեւելու եւ սեփական արժեքներին հավատարիմ մնալու, դրանք զարգացնելու խնդիր ունի: Ըստ այդմ, անկախ այն բանից՝ Չայաստանն էթնիկապես միատարր է, թե ոչ, միեւնույն է, մեզ համար գոյություն ունի Չայրենիքի ամբողջական վերատիրման եւ սեփական կենսաձեւով ապրելու խնդիր:

Իսկ որ այսօր անհրաժեշտություն կա հայրենատիրական գաղափարների վերարժարծման, մեր բարոյական, մշակութային արժեքների կորստի ահազանգման, փաստ է: Չայության մի զգալի մասի մոտ (ինչպես Չայաստանում, այնպես էլ Սփյուռքում) հայրենատիրության կրակն աստիճանաբար մարում է. Չայկական բարձրավանդակի վերատիրման կամ ինչպես ընդունված է ասել՝ Չայ դատի խնդիրը

շատերի համար դարձել է անհրականանալի երազ եւ դրա արժարձունն էլ՝ ժամանակավրեպ: Այսօր հայությունը, հիմնականում արեւմտյան արժեքների լայնաճակատ քարոզչության ազդեցությամբ, աստիճանաբար հեռանում է իր հոգեւոր, մշակութային, բարոյական արժեքներից, իսկ Հայաստան թափանցած աղանդները, հազար ու մի «մարդասիրական», «բարեգործական» կազմակերպությունները ազատ, անարգել հունձք են անում: Այսքանն էլ բավարար է միանշանակ ասելու, որ մեր պետական քաղաքականությունն առայսօր չի բխեցվել ազգային քաղաքականությունից:

Հայաստան պետությունը ստեղծված է Հայ ազգի իղծերի իրականացման համար, հետեւաբար Հայաստանի պետական քաղաքականությունը պետք է խորքում լինի ազգային-հայկական, ասել է՝ բովանդակությամբ ազգայնական:

* * *

Ազգային գաղափարախոսության մեջ որոշակի դեր պիտի հատկացվի Հայ եկեղեցուն, իբրև ազգային աշխարհասփյուռ կառույց, իբրև հայության նկարագրի բաղկացուցիչ մաս: Սակայն պետք է նկատի առնվի եւ այն, որ Հայ եկեղեցական-քրիստոնեական գաղափարաբանությունը չի կարող ինքնին հանդես գալ որպես Հայ ազգային գաղափարախոսություն:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Ինքնապաշտպանությունը հայ ժողովրդի - ահա՛ հայ եկեղեցու նոր հավատամքը: Չընդունե՞ց այս ճշմարտությունը, չքարոզե՞ց, չտարածե՞ց ամեն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանության գործին - կործանված է դա»:

Գ. Նժդեհ

Զանդրադառնալով մեր ժողովրդի կյանքում Հայ եկեղեցու խաղացած դրական կամ բացասական դերին՝ մենք ընդունում ենք այն իրողությունը, որ այսօր Հայ եկեղեցին կա եւ հանդես է գալիս որպես ազգային, աշխարհասփյուռ կառույց: Հետեւաբար, մեզ համար կարեւորվում է նրա առավել ազգային լինելու եւ այդպիսով՝ հայությանն առավել օգտակար մնալու հանգամանքը:

Այս առումով, մենք նպատակ չունենք քննելու Հայ եկեղեցու գաղափարաբանության հիմքի՝ քրիստոնեության բարոյախոսական կամ պատմական կողմը, այլ այդ գաղափարաբանությունը կոիտարկենք հայ ազգային խնդիրների հետ կապված:

* * *

Նախ, Հայ եկեղեցու այն վտանգավոր մոտեցման մասին, ըստ որի նախաքրիստոնեական Հայաստանը ներկայացվում է որպես ջունգլիներ եւ քարոզվում, թե քրիստոնեությունը եկավ «լուսավորելու» հայերիս: Հայության քաղաքակիրթ պատմու-

թյունը սկսել 301թ.-ից՝ կնշանակի ուրանալ սեփական ազգի նախաքրիստոնեական մի քանի հազարամյա պատմությունը՝ իր անկրկնելի մշակույթով, բարձր գիտությամբ ու փառահեղ հերոսականով: Դա կնշանակի՝ ազգին արհեստականորեն կտրել իր արմատներից եւ այդպիսով նրան ինքնասպանության շեմին կանգնեցնել: Մի՞թե Մովսես Քերթոզ վարդապետը չի փառաբանել իր հեթանոս հայրերին, եւ մի՞թե քրիստոնեություն ընդունած հույները կամ հռոմեացիները հպարտ չեն իրենց նախաքրիստոնեական պատմությամբ: Կամ ինչո՞ւ, զրեթե մերժելով Յայոց նախաքրիստոնեական շրջանը՝ Յին Կտակարանի միջոցով, մեզ որպես սրբություն է ներկայացվում հրեաների այդ շրջանի պատմությունը. ինչո՞ւ ոչ քրիստոնյաներ Աբրահամն ու Իսահակը, Մովսեսն ու Դավիթը Յայ եկեղեցու կողմից սրբացված են, իսկ Յայկն ու Արամը, Տիգրանն ու Արտաշեսը՝ ոչ:

Նայում ես Յայ եկեղեցու սրբերի շարքը եւ ապշում. Մաշտոցի, Նարեկացու, Շնորհալու, Տաթևացու պես ազգաշնորհի հայորդիների կողքին տեղ են զբաղեցնում՝ հռոմեացի Կոստանդիանոս կայսրը, որը թեև քրիստոնեությունը շոնումն օրինականացրեց, սակայն ինքն այդպես էլ չդարձավ քրիստոնյա, 4-րդ դարում Յայաստանի անկախությունը կործանած հունաց կայսր Թեոդոսը, Անի մայրաքաղաքը հույներին վաճառած Պետրոս կաթողիկոս Գետադարձը եւ այլազգիների մի ամբողջ տողան: Ուրեմն Յայաստանը կործանած Թեոդոսին կամ ազգուրաց Գետադարձին կարելի է սրբացնել, իսկ, ասենք, Յայաստան պահած Դավիթ Բեկին կամ Նժդեհին՝ ոչ. չէ՞ որ առանց այդ մարդկանց, քրիստոնեության անգամ հետքերը չէին մնա Յայաստանում:

Իսկ միգուցե պատճառն այն է, որ նրանք հոգեւոր գործունեություն չեն ծավալել, բայց այդ դեպքում ի՞նչն է խանգարում մեր եկեղեցուն՝ իր սրբերի շարքը դասելու կամ սրբակենցաղ հայտարարելու Կոմիտաս վարդապետին կամ Խրիմյան կաթողիկոսին: Եվ արդյո՞ք ազգային թերաբժեքության բարդույթի կրողներից չէ Յայ եկեղեցին, որի մերձավոր սրբերից միայն Գրիգոր պարթևն է սրբացված հույն եւ հռոմեական եկեղեցիների կողմից, իսկ ինքը պարտավորվել է սրբացնել նրանց բազմաթիվ երեւելիների:

Արժե հիշատակել, որ եղել են կաթողիկոսներ, որոնք պատվիրել են սրբերի շարքը դասել նաև Յայրենիքի համար նահատակվածներին: Մասնավորապես, Վրթանես հայրապետը

սպարապետ Վաչե Մամիկոնյանի մահվան առիթով պատվիրեց՝ Հայրենիքի ու Եկեղեցու համար պատերազմի մեջ ընկնողներին այսուհետ նահատակ նկատել եւ նրանց քաջության հիշատակը անխափան կատարել ամեն տարի (հետագա դարերում, թերեւս, այս պատվիրանը չի գործել): Ավելացնենք նաեւ, որ մի շարք ազգային դեմքեր թեւ տարեկան տոնակատարության չեն արժանացել Եկեղեցու կողմից, սակայն համարվել են սրբակենցաղ անձեր:

Նույնը պիտի ասել Հայ Եկեղեցու տոների կապակցությամբ: Նա օգտագործում է Հայոց բուն թվականը (պատիվ իրեն), բայց չի հիշատակում դրա հետ կապված տոներ՝ Նավասարդը: «Տոնք եկեղեցականք»-ում չի հիշատակված զոհն Սարդարապատը (թեւ ի հիշատակ այդ հերոսամարտում «վասն հավատո եւ հայրենյաց» ընկած «աշխարհագորաց եւ զորավարացն հայոց» կատարվում է հոգեհանգիստ, սակայն այն միանգամայն արժանի է հիշվելու որպես տոն): Արժե ավելացնել, որ ամենեւին էլ կարիք չկա նախաքրիստոնեական շրջանի մի շարք ազգային տոներ անպայմանորեն կապել քրիստոնեության հետ. դա է՛լ արհեստական է, ե՛լ հաճախ խաթարում է տոնի ազգային էությունը:

Հաճախ է շրջանառվում այն միտքը, թե էությամբ մենք քրիստոնյա էինք մինչեւ Քրիստոսը, թե քրիստոնեությունը մեր կենսաձեւն է եղել ի սկզբանե: Մի՞թե. Քրիստոսի ո՞ր պատվիրանով է առաջնորդվել 200 հազ. օտարազգի գերեվարած Հայոց արքա Արգիշտին, արդյո՞ք Տիգրանը՝ իր աշխարհակալ ձգտումներով, քրիստոնյա էր էությամբ եւ կամ մի՞թե «ի սկզբանե քրիստոնյա» ժողովրդին հրով ու սրով պիտի պարտադրվեր այդ կրոնը: Անշուշտ, մենք հեռու ենք նաեւ այն մտքից, թե քրիստոնեությունը խորթ է մեր ազգային էությանը: Մենք հակված ենք այն տեսակետին, որ *հայկականն ու քրիստոնեականը ներդաշնակելի են (բայց նույնական չեն), եւ պատահական չէ, որ հայությունը, թեւ որոշ ուշացումով, ի վերջո հարազատեց եւ իր կենսաձեւի հետ համադրեց քրիստոնեությունը:*

Եկեղեցու ջանքերով տարածում է գտել այն դրույթը, թե Հայ Եկեղեցին՝ շնորհիվ քրիստոնեության, պետականության բացակայության պայմաններում, փրկեց հայերիս ծուլվել-ամհետանալուց: Իբրեւ վճռորոշ գործոն՝ հաճախ շեշտվում է Հայ Եկեղեցու միաբնակ (մոնոֆիզիտ) դավանաբանությունը:

Անշուշտ, Հայ Եկեղեցին ունի անուրանալի դեր հայ լեզվի ու մշակույթի պահպանման գործում, բայց մի՞թե նրան պիտի

վերագրել նաեւ 18-19-րդ դարերի հայոց գիտական ու մշակութային վերելքը կամ 1918-ի մայիսյան ճակատագրական հաղթանակները: Այս հարցն ունի մեկ էական կողմ եւս. «*Եթէ հայերից մնացել են մի քանի փշրանքներ, դրա համար պետք է շնորհակալ լինել ոչ թէ լուսավորչական եկեղեցուն, այլ թուրքերին, թաթարներին, պարսիկներին... Եթէ հայը լինէր ֆրանսիացու, գերմանացու եւ անգլիացու հպատակ, արդեն վաղուց կորած կլիներ, եւ լուսավորչական եկեղեցին հազիվ թէ կարող լինէր փրկել նրան»* (Րաֆֆի): Այո՛, այլակրոնների միջավայրում, փոխադարձ բացասման ու հակազդեցության շնորհիվ, հայերը պահեցին իրենց ինքնությունը, իսկ քրիստոնյա երկրի հպատակության ներքո՞... Ինչո՞ւ 387թ. Յայաստանի բաժանումից հետո քրիստոնյա Բյուզանդիային բաժին ընկած գավառներում, կարճ ժամանակում հայությունը ձուլվեց-կորավ (հայ գրերն ու այստեղ բացված դպրոցներն իսկ ի զորու չեղան այդ գավառների հայությանը փրկելու), իսկ Պարսկաստանին անցած տարածքներում հայությունը չկորավ: Ինչո՞ւ եկեղեցին ձուլումից չփրկեց 14-րդ դարի սկզբին Անիի կործանումից հետո Լեհաստան եւ Ուկրաինա գաղթած հարյուր հազարավոր հայերին (արժե նշել, որ հայերը պահպանվեցին Ղրիմում, ուր նրանք ապրում էին թաթարների հարեւանությամբ): Ինչո՞ւ այն ի զորու չէ կասեցնելու այդ ձուլումն այսօր Սփյուռքում, ուր, ի դեպ, հայերն ավելի շատ ձուլվում են Արեւմուտքի քրիստոնեական երկրներում, քան Արեւելքի իսլամական տերություններում (այստեղ, իհարկե, էական դեր է խաղում նաեւ գաղութի մոտիկությունը):

Իսկ ինչ մնում է Յայ եկեղեցու միաբնակությանը, ապա վերջինիս դերը՝ մեր ազգային նկարագրի կամ ինքնուրույնության պահպանման գործում, չպետք է գերազնահատել: Օր.՝ երբ 607թ.-ից վրաց եկեղեցին հարեց հունադավան երկաբնակ եկեղեցուն (մինչ այդ ուներ նույն դավանաբանությունը, ինչ Յայ եկեղեցին), դրանից վրաց ժողովուրդը չվերացավ. ոչ էլ կաթոլիկ Միսիթարյաններն են կորցրել իրենց ազգային կերպարը:

Անընդունելի է նաեւ Յայ եկեղեցու հարմարվողական կեցվածքը, որ նա բռնել է օրվա խնդիրների նկատմամբ: Այսօր, երբ աչքի առաջ եղծվում են մեր ազգային նկարագիրն ու բարոյականը եւ հայությունը համակվում է նյութապաշտության ու օտարամոլության հերթական վարակով, եկեղեցին՝ բացի աղանդներից մեկումեջ փնտվող հայտարարություններից, չի փորձում այդ

ամենի դեմն ամեն: Ի՞նչ է այսօրվա եկեղեցու գործը. մեռելաթաղ, արհեստական ծիսակատարություններ, մուրացիկության ու անգործության մղող «բարեգործություն»:

Ի դեպ, աղանդների հետ կապված: Անլուրջ եւ անարդյունավետ է դրանց դեմ պայքարը Ավետարանով տանելը, քանզի աղանդները պակաս հաջողությամբ չեն հիմնավորում իրենց գոյությունը նույն Ավետարանով: Աղանդների դեմ տարվող պայքարը, առաջին հերթին, պիտի տարվի ազգայինի դիրքերից: Ու չպետք է մոռանալ ժողովրդական իմաստությունը. եթե գայլը հոտից ոչխար է փախցնում, կնշանակի՝ հովիվներն անպիտան են դարձել. ցավոք, մեր հոգեւորականների շարքերում այսօր Դիոգենեսի լապտերով պիտի փնտրել աննյութական, հայրենանվեր «աստծո ծառաների»:

Այսպիսով, երբ Հայ եկեղեցին պայքարում է օտար ազդեցությունների դեմ, իր հավատացյալների մեջ խրախուսում է ազգայինը, նա ճիշտ ուղու վրա է, եթե այն ժխտում է նախաքրիստոնեական հայ մշակույթն ու պատմությունը, ցուցաբերում դավանաբանական անհանդուրժողություն, նա սխալ ուղի է բռնել: Եթե Հայ եկեղեցին մեր ժողովրդի քաղաքական ազատության գործը համարում է սրբազան եւ աշխատում ազգային պայքարի ուղղությամբ, նա իր առաքելության մեջ է. եթե այն քարոզում է թշնամիների նկատմամբ հեզություն, հանդուրժողություն եւ անհատի հոգու փրկությունը վեր է դասում ազգային խնդիրներից, նա իր առաքելությունից շեղված է: Կարճ ասած, եթե եկեղեցին գործում է ի շահ ազգի, նա Հայ եկեղեցի է, ի վնաս ազգի՝ Հայ եկեղեցի չէ:

Իսկ մինչ այդ, մեր ցեղի ազատության ու հարատեւման հրամայականով՝ Հայ եկեղեցին պիտի վերազնահատի իր պատմությունն ու գործունեությունը (դա նույնիսկ կոմունիստներն արեցին), վերազնահատի ազգային շահի դիրքերից՝ այդ շահին ծառայեցնելով նաեւ քրիստոնեությունը:

* * *

Ազգային գաղափարախոսությունը անհատի մեջ պետք է սերմանի ազգային հպարտություն, ազգի ապագայի նկատմամբ՝ հավատ, գերծ պահի նրան անլիարժեքության, սնապարծության, գերարժեքության, նորահավատության եւ այլ փստավոր բարոյթներից:

ՄԵՐ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՆՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Չհավակնելով գիտական խորության՝ փորձենք ընդհանուր հայացք նետել հայ կյանքում առկա հոգեբանական մի շարք երեւույթների ու ձեւավորված բարոյությունների վրա՝ մեր հոգեբանական ինքնապաշտպանության եւ մեզանում արմատ զգած մի շարք փստավոր հոգեվիճակների հաղթահարման անհրաժեշտությունից ելնելով:

Մեզանում առկա հոգեբանական փստերը հիմնականում հետեւանք են երկու բանի՝

ա) բնական օրենքներն ու օրինաչափությունները չիմանալու,

բ) մեր ցեղի պատմությանն ու մշակույթին, նրա իրական արժեքներին, առաքինություններին ու թերություններին անծանոթ լինելու - մի խոսքով՝ անցեղաճանաչության:

Պետք է ասել, որ հոգեբանական առանձին բարոյություններ խիստ շաղկապված են միմյանց, եւ հաճախ դժվար է դրանք տարանջատել:

Ազգային թերարժեքություն

Այն արդյունք է սեփական արժեքի չգիտակցման, ազգային հպարտության (արժանապատվության) բացակայության, որոնց աղբյուրը ազգային ինքնաճանաչումն է:

Ազգային անլիարժեքությամբ պիտի բացատրել, օրինակ, հայերի՝ միմյանց հետ հայերեն չխոսելը, այլ լեզվով ստորագրելը, օտար անձնանուն կրելը, որեւէ օտարերկրացու կողմից մեր

ժողովրդի հասցեին ասված դրական խոսքերով անտեղի ոգևորվելը եւ այլն: Վերջինիս հետ կապված՝ հետաքրքիր է նկատել Րաֆֆին. *«Չեմ կարող չհիշել հայերի այն ընդհանուր մոլորությունը, որ սովորական է դարձել եւ մեր գավառներում. տեսնում ես մի տեղ, մի ժողովրդի մեջ, մի խմբի մեջ տասը հայ, իսկ նրանց թվում մի օտարազգի, անպատճառ տասը հոգի հայերը կսկսեն մեկ օտարականի լեզվով խոսել, ինչ ազգից էլ լիներ նա: Չգիտեմ ե՞րբ պետք է հայն ազգային հպարտություն ունենա»:*

Ազգային թերարժեքությամբ պիտի բացատրել նաեւ այն հանգամանքը, երբ շատ հայ բանասերներ ու պատմաբաններ անպայմանորեն ձգտում են մեր մշակույթի շատ արժեքներ կապել օտար ազդեցության հետ: Օրինակ՝ հայկական դիցարանը պարսկականից կամ ասորականից փոխառնված համարելը, մեր բառարմատների մեծ մասը օտար իմաստներից բխեցնելը, Հայոց այբուբենի տառերը հին հունականից վերածելը եւ այլն: Սա պիտի բացատրել նաեւ հայ մտավորականության մեծ մասի պարտվորական հոգեբանությամբ, որով տառապողները, առհասարակ, ինչպես Նժդեհը կասեր՝ *«խոնարհամիտ են լինում եւ բնազդորեն փախչում այն ամենից, ինչ որ նրանց հիշեցնում է լիարժեք կյանքով, քաջաբար ու փառքով ապրող իրենց նախահայրերին»:*

Թերարժեքության յուրատեսակ երեւույթ է Հայաստանի հայերի՝ սին հույսեր կապելը Սփյուռքի մեր հայրենակիցների հետ. թե իբր Սփյուռքը չի թողնի, որ մենք սովից կոտորվենք, նա ռազմական օգնություն ցույց կտա թուրքական հարձակման դեպքում եւ էլի շատ առասպելականացված բաներ:

«Գանգատվել դառնորեն չար բախտից ու մեզանից դուրս որոնել մեր դժբախտությունների պատճառը՝ սա եւս մեր ազգային հոգեբանության բնորոշ գծերից մեկն է»,– գրում է Յ. Քաջագունդին: Սեփական դառնությունների աղբյուրը իր «ես»-ի մեջ չտեսնելու եւ դրանք իրենից դուրս փնտրելու ինքնախաբեություն–աիա՝ մեզանում իշխող մտայնությունը: Այսպես, 1915թ. հայության սպանդի համար մեղավոր են բոլորը, իսկ որ մենք ընդունակ չեղանք ինքնապաշտպանվելու, անմեղ ենք. 1918-20թթ. Հայաստանի պարտության համար մեղավոր են բոլորը, իսկ որ Կարսում Հայկական բանակն առանց կռվի հանձնվեց թուրք «եղբայր-ներին», մեղավոր են բոլորը, բացի մեզանից:

Իսկ կյանքի օրենքը պահանջում է՝ սեփական «ես»-ի մեջ տեսնել մեր դժբախտության պատճառները եւ սեփական ոգու մեջ որոնել մեր հզորանքի գաղտնիքը:

Թերաթեքության զգացումի բերած ամենամեծ քաղաքական վնասը՝ օտարահակությունն է, օտարին ապավինելու ստրկամտությունը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ միջնադարյան Հայաստանում նախարարների ու թագավորների միջեւ փոխադարձ անհաշտ կռիվները, որոնք այնքան վնաս բերին մեր աշխարհին, էապես պայմանավորված էին նրանց տարբեր օտարահակ կողմնորոշումներով: Նույն օտարամետ կողմնորոշումների բախման հետեւանքով տուժեց հայությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին:

Այնինչ, քաղաքական իմաստությունն ասում է՝ զինակցի՞ր ուրիշների հետ, օգտագործի՞ր նրանց ուժը, բայց հույսդ դի՞ր սեփական ուժի վրա եւ ցո՛ւյց տուր, որ արժանի զինակից ես:

Ազգային սնապարծություն

Ազգի իրական արժեքներով եւ առաքինություններով հպարտանալու փոխարեն՝ սին, դատարկ բաներով պարծենալը նույնպես անցեղաճանաչ լինելու արդյունք է: Ազգային սնապարծության դրսեւորում պիտի համարել, օրինակ, երբ հպարտանում ենք, թե հունաց այսինչ կայսրերը հայեր են եղել, Նապոլեոնի զորականների մեջ հայեր կային, Ռուսաստանի դիկտատորը հայ էր: Իհարկե, արժե իմանալ, թե ինչերի են ընդունակ մեր ազգակիցները նաեւ Հայաստանից դուրս, բայց հայությունը նրանց երախտագիտության խոսք չունի երբեւէ ասելու:

Հաճախ հպարտ ասում ենք, թե Բաբուն կամ Թիֆլիսը հայերն են ստեղծել. իսկ ինչո՞ւ Հայաստանում նույնը չեն ստեղծել: Ժամանակին նաեւ հպարտացել ենք, թե ամենամեծ արձանը Ստալինին հայերս ենք կանգնեցրել, Լենինի դամբարանը հայ է կառուցել. այո՛, հոյակերտ արձան ու դամբարան ենք նվիրել մեր ազգի դահիճներին եւ դեռ հպարտանում ենք:

Սնապարծության առարկա կարող է դառնալ նույնիսկ իրական առաքինությունը, երբ վերջինիս վրա տարածվում է հոգեւոր ծուլությունը: Օրինակ, հաճախ, տեղի-անտեղի վկայում ենք, թե «արիացի» ենք: Բայց որքանո՞վ ենք դրան արժանի:

Ուրեմն, նախ արժանի լինենք մեր արիական կոչումին, որպեսզի նաև իրավունք ձեռք բերենք դրանով հպարտանալու:

Ազգային գերաժեքություն

Այն՝ մեզ շրջապատող աշխարհը չճանաչելու եւ այդ աշխարհում մեր իրական արժեքներն ու առաքինությունները գերազնահատելու արդյունք է:

– Մենք ենք «Աստօծ միակ ընտրյալը», միակ մշակութաստեղծ, արարչագործ ազգը,– հայտարարում են այս մոլորության գերիները,– եւ եթե վերանանք աշխարհի երեսից, մարդկությունը կկործանվի, քանզի այլեւս ընդունակ չի լինի արարման: Ուրեմն,– եզրակացնում են նրանք,– Արարիչը թույլ չի տա, որ մենք վերանանք:

Դժվար չէ հասկանալ, որ այս ամենը կարող է ազգին մղել հոգեկան անգործության՝ պայմանավորված ծույլ ճակատագրապաշտությամբ: Այնինչ, ազգերի գոյության ընթացքը բազմիցս փաստել է, որ յուրաքանչյուր ազգ ինքն է ամենօրյա պայքարով դարբնում իր ճակատագիրը եւ ամեն վայրկյան «դատապարտված» է ապացուցելու, որ ինքն արժանի է գոյության:

Ազգային գերաժեքությանը պիտի վերագրել նաև մեզանում մասնակիորեն առկա այն տեսակետը, թե հայերս պիտի ստանձնենք բոլոր արիական ազգերին համախմբելու, արիական միասնական ընտանիք կազմելու առաքելությունը: Կարծում ենք, որ այս մտայնությունը միամիտ երեւակայության ու երազկոտության արգասիք է եւ ի վերջո կարող է վերածվել արիական կեղծ «ինտերնացիոնալիզմի»:

Կույր նորահավատություն

Այն պատել է մեզ դարեր շարունակ, բազմիցս պատճառ դարձել մեր խոր հիասթափության, երբ հերթական անգամ ճաշակել ենք դրա դառը պտուղները: Կուրորեն ընդունել ենք մեզ հրամցված ամեն նորը, եւ մեր չկշռադատված նորահավատությունը հաճախ հմտորեն օգտագործվել է օտարների կողմից, որոնք «համամարդկային սիրո ու եղբայրության» փետուրներով մեզ են պարտադրել իրենց նենգ կամքը: Եվ փոխանակ ուրիշից վերցված ամեն լավ նորը ազգայնացնելու, մենք օտարի բերած վատ նորն ընդունելով՝ ապագայնացել ենք:

«Միայն հայն է աշխարհի երեսին բոլոր ազգերուն մեջ, որ ամեն «ություն», քրիստոնեությունից մինչեւ ընկերվարություն, առեր է այնպես բառացի ու տառացի կերպով, վերացական հակաշտակությամբ՝ ուրանալով եւ մոռնալով ինքնապահպանության ամենատարրական բնագոյն անգամ» (Ջարեւանդ):

Այդպես եղավ նաեւ մեր օրերուն, երբ մենք փարվեցինք Արեւմուտքից մատուցված «արժեքներին», դրսի «բարեգործներին» ընդունեցինք գլխներիս վրա, փոխանակ առաջադրելու մեր էությունից բխող, մեր ոգեկառույցին համապատասխան՝ նոր իդեալներ, նոր գաղափարներ...

Այս կույր նորահավատությունը հաճախ բացատրվում է մեր՝ իբր դյուրահավատ ու քաղաքականապես միամիտ լինելու պարագայով: Անշուշտ, նաեւ դրանով, բայց առաջին հերթին՝ ազգի մտավոր, հոգեւոր եւ քաղաքական վերնախավի տկար լինելու հանգամանքով, քանզի վերջինս անհրաժեշտ պահերին անկարող է գտնվում զգալ ժամանակի շունչը, հեռու պահել ազգին մոլորություններից եւ մատուցել նրան հավիտենական արժեքներ:

* * *

Ազգային գաղափարախոսությունը պետք է հիմնավորի Արարիչ-Ցեղ-անհատ օրգանական կապը: Ցեղային աշխարհ-իմաստությունն ասում է. որպես ինքնություն՝ անհատը գոյություն ունի տեսակի (Ցեղի) մեջ, եւ նրա՝ իբրեւ անցավորի բնական կապը Աստծո՝ իբրեւ հավիտենականի հետ, անցնում է իր տեսակը (Ցեղը) հավերժացնելու ճանապարհով: Այլ խոսքով, միայն Ցեղի միջոցով՝ իր հոգին Ցեղի արարչաստեղծ Ոգուն միածուլելով, անհատը կարող է մերձենալ Արարչին: Ըստ այդմ, Ազգային գաղափարախոսությունը պետք է մերժի մահը հավիտենական կորստի հետ կապող գաղափարը եւ իմաստավորի մահով անմահանալու խորհուրդը:

ՄԱՅԿԱՆ ԵՎ ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*«Ով չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից.
Իսկ ով գիտե մահը, նրանից չի երկնչում»:*

Եղիշե

Հավերժի ու անցողականի կնճիռը յուրաքանչյուր խորհրդածողի պարտադրում է մահվան իմաստավորում, նրա խորհրդի վերծանում: Դեռ անտիկ աշխարհում են բնորոշել՝ «իմաստափրությունը խորհրդածություն է մահվան մասին»:

Ո՞րն է անհատի համար իր մահվան խորհուրդը, ի՞նչ կապ ունի ինքը՝ իբրեւ «անցավոր-մահկանացու», հավիտենականի եւ բացարձակի հետ: Ի՞նչ իմաստ կա նրանում, որ ինքը պիտի կանոնի գոհաբերվի Հայրենիքին, մարտիրոսանա գալիք սերունդների համար:

Ցեղային իմաստաբանությունն ասում է. կա արարչաստեղծ Հայ ոգին, որ մարմնավորվում է այս կամ այն հայ անհատի մեջ, եւ վերջինս այդ Ոգու կրողն ու անձնավորումն է միայն. նրա մարմնացյալ մահով իր հոգին, որ մասնիկն է Հայ ոգու, վերամարմնավորվում է այլ հայերի մեջ, որով շարունակում է

գործել ու հարատևել: Եվ այդ Ոգուն միաձուլվելով (իմա՝ անձնապես ոգիանալով) միայն հայ անհատը կարող է կապվել մշտնջենավոր բացարձակին՝ մերձենալ Աստծուն:

«Մահ չկա՛, կորուստ չկա՛ տիեզերքում, կա՛ աստիճանական ոգիացումը նյութի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կա՛... Անմեռ է մեզ սկզբնավորող, մեզ շնչավորող զորությունը, բանը, ոգին». այսպես է մերժում Ցեղային աշխարհիմաստությունը՝ մահը հավիտենական կորուստի հետ կապելու մեղանչելի գաղափարը:

Զփորձելով շատ ծանրանալ բնագանցական եւ էաբանական խորք ունեցող այս ոչ դյուրամարս մեկնությունների վրա՝ ավելի տեսանելի դիրքերից նայենք մեր «Ցեղի կյանքի գրքին»՝ Հայոց պատմությանը:

5-րդ դարում Եղիշեի գրչով բանածելվեց մահվան այն ըմբռնումը, թե գիտենալով մահվան խորհուրդը՝ հաղթահարել ես մահը, չգիտենալով՝ նրա գերին ես:

- *Շննարտորեն ազատ է նա միայն, ով ազատ է մահվան երկյուղից,*- իմաստասիրում է Նժդեհը: Մահվան վախն է, որ ստիպում է մարդուն դառնալ մորթապաշտ, խոսքի եւ գործի մեջ՝ աններդաշնակ, մեծագործությունների՝ անընդունակ: Մահվան սպառնալիքն է, որ պարտադրում է հակառակորդին ենթարկվել հաղթողի կամքին: *«Այն օրեն, երբ Հայրը վախենալ սկսեց մահեն, այն օրեն օտարը թագավորեց Հայաստանում»*, - ասում է կրկին Նժդեհը՝ բացահայտելով մեր պատմական դժբախտությունների հոգեբանական պատճառներից մեկը:

Իսկ մահվան սարսափը արդյունք է նրա չգիտակցման, չիմաստավորման, այսինքն՝ Ոգու հավիտենության նկատմամբ թերահավատության: Ավարայրի մարտից առաջ Վարդանն իր զորքին ոգեպնդում էր. *«Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»:* Մամիկոնյան իշխանը, որ խորին հավատ ուներ Ոգու հավիտենականի նկատմամբ ու այդպիսով՝ հաղթահարած էր մահվան վախը, պատվիրում էր մարտիկներին՝ *«մահն ընդունել ուրախ սրտով»:*

Մամիկոնյան ռազմաշունչ ասպետները, որ սուր վերցրին Աստծո անունով ու Հայրենիքի համար, օրինակելիորեն դրսևորվեցին մեռնելու բարդ արվեստում եւ իբրեւ ուխտ՝ դարերին փոխանցեցին իմացյալ մահվամբ անմահանալու սրբազան

պատգամը: Եվ ինչու միայն նրանք... Շատ հայորդիներ գիտեցան մահվան մեջ իմաստ դնել եւ որպէս կյանքի նպատակ ունեցան՝ Ցեղի ու Հայրենիքի համար նվիրաբերվելը: *«Ապրել ու մեռնել Հայրենիքի համար, ահա այն խնդիրը, որը ես եմ ընտրել...»*. ասում էր Աբովյանը: Վստահաբար կարելի է պնդել, որ այսպէս են հասկացել մեր պատմության մեջ հերոսացած, հետեւաբար, իրենց գոյությունը իմաստավորած բոլոր հայկազուններն անխտիր:

Ազգի հավիտենության համար կռվելու եւ մեռնելու պատրաստակամություն ունեցող որեւէ հայորդի, գիտակցորեն թե բնագոյորեն, իր համար որոշել է՝ սեփական մահով անմահացնել Ցեղը: Ձեյթունի 1862թ. ապստամբության ժամանակ, երիտասարդ Մարկոս Թաշճյանը, որ վճռել էր շարքից հանել թշնամու մահաբեր հրանոթները, ընկերների հորդորանքներին՝ թե «անմիտ մեռնելու կերթաս», պատասխանում է. *«Այո՛, գիտեմ պիտի մեռնեմ, բայց ուրիշները պիտի ապրեցնեն»*:

Մեր դարի 30-ական թվականների Հայկական ցեղային շարժման գաղափարախոսները, իբրեւ դասական հայի գերագույն բարոյական, սահմանեցին Ցեղի ու Հայրենիքի հավիտենականի համար մեռնելու բացարձակ կամքը, որը մահն իմաստավորած հայ մարդու վճիռն է, նրա ներքին մղումը՝ արիաբար մեռնելու Հայության եւ Հայաստանի համար:

Մեռնել, բայց չպարտվել, չտեսնել Հայրենիքը նվաճված - ահա՛ հազարամյակների խորքից եկած հայոց ռազմական բարոյականի օրենքը, որ առաջնորդել է հայ ռազմիկին եւ հնարավոր դարձրել մեր Ցեղի հարատեւումը: Պատմահայրը Հայկյան Արամի մասին ասում էր, թե նա *«լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպէս օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները եւ օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»*: Հազարամյակներ առաջ եւ հազարամյակներ հետո նո՛ւյն բարոյականը... Որովհետեւ նո՛ւյն ազգային Ոգին է, արարչաստեղծ Հայոց հավիտենական ոգին:

Ո՛չ միայն մեռնելով Ցեղը ապրեցնել, այլեւ՝ թշնամուն մեռցնելով: *«Վայ այն ազգին, որ մեռնել ու մեռցնել չգիտե մի վսեմ գաղափարի համար»*. ասում է Ահարոնյանը: Այո՛, նաեւ մեռցնել. ճիշտ են վերագնահատել, որ եթե ժամանակին հայ կամավորական զնդերը բնաջնջեին իրենց գրաված թուրքական բնակավայրերը, ապա Քենալը չպիտի ստեղծեր միլիական շարժումը:

Սեզանում փորձեր են արվել համառոտ նշանաբանել կյանքի ու մահվան խնդիրները: Մենք կանգ կառնենք երկու նշանախոսքերի վրա՝ «ազատություն կամ մահ» եւ «մեզ համար չկա մահ, մահ մեր թշնամուն»:

«Ազատություն կամ մահ»... Որքան մեզ հայտնի է, այս կարգախոսն առաջին անգամ տվել է Ռ. Պատկանյանը՝ իր «Վարդապետարանում»: Բնական է, որ այն ժամանակ հոգեվարքի մեջ գտնվող հայության համար ստրկական վիճակը նախընտրելի չէր մահից եւ հայորդին, հուսահատ, կամ ուզում է ազատագրվել, կամ մեռնել Ազգի համար եւ չտանել ստրկության անարգանքը:

Տասնամյակներ հետո, հոգեբանական մշակում ստացած եւ մահին հաղթած Դավիթբեկյան ուխտյալները մարտակոչում էին՝ «մեզ համար չկա՝ մահ, մահ մեր թշնամուն»: Այդ ուխտի նվիրյալի համոզմամբ իր անձնական մահը՝ մահ չէր, այլ՝ անմահացում, քանզի անմահ է մեր Ոգին. մենք անմահ ենք: Իսկ մահ պետք էր սփռել թշնամու բանակում, նրա ոգին ջարդելով, նրան մեռցնելով:

Տեղին է հիշել, որ Հայոց ցեղապետ Հայկը, Բելի դեմ ծակատամարտից առաջ, իր զորքին չպատվիրեց մեռնել, քանզի «կմեռնենք, եւ մեր ցեղը Բելի ծառայության տակ կընկնի», այլ՝ ցույց տալ թշնամուն բազկի զորություն, եւ այդ դեպքում «կհաղթենք ու կապրենք ազատ»:

Ասենք նաեւ, որ «ազատություն կամ մահ»-ը, որում ինքնագոհաբերումը դրսեւորվում է իբրեւ հուսահատական ճիգ եւ դառնում ինքնանպատակ, առավելապես անհատական կարգախոս է, բայց ո՛չ համազգային, քանզի Ազգի ազատությունը նվաճելի է նրա զավակների մի՛ մասի մահով: Իսկ «մեզ համար չկա՝ մահ, մահ մեր թշնամուն»-ը ընդհանրական նշանախոսք է, որը ցուցանում է Ազգի անմահության համար՝ թշնամուն մեռցնելու աննահանջ կամք:

Մեռնելով եւ մեռցնելով՝ անմահացնել Ցեղը - ահա՛ մահվան ու հավիտենության խորհուրդը:

Եվ վստահաբար կարող ենք ասել, որ գոյության իմաստը հասկացել են նրանք, ովքեր Ցեղի հավերժության ընկալումով՝ իմաստավորել են իրենց անցավոր ներկան եւ գիտակցել մահով անմահանալու աստվածային ճշմարտությունը:

Այդ է սովորեցնում նաեւ մեր մարգարեն. «Ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել, եւ մեռնել այն բանի համար, որի համար արժեք ապրել»:

* * *

Ազգային գաղափարախոսությունը պետք է կարողանա ներդաշնակել աշխարհայեցողության զգացական եւ գիտակցական կողմերը՝ կարելուրելով ինչպես անհատի ազգային զգացումը, այնպես էլ՝ նրա ազգային գիտակցությունը*:

Միաժամանակ, Ազգային գաղափարախոսությունը պետք է համադրի կյանքի հոգեւոր եւ նյութական (աշխարհիկ) կողմերը**, եւ իր տեսաբանված ու, որոշ դեպքերում, խորհրդապաշտական բնույթով հանդերձ, լինի մատչելի եւ գործադրելի:

* ԱԶԳԱՅԻՆ ԶԳԱՑՈՒՄ ԵՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Չգործության գաղտնիքը հասկացել են մարդկային այն խմբակցությունները, որոնք ճակատագրի դեմ ոգորելիս՝ զգում են, որ պետք է հակասության մեջ դնել բանականը եւ բնազդականը, որոնք գիտեն, թե նվաճունակ մտքի բուն աղբյուրը առողջ բնազդն է»:

Չայկ Ասատրյան

Զգայականի եւ գիտակցականի կապը՝ թե՛ անհատների, թե՛ հավաքականությունների պարագայում, հաստատված է գիտությամբ, եւ նմանատիպ կապերով են հաճախ որոշվում անհատ-հավաքականություն հարաբերությունները:

Ինչպես ուսուցանում է հայ դասական ազգայնականությունը՝ ազգային զգացումը արդյունք է ազգային հավաքական եւության, եւ առանձին անհատի մեջ հանդես է գալիս իբրեւ այդ հավաքական եւությունից փոխանցված մասնիկ: Այս դեպքում, անհատը բնազդաբար զգում է, որ ինքը կապված է մի հավաքականության եւ զգացումի (բնազդի) թելադրանքով ապրում է այդ հավաքականության կյանքով (կենցաղով, բարոյականով եւ այլն):

Իսկ ազգի հավաքական գիտակցությունը ձեւավորվում է նրա առանձին անհատների գիտակցությունների միավորումով եւ ամբողջացումով: Անհատի ազգային գիտակցությունը հենվում է նրա ազգային զգացումի վրա. դա է ամենասերտ կապը ազգի առանձին անհատների գիտակցությունների միջեւ: Այս դեպքում, անհատը սկզբում գիտակցում է այն կապերը, որ կապում են իրեն ազգային հավաքականությանը, այն առանձնահատկությունները, որոնցով ինքը տարբերվում է մյուս ազգերից, գիտակցում է սեփական արժեքը ազգերի համալիրում, ապա

գիտակցաբար կամենում է պահպանել ու զարգացնել դրանք՝ այդպիսով հավերժացնելով իր ազգային անկրկնելիությունը, ամրապնդելով ազգի հավաքական միությունը:

Այս առումով՝ մենք մշտապես պետք է կարողանանք զուգորդել աշխարհայեցողության զգայական եւ գիտակցական կողմերը, եւ մեր զգացումներն ու բանականությունը միշտ պետք է գործեն ներդաշնակ:

** ՀՈԳԵ-ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐԸ

Հոգու եւ նյութի որակապես տարբեր աշխարհներն առարկայորեն նաեւ կապված են, ուրեմն եւ՝ ներդաշնակելի. կա նյութի աստիճանական ոգիացում եւ հոգու նյութական իրացում՝ միաժամանակ:

Հասարակական կյանքում, ուր մարդիկ հիմնականում ապրում են նյութի աշխարհում (առաջնություն տալով կյանքի նյութական կողմին) եւ քչերն են ձգտում հոգու աշխարհ (այստեղ փնտրելով կյանքի իմաստը), այս երկու աշխարհներն իրար են կապված Գաղափարի դաշտով: Այս դեպքում բոլորին շաղկապում եւ շարժման մեջ է դնում ընդհանուր Մեծ գաղափարը, եւ ամեն մարդ ընտրում է գործունեության համապատասխան դաշտ (հոգեւոր կամ նյութական)՝ հանուն այդ Մեծ գաղափարի: Բնականաբար, խոսքն այստեղ հոգեզուրկ նյութապաշտների կամ էլ միայն իրենց «հոգու փրկությամբ» մտահոգների մասին չէ, որոնք եսակենտրոն են եւ ազգային-հասարակական կյանքին անհաղորդ:

Դասական իմաստությունն ասում է, որ նյութականը միջոց է հոգեւորի իրացման համար, հետեւաբար՝ ստորադաս նրա հանդեպ: Եվ մարդը, որ հանուն Մեծ գաղափարի՝ իբրեւ գործունեության դաշտ, գիտակցաբար ընտրում է նյութական աշխարհը (խորքում մնալով աննյութական, հոգեւոր անձ), նույնքան նվիրյալ ու գաղափարական է, որքան հոգեւոր կյանքով ապրողը:

Ինչպես ուսուցանում է հայ ազգայնական գաղափարաբանությունը, Մեծ գաղափարը, որով ներդաշնակվում են հոգեւոր եւ նյութական աշխարհները՝ Ազգ-Հայրենիքն է, որը եւ հոգեւոր է, եւ նյութական: Իբրեւ գաղափար՝ այն Մեծ է, քանզի բացարձակ է ու հավիտենական, իսկ մարդու ճանապարհին իմաստաբանորեն արժեւորելի է, եթե միտված է Բացարձակին ու Հավերժին, ասել է՝ Մեծ գաղափարին:

Եվ հզոր են այն ազգերը, որոնց չեն հակադրում հոգեւորն ու նյութականը եւ վերջինը ծառայեցնում են առաջինի իրացմանը:

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Պետական գաղափարախոսության մասին խոսելիս, նախ հարկ կա խոսել պետության*, իսկ ավելի շուտ՝ ազգային պետության մասին:

Ազգային պետությունը տվյալ ազգի՝ հայրենի հողի վրա հաստատված ինքնիշխան կառույցն է, որը կոչված է իրականացնելու այդ ազգի իղձերը, նպատակները, այսինքն՝ կյանքի կոչելու ազգային գաղափարախոսությունը: Ազգային պետության գոյության դեպքում, պետական գաղափարախոսությունը եթե չի էլ նույնանում, ապա առնվազն հենվում է ազգային գաղափարախոսության վրա (իսկ միազգ պետության դեպքում՝ նույնանում է):

Չետեւաբար, որպեսզի հայոց պետությունը կարողանա իր առջեւ դրած խնդիրները լուծել, նրա հիմքում եղած գաղափարախոսական համակարգը պետք է լինի ազգային: Մեր բոլոր հանրապետությունների օրոք պետության հիմքում ընկած արժեքային համակարգերը ազգային չեն եղել: Եվ նման արժեքային բազիսի վրա ստեղծված կրթական, օրենսդրական, տնտեսական** վերնաշենքերը չեն կարող արդյունավետ գործել, քանզի ներդաշնակ չեն մեր ժողովրդի ոգեկառույցին:

Այսպիսով, մեզանում ազգային եւ պետական գաղափարախոսությունները գրեթե նույնանում են: Այս պարագայում, հարկ է խոսել ազգային-պետական քաղաքականության մասին, որը Ազգային գաղափարախոսության իրացման մեխանիզմն է:

* ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՍ
ԱԶԳԵՐԻ ԱՊԱՊԵՏԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇՈՒՐՁ

Պետության ապագայի՝ նրա հնարավոր տրանսֆորմացիայի (ընդհուլ՝ վերացման) վերաբերյալ դիսկուրսն այսօր հատկապես տարածված է արեւմտյան քաղաքագիտական շրջանակներում: Կատեսակետ, որ արդի հասարակության (որն ընդունված է բնորոշել՝ իբրեւ *հետհնդուստրիալ-տեղեկատվական*) զարգացման միտումները հիմնովին ձեւափոխելու են պետության ավանդական ինստիտուտը՝ այն դարձնելով ժամանակավրեպ, եւ հետայսու ազգերն ու հասարակությունները դեկավարվելու են վերազգային կամ վերպետական կառույցների միջոցով:

Ընդհանրապես, գլոբալ կառավարման խնդիրն ունի առավելապես քաղաքական նպատակադրում. գլոբալացման միջոցով աշխարհի միաբեւեռ կառավարում՝ ազգային կառույցների, ինքնիշխան միավորների, դիմադրության օջախների վերացմամբ:

Անշուշտ, պետությունը ազգի կամ հասարակության կազմակերպման միակ, միգուցե, նույնիսկ լավագույն ձեւը չէ եւ մի օր կարող է այլեւս չլինել, ինչպես չի եղել ինչ-որ ժամանակ առաջ: Սակայն ուժի այլ՝ արեւմտյանից տարբեր կենտրոններ ամենեւին էլ ոգէւորված չեն պետության ինստիտուտի վերացման կամ հասարակությունների վերպետական կառավարման հեռանկարով: Եվ բազմաբեւեռության գնացող արդի աշխարհում նման հեռանկարն, առարկայորեն, զոնե մոտ ապագայում տեղ չունի:

Մեր պարագայում պիտի ասել, որ այսօր Հայությունն իր հողի վրա ինքնակազմակերպվելու այլ կենսունակ մոդել չունի, քան ազգային պետությունը: Ինչ մնում է համաշխարհային Հայության կազմակերպմանը (համահայկական ցանցի ձեւավորմանը), ապա, բնականաբար, միայն պետական կառույցն է վիճակի չէ նման տարողունակ խնդիր լուծելու, եւ այստեղ, անշուշտ, ժամանակակից տեղեկատվական հասարակության ընձեռած հնարավորություններից պետք է կարողանալ օգտվել:

Իսկ քանի դեռ չի գտնված քաղաքական կազմակերպման առավել արդյունավետ ձեւ, քան պետությունը, ազգերի ներդաշնակ գոյակցության ապապետական ապագան կմնա երազ, որը հաճախ է դառնալու գաղափարախոսական խայծ ուժեղների ձեռքին (ինչպես, օրինակ, համայնավարական ապագան)՝ թույլերին ապակողմնորոշելու համար:

**** Ի դեպ, եթե կրթության եւ օրենսդրության ազգային լինելու հարցը մեզանում շատ թե քիչ ընկալված է, ապա նույնը չի կարելի ասել տնտեսության գաղափարաբանվածության, ազգային նկարագիր ունենալու անհրաժեշտության մասին: Ստորեւ փորձենք պարզաբանել այդ խնդիրը:**

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Անհատի կամ հասարակության բարեկեցություն ասելով՝ այսօր, որպես կանոն, հասկանում են տնտեսական բարեկեցություն: Արդի լիբերալիզմը մարդուն դիտում է իբրեւ «տնտեսական էակ»՝ անկախ իր ազգությունից, դավանանքից, իսկ նրա տնտեսական բարեկեցությունը՝ որպես գերակա խնդիր: Այստեղից էլ սահմանվում է պետության գոյության իմաստը՝ ապահովել անհատի ու հասարակության տնտեսական բարեկեցությունը:

Ըստ ազգային կենսափիլիսոփայության՝ ազգային պետությունը կոչված է իրականացնելու տվյալ ազգի իղձերը, նպատակները, եւ որպեսզի այն կարողանա իր խնդիրը լավագույնս լուծել, նրա հիմքում եղած գաղափարախոսական-արժեքային համակարգը պետք է լինի ազգային, իսկ այդ արժեքային բազիսի վրա ստեղծված կրթական, օրենսդրական, տնտեսական եւ այլ վերնաշենքերը՝ ներդաշնակ ժողովրդի ոգեկառույցին:

Ազգային արժեհամակարգում թե՛ անհատի, թե՛ ազգի գոյության իմաստը իր էության, այսինքն իր հոգեմտավոր կերտվածքի իրացումն է, այլ ո՛չ ընդամենը իր կենցաղի ու ֆիզիկական պահանջմունքների բավարարումը՝ տնտեսական կյանքի կազմակերպմամբ: Ըստ այդմ, անհատի կամ ազգի բարեկեցությունը միայն տնտեսական վիճակով չի պայմանավորվում, այլ առավելապես՝ նրա հոգեմտավոր գծերի արտահայտման չափով: Այս առումով, *ազգի կամ անհատի տնտեսական բարեկեցությունը, տնտեսական շահը ոչ թե նպատակ են, այլ միջոց՝ նրանց հոգեւոր ու մտավոր հատկանիշների լիարժեք դրսևորման համար*, իսկ ազգային պետության խնդիրն է՝ այս սկզբունքի իրացումը:

Չհասկանալի է, որ նման կենսափիլիսոփայությամբ ստեղծված տնտեսակարգը եապես պիտի տարբերվի եղածից:

* * *

Ստորել ներկայացնում ենք ազգային-պետական քաղաքականությանն առնչվող մի քանի հարցադրումների գաղափարաբանված, այսինքն՝ ազգային գաղափարախոսությամբ հիմնավորված գնահատականը:

Ե՛Վ ԱՐԵՎԵԼՔ, Ե՛Վ ԱՐԵՎՍՈՒՏՔ

Հոգեկերտվածքով եւ բնաշխարհագրությամբ մենք եւ մեր բարձրավանդակը ո՛չ Արեւելք ենք, ո՛չ Արեւմուտք, բայց միաժամանակ ե՛ւ Արեւելք ենք, ե՛ւ Արեւմուտք: Մենք համադրույթ ենք Արեւելքի եւ Արեւմուտքի՝ թե՛ հոգեմտավոր գծերով, թե՛ աշխարհաքաղաքական դիրքով. մի յուրահատուկ խաչմերուկ արեւելյան եւ արեւմտյան մշակույթների, կրոնների, քաղաքակրթությունների, տնտեսական ուղիների... Մենք հոգով Արեւելք ենք, մտքով՝ Արեւմուտք:

Սակայն ամենից առաջ մենք Մենք ենք՝ իբրեւ ինքնատիպ էություն եւ Բնություն, իբրեւ Ազգ եւ Հայրենիք, իբրեւ Հայ եւ Հայաստան:

Բայց մեր կյանքի ընթացքը, որդեգրած ուղին չեն բխում առարկայական այս իրողություններից: Մենք ամեն ինչով «ձգտում» ենք Արեւմուտք, իսկ Արեւելքում չենք փնտրում այն, ինչ պետք է փնտրել: Կա ներդաշնակության խախտում՝ «քաղաքակրթական Արեւմուտքի» եւ «մշակութային Արեւելքի» հանդեպ մեր կողմնորոշումներում: Պետք է այն վերականգնել:

Մենք հոգով պետք է լինենք Արեւելքում՝ սնվենք այնտեղի հոգեւոր իմաստություններից, մտքով՝ Արեւմուտքում, մշտապես հաղորդակից բնագիտության եւ տեխնիկայի նվաճումներին:

Մենք դաշնակիցներ պետք է փնտրենք թե՛ Արեւելքում, թե՛ Արեւմուտքում՝ առավելապես ելնելով ժողովուրդների հոգեհարազատության եւ քաղաքակրթական ընդհանրության սկզբունքից:

Իսկ ամենից առաջ մենք Մենք պետք է լինենք՝ իբրեւ Հայ եւ Հայաստան:

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

Ժամանակակից աշխարհում, ու թերեւս, բոլոր ժամանակներում, պատմությունը եւ նրա խորհրդանիշները (դեմքեր եւ իրադարձություններ, որոնք դառնում կամ որակվում են պատմական) ենթակա են գաղափարախոսական կամ աշխարհայացքային չափանիշների: Օրինակ, մարքսիստ-տեսաբանները մարդկության պատմությունը գնահատում էին դասակարգային պայքարի տեսանկյունից՝ համայնավարական-ապադասակարգային հասարակարգը համարելով պատմության վերջնական նպատակ: Այսօրվա գլոբալիստները, նոր գաղափարախոսությունների ի հայտ գալու առունով՝ պատմությունը համարում են «ավարտված», իսկ արդի ազատական-ժողովրդավարությունը՝ իբրեւ ամենավերջին գաղափարախոսություն, որի գլոբալ հաղթարշավով մարդկությունը «կապագաղափարականացվի» եւ կմտածի միայն գիտատեխնիկական խնդիրների ու ընկերային կյանքի անընդհատ բարելավման ուղղությամբ:

Թե որքանով են համայնավարությունը կամ ազատական-ժողովրդավարությունը պատմության նպատակ կամ «ավարտ», կախված է այն արժեհամակարգի ընտրությունից, որով արժեւորվում է պատմությունը: Իսկ պատմության արժեւորումը որոշակի գաղափարախոսության տեսակետից ոչ միայն նոր բան չէ, այլեւ գրեթե «օրինաչափ» է:

Այս առունով, մեր պատմությունն՝ իբրեւ Հայ ոգու անցած եւ անցնելիք հետագիծ, իբրեւ մեր անցյալի ու ապագայի անխզելի միասնություն, կարիք ունի վերարժեւորման, վերաիմաստավորման (*տես Չավելված 3-ը*): Այն մի տեսակ դադարել է մեզ համար ինքնաճանաչումի, ինքնագորացումի աղբյուր լինելուց, եւ հերոսն ու դավաճանը, հաղթանակներն ու պարտությունները մեզանում կարծես նույնարժեք են դարձել: Դրա փոխարեն՝ «ապագաղափարականացված» եւ «ազատ» հասարակության ճարտարապետները մեզ են մատուցում պատմության իրենց վարկածները եւ խորհրդանիշները:

«Քանի դեռ մեր ժողովրդին տրված չէ իր պատմության իմաստասիրությունը՝ նա պիտի չկարողանա օգտվել նրանից, – գրել է մի նշանավոր մտածող՝ ավելացնելով, – հայությանը ծակատագրական ծառայություն մատուցած կլինի նա, ով կիմաստասիրի նրա պատմությունը»:

ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԿԱՄՔՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«Երբ փչում է քամին,- ասում է չինական իմաստությունը,- հարկավոր է ոչ միայն վրան կառուցել, այլև՝ հողմաղաց»: Այսինքն՝ ոչ միայն քամուն դիմադրել, այլև՝ նրա ուժը խելամտորեն օգտագործել:

Ժամանակակից մարտահրավերներին դեմ-հանդիման՝ մենք պարտավոր ենք ե՛լ վրան կառուցել, ե՛լ հողմաղաց: Վրանը մեր դիմադրական կամքն է, որի հիմնական կրողը պետք է լինի ժողովուրդը, կառույցները՝ ընտանիքը, դպրոցը, բանակը, եկեղեցին, իսկ հողմաղացը մեր քաղաքական համակարգն է, որի իրացմանը պետք է լծվեն ազգային բարոյականությունն ու քաղաքական իմաստությունը յուրացրած գործիչները: *«Վրանների եւ հողմաղացների»* քաղաքականությունը մեզ համար պետք է լինի կողմնորոշիչ:

Բայց դրա համար հարկ է, որ մենք կարողանանք գործել իբրեւ համախումբ, նախ եւ առաջ՝ հաղթահարելով մեր ներքին հակադրությունները:

ԳԱՂԱՓԱՐ ԵՎ ԳՈՐԾ

Մեր կյանքում գաղափարի եւ գործի աններդաշնակութիւնը սովորական երեւոյթ է դարձել: Եվ այս անհամապատասխանութիւնը միայն անձնական որակներով, այսինքն՝ Գաղափարի հանդէպ հավատի ու նվիրվածութեան պակասով չէ պայմանավորված, այլեւ՝ հասկացութիւնների ու եզրերի դաշտում արհեստականորեն ստեղծված խառնաշփոթով: Ըստ այդմ, գաղափարականութիւնը միտումնավոր հակադրվում է գործնականութեանը, իսկ գաղափարական գործիչները որակվում են իբրեւ քաղաքական ռոմանտիկներ:

Սակայն մեզանում գաղափարականութիւնը համարել ռոմանտիզմ՝ կնշանակի դրսի քարոզչական տեխնոլոգիաների ծուղակն ընկնել, որոնց խնդիրներից է՝ իրապաշտութեան (ռեալիզմ) կամ գործնապաշտութեան (պրագմատիզմ) անվան տակ՝ մարդկանց գաղափարների, իդէալների դաշտից կտրելը:

Այնինչ, ռեալիզմը կամ պրագմատիզմը գործիք են իդէալների ու գաղափարների իրականացման համար, իսկ կտրվելով արժեքային այդ դաշտից՝ մարդն աստիճանաբար շեղվում է բուն նպատակից եւ դառնում հեշտ կառավարվող:

Այս առումով, մեր ժողովրդին ու պետութեանը պետք չեն գաղափարազուրկ ռեալիստներ կամ իդէալներ չունեցող պրագմատիկներ, ոչ էլ՝ կյանքից կտրված ցնդաբաններ կամ երազկոտ ճակատագրապաշտներ, այլ՝ կյանքի իրական պայմանները խորքով իմացող, նպատակասլաց գաղափարական գործիչներ:

ԵԶՐԱՓՈՒԿ

Մեր երկիրը հոգե-բարոյական վերանորոգման, նոր արժեքների հաստատման, ասել է՝ արմատական-համակարգային փոփոխությունների կարիքն ունի: Իսկ համակարգ փոխել, կնշանակի նախ հասարակության հիմքում եղած արժեքային համակարգը փոխել. ձեւավորել արժեքների այն բազիսը, որի վրա պիտի բարձրանան տնտեսական, իրավական, կրթական վերնաշենքերը: Դա կնշանակի՝ փոխել պետության արտաքին եւ ներքին քաղաքականության հիմքում դրված սկզբունքները, հասարակական զարգացման ուղղությունը, իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների դրվածքը, կարգավորվածություն մտցնել դիմություն-ընդդիմություն, Յայրենիք-Սփյուռք, պետություն-եկեղեցի առնչություններում, ազգային կառույցների միջեւ ապահովել ընդհանուր նպատակներից բխող համաձայնեցված գործունեություն:

Դա կնշանակի՝ անցում եսակենտրոն-մյութապաշտական համակարգից՝ ազգակենտրոն-հոգեւոր համակարգի:

Սեփական արժեհամակարգի եւ գաղափարախոսության առաջադրումը դարձել է հրամայական: Աշխարհն ինքը նոր արժեքների, նոր գաղափարների երկունքի շեմին է. մարդու իրավունքներն ու անհատի ազատությունը, ազատ շուկան եւ քաղաքացիական հասարակությունը վերահիմաստավորման անհրաժեշտություն են զգում: Կամ մենք կհասկանանք դրա անխուսափելիությունը եւ կստեղծենք գաղափարախոսական մեր զենքը, կամ ստիպված կլինենք, հերթական անգամ, կուրորեն ընդունելու օտարի պարտադրածը:

Հավելված 1

ՄԵՐ ՏՈՆԵՐԻ ՈՒԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐՏ 21 - ՎԱՀԱԳՆԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայոց առասպելաբանությունն ասում է, որ ազգերի պատմության նախաշեմին, գարնան գիշերահավասարին, Արարչի կամոք, Հայոց աշխարհը երկնեց իր «փրկության արեւ Վահագնին», որի վիշապաքաղ բազուկը Հայ ցեղի հարատեւման ուղին կանխորոշեց: Իբրեւ Հայոց ուժի եւ արիության մարմնացում՝ Վահագնը դարձավ հայ ռազմիկի հովանավորը եւ այսուհետ, մարտի մեկնող հայ զորականները նրանից խնդրեցին ուժ եւ քաջություն:

Թեւ թշնամին տեսնել ուզեց մեր հուր-աստծո մահը, սակայն հետագա դարերի դաժան հարվածների տակ չմեռավ ոգին Վահագնի: Վարդաններն ու Վահանները, Արաբոներն ու Հրայրները անշեջ պահեցին վահագնական հուրը, որով եւ՝ հավերժաբոց դարձրին Ցեղի կրակը:

Այդ կրակով թրծված՝ Սյունյաց սպարապետը եւս իր վարած ցեղամարտում ապավինեց Հայոց ուժակիր աստծուն ու Վահագնի խորհուրդին դիմեց: Նրա հրավառ շնչով Նժդեհը երկնեց արիադավան հայի Ավետարանը՝ Ցեղակրոնությունը, որով ուզեց տեսնել զորության մարդուն - վահագնապաշտին՝ ծարավ ուժի եւ արիության: Եվ հենց Վահագնի սրբազան աջի վրա պատվիրեց երդվել նա ցեղակրոնին:

Այսօր, երբ աշխարհում թելադրողը դեռեւս ուժն է, մենք վերստին ապավինում ենք Ցեղի ուժին ու զորությանը՝ վերակոչելով մեր հայրերի աստծուն: Վահագնին ենք կոչում ի հեճուկս նրանց, ովքեր, գոյության կռվի օրենքներին անգետ, խաղաղամոլության ցնորքներով տարված՝ մեղկ արդարություն են մուրում, ովքեր դեռ չեն գիտակցել, որ պատերազմները գալիս են անկախ մեր բարի կամ չար մտայնությունից, որ խաղաղություն ունենալու համար՝ պետք է պատրաստ լինել կռվի:

ՕԳՈՍՏՈՍ 11 - ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՀԱՎԻՏԵՆԱԲՈՑ ԿՐԱԿԸ

4500 տարի մեզանից առաջ, հայոց Նավասարդի 1-ին, Արի մեր ցեղը՝ առաջնորդությամբ նահապետ Հայկի, շահեց Արեւելքի տիրակալ Բելի հետ ունեցած դյուցազնամարտը, որով հաստատեց իր հավերժելու իրավունքը:

Հայկյան եռաթեւ նետը գետընկեց արեց թշնամի տիտանին եւ իր սլացքի հետ սերունդներին փոխանցեց Հայոց ամենազոր ու ազատատենչ ոգին: Հայկի հաղթանակով մեր տարեգրության մեջ նոր՝ Հայկյան թվականի սկիզբ դրվեց, հաղթանակի օրը վերածվեց ավանդական համազգային տոնախմբության, իսկ Մեծ նահապետը արժանիորեն տեղ գրավեց Հայոց աստվածների պանթեոնում:

Նավասարդյան բոցավառ կրակը չմարեց դաժան դարերի փոթորիկներից, մեր թափած արյունից ու արցունքից, այլ մերթ ընդ մերթ բորբոքվելով՝ անշեջ պահեց Հայկյան ոգին եւ մեր հավիտենականի ճանապարհը լուսավորեց:

Եվ այսօր նավասարդյան հաղթանակն՝ իբրեւ խորհուրդ, դարերի միջով մեզ ձայնում է՝

- Համախմբվել՝ վտանգի պահին: Ասել է թե՛ հաղթահարել անձնական «ես»-ը, վերջ դնել ներքին անհամերաշխությանը՝ գերագույն հաշտարար ունենալով Ցեղը: Այն հրամայում է՝ պայքարը ներքին ճակատից տեղափոխել՝ արտաքին ճակատ:

- Ունենալ հաղթանակելու վճռական կամք. հաղթել եւ հաղթանակած ապրել: Այդ կնշանակի՝ հաղթահարել մեր մեջ պարտվողական հոգեբանությունը եւ ամեն գնով խաղաղություն մուրալու փոխարեն՝ ունենալ հաղթանակած խաղաղություն:

- Միայն Ցեղի հավիտենականին նախանձախնդիր առաջնորդն է ընդունակ հաղթանակներ ապահովելու իր ազգին: Ասել է՝ ազգահոգ, հայրենաբաղձ ղեկավարության առկայությունը միայն կապահովի ժողովուրդ-իշխանություն միասնությունը:

Նավասարդյան հաղթանակը մեր հերոսականի ճանաչումն է, որով եւ՝ մեր առաքինությունների վերարժարժումն ու վերապրումը. դա սեփական պատմությամբ իմաստնանալու կամք է:

Եվ մենք, որ կոչված ենք Հայկի արժանի հետնորդները լինելու, վառենք մեր սրտերում Ցեղի հուրը, նրանով թրծենք մեր հոգիները եւ ցույց տանք աշխարհին, որ հավերժելու է ցեղն Արի, որ չի՛ շիջել նավասարդյան կրակը, չի՛ մեռել ոգին Հայկյան:

ԱՍՏՎԱԾԱՍՈՐ ՏՈՆԻ ՄԱՅՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*«Մայրերի ափի մեջ պիտ փնտրել
ազգերի ճակատագիրը»:*

Գ. Նժդեհ

Հայոց Նավասարդ ամիսը առատ է ոգեկոչումի օրերով, որոնց մեջ նշանակալի տեղ ունի Աստվածամոր տոնը (Վերափոխումն Ս. Աստվածածնի):

Ներկայի բարոյալքիչ մթնոլորտում, երբ հայությունն՝ իր ընդհանրության մեջ, ցեղի կենարար ստինքից սնվելու փոխարեն, գլխապտույտ փարվել է օտար արժեքներին, մենք ահագնացած ասում ենք, վերականգնելի է ամեն կարգի բարոյական խաթարում, բայց Հայ կնոջ բարոյական այլասերումը անդառնալի կլինի, եթե...

Մեզ պետք չեն արհեստականորեն բազմացող միայնակ մայրեր, հասարակաց տների համար բուժվող սպասուհիներ: Մեզ պետք են հայրենակրոն օրիորդներ, պատրաստ՝ գերդաստանի խոհեմ հարսներ ու ընտանիքի արժանի մայրեր լինելու:

Հայ մայրեր, դուք, որ կոչված եք կյանքի ընկեր լինելու հայ տղամարդուն, գիտցե՛ք Ձեր ամենաբարձր ու վեհ առաքինությունը՝ հայորդիներ ծնել եւ նրանց սեփական ափերի մեջ հայորեն դաստիարակել: Երանի տվե՛ք այն մայրերին, որոնց արգանդը Հայոց աշխարհին հերոսներ է պարգևել:

Ձեր խրախուսանքի մաղթությունը բերե՛ք Հայրենի հողի համար մարտնչողներին եւ Ձեր արգահատանքի ու ամոթանքի անեծքը՝ դասալիքներին ու դավաճաններին: Նմանվե՛ք այն տրոյացի կանանց, որոնք կանխելու համար իրենց ամուսինների անպատիվ փախուստը կռվադաշտից, այրեցին նավահանգստում կանգնած նավերը՝ կռվողներին չթողնելով նահանջի տեղ:

Եվ Աստվածամոր օրհնությամբ՝ երկնք մեզ համար հրեղեն զավակներ, որոնք Ցեղի հավիտենականը նպատակ դարձրած եւ նրա բարոյականը՝ որպես զենք ընտրած, կկերտեն Հայոց նոր դյուցազնականներ:

ՄԱՇՏՈՑԻ ՀԱՎԻՏԵՆԱՐԺԵՔ ԳՈՐԾԸ

Ամեն տարի Հայ եկեղեցին նշում է Սահակ եւ Մաշտոց սրբերի տոնը: Մաշտոցը մեր այն եզակի մեծերից է, ումով դարեր շարունակ ներշնչվել է հայությունը, որին պատմությունն արժեւորել է ըստ պատշաճի, իսկ Ազգը մեծարել է նրան դեռ կյանքի օրոք: Նա այն հատուկեմտ երջանիկներից է, որ սեփական աչքերով տեսել է իր գործի հաջողությունը, զգացել «Ոսկե դար»-ի բերկրանքը:

Մաշտոցի եւ հայ գրերի մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել, ներբողներ հյուսվել, որոնք բոլորն էլ իրավամբ փառաբանել են սուրբ դարձած տարոնցուն եւ նրա գործը:

Ասեմք, որ մենք հավատում ենք նախաքրիստոնեական շրջանում հայատա՞ռ գրի գոյությանը: Հավատում ենք, քանզի որպես ուղեցույց ունենք մեր ցեղի հանճարը, որպես փաստարկում՝ լրջամիտ հայագետներից շատերի գոյանպաստ կարծիքները: Եվ այդ հայատառ գիրն ու գրականությունը, որ կենտրոնացված էր մեհյաններում (կարծվում է, որ հայկական նշանագրերը լայն գործածության համար չեն եղել. դրանց ծանոթ է եղել միայն քրմական դասը եւ դրանցով գրվել են միայն քրմական գրականությունը եւ մեհենական տարեգրությունները, ինչպես, օրինակ, Եգիպտոսում, Հնդկաստանում եւ այլն), գրեթե ոչնչացման ենթարկվեց նոր կրոնի մուտքով: Փոխարինելու եկան հունարենն ու ասորերենը: Նրանցով սկսեցին ուսանել հայոց դպրոցում եւ ծես կատարել Հայ եկեղեցում:

Քաղաքական բաժանման ենթարկված հայության՝ երկու իրարից կտրված հատվածների միջեւ խորանում էր հոգեւոր վիհը: Հայությունը կանգնած էր հոգեւոր-մշակութային ուժացման շեմին:

Ահա այս պայմաններում էր, որ ազգահոգ մի վարդապետի մոտ հոգեւոր հայտնություն ստացավ Ցեղի հանճարը: Ցեղի երկուներից ու հարատելելու կամքից ծնվեց Մաշտոցը, ծնվեց, որ ապրի ազգը Հայոց: Մաշտոցն իր գրերով շաղկապեց սերունդներին ու հայության տարանուն հատվածներին: Մեսրոպատառ հայերենի շնորհիվ փոխանցվեցին մեզ նաեւ նախաքրիստոնեական մեր անցյալի փշրանքները:

Անշուշտ, անտեղի է մտավախությունը, թե նախաքրիստոնեական հայ գրի գոյությամբ ստվերվում է Մաշտոցի դերը: Այդ

անհիմն մտավախությունը կուզեինք փարատել թեկուզ այն փաստով, որ շուրջ հարյուր տարի առաջ, Ներսիսյան դպրոցի ականավոր մանկավարժ Իսահակ Չարությունյանի «Չայոց գիրը» աշխատությունը, որում հեղինակը եզրակացնում է, թե նախաքրիստոնեական շրջանում հայերն արդեն գործածության մեջ ունեցել են սեփական այբուբեն, արժանացել է... Սահակ-Մաշտոցյան մրցանակի:

Եթե նույնիսկ ընդունելու լինենք, թե Մաշտոցի գործը ուղղված էր միայն քրիստոնեությունը Չայաստանում արմատավորելուն, ապա այդքան իսկ նշույլ անգամ չի նսեմանում նրա վիթխարի ավանդը՝ հայությունը հոգեւոր-մշակութային ձուլումից փրկելու, դարերի հոգեւոր զենքով զինելու եւ, ինչու չէ, Չայոց գիրը վերջնական կործանումից փրկելու՝ վերստեղծելու գործում:

Ասենք նաեւ հետեւյալը: Տարոնականության մեջ կա մի խորհուրդ - *«հոգեւոր Մեսրոպականությունը»*. դա համահայկական փրկարար գործ անելու Մաշտոցի մտահոգությունն է, նրա՝ որպէս հայաշունչ մտավորականի՝ մշակութաստեղծ ծարավը: *Հոգեւոր արժեքների մշտական ծարավ եւ մշակութաստեղծումի խանդ՝ հանուն Չայ ցեղի եւ Չայաստանի հարատեւման - ահա՛ Մաշտոցի գործի հավիտենական խորհուրդը:*

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

5-րդ դարում Հայոց հատու սուրը կտրեց պարսկականության՝ Հայաստան արշավի ճանապարհը եւ Մամիկոնյան մահապարտ ասպետները, Վարդանանց եւ Վահանանց պատերազմներով, ցույց տվին, որ գիտեն մեռնել ու մեռցնել՝ հանուն Աստծո եւ Հայրենիքի: Անկախ այն բանից, թե որքանով պատմությունը ենթակայաբար գունազարդեց Վարդանանց Ավարայրը՝ այն ներկայացնելով իբրեւ հայրենամովիրության մարմնավորում ու որքանով անարդարացի գտնվեց Սյունյաց իշխանի նկատմամբ՝ նրան դարձնելով ազգուրացության հավաքական կերպար, աներկբայելի է, որ Վարդանանց պաշտամունքը մեզանում դարերով նույնացվեց Ազգի եւ Հայրենիքի պաշտամունքին, իսկ ազգանվիրման Վարդանանց օրինակը շատ հայորդիների համար եղավ վարակիչ ու դաստիարակիչ:

Վարդանանք եւ Մամիկոնյանները կռվի ելան Աստծո անունով եւ Հայրենիքի համար՝ ուժն ու բարոյականը ներդաշնակած, եւ դարերի միջով մեզ հասցրին *իմացյալ մահվան խորհուրդը*: Նրանք ցույց տվին, որ ով գիտե մահվան մեջ իմաստ դնել, հասկանալ նրա խորհուրդը՝ չի երկնջում մահից, որով սերունդներին ավանդեցին իրենց հավիտենարժեք ուխտը՝ ապրել եւ մեռնել Հայրենիքի համար, սեփական մահով ապրեցնել Ցեղը:

Ցեղի եւ Հայրենիքի համար արիաբար կռվելու ու մեռնելու Վարդանանց կամքը՝ համանուն տոնի հիշատակումով, փոխանցվեց դարերին եւ մեկ անգամ չէ, որ ոգեւորեց հետագա սերունդներին: Պատահական չէր նաեւ, որ մեր դարի ցեղախոս իմաստասերները, իբրեւ դասական հայի տիպար, տեսան Մամիկոնյան հային եւ խնդիր ունեցան՝ օրվա հայ մարդու կաղապարումն ըստ Մամիկոնյան հայի պատկերի: Այդ ցեղախոսներից ամենակատարյալը՝ Գարեգին Նժդեհը, Մամիկոնյան քաջերի բարոյականը բանաձեւեց այսպես. «Ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել, եւ մեռնել այն բանի համար, որի համար արժեք ապրել»:

Ահա՛ ցեղորդիների պատգամը եւ Վարդանանց համահայկական տոնի մերօրյա ու հավերժական խորհուրդը:

1915 - ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մեր օրերում շրջանառության մեջ է դրվել մի կատարյալ անհեթեթ թեզ՝ «զոհի բարդության» զերծ մնալու համար պետք է հնարավորինս քիչ արժարժեղ 1915-ի հայոց ողբերգության թեման: Անշուշտ, դա այդպես կլիներ, եթե մենք բավարարվեինք ողբ ու լացով, ինչպես, հիմնականում, եղել է տասնամյակներ շարունակ:

Բայց ամեն մի կենսունակ ազգ ընդունակ է իր ողբերգությունից՝ պատմության անողոք աստակից սթափվել ու վերածնունդ ապրել: Անհայրենիք հրեության «լացի պատը» հազարամյա տառապանքից երկնեց Սիոնի վերատիրման առաքյալներին: Մի՞թե հայրենի հողի վրա պետություն ունեցող հայությունը, 1915-ի ողբերգության խորապես ապրումից չի ծնի Արարատը վերատիրող իր հաղթական սերնդին: Այդ վրիժակ սերունդը պիտի հառնի ինքնիշխան, ազգային կենսածեւ ունեցող պետության պայմաններում, ուր նորահաս հայորդու համար 1915-ի հիշողությունը չի լինի միայն ողբերգականություն, այլև՝ իր ցեղակիցների արյան արդար հատուցման եւ կորսված Հայրենիքի վերատիրման պարտականություն:

Մենք ասում ենք. 1915-ը մեզ համար սոսկ ողբերգանք չէ, այլ՝ առաջին հերթին, Հայրենիքի տենչ: Հայրենատիրություն - ահա 1915-ի գերագույն խորհուրդը. կորսված Հայրենիքի վերատիրում - սա կտակն է նահատակների ու պարտքը ապրողների: Առանց ամբողջական Հայրենիքի, խաթարված է մեր Ցեղի եւությունը, վտանգված նրա գոյությունը, իսկ գաղթաշխարհի հայությունը դատապարտված է աստիճանական ծուլման:

Եվ մենք տեսնում ենք, որ Հայ ցեղը չի ամլացել, նա ցավից երկնել ու հայրենատերեր է ծնել: Արցախյան ցեղամարտը սկիզբն է 1915-ի խորհրդի ըմբռնման: Ո՛չ մի ներում թշնամուն՝ իր հանցանքների համար. այսպես էր նշանաբանում Արցախում կռվող հայորդին: Նա գիտեր այլևս, որ ոչ միայն պաշտպանում է իր ասրելու իրավունքը, այլև վերստին տեր է կանգնում նախնիների բնօրրանին՝ համոզված, որ դա սկիզբն է ամբողջական Հայրենիքի վերատիրման:

Այո՛, դա սկիզբն է հայրենատիրական մեր մաքառումի, ու մենք հավատում ենք, որ 1915-ի խորհուրդը մեզ կառաջնորդի Ավետյաց երկիր՝ կերտելու Ցեղի հավերժության ամրոցը - հզոր եւ ամբողջական Հայոց պետությունը:

ՄԱՅԻՍ 28-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Բոցավառված Ցեղի հավիտենական կրակով՝ հայերը իրենց կյանքի արյունի եւ արտասուքի ծովին մեջ հաղթահարեցին սարսափը, համակվեցան մեծագործության կամքով եւ ստեղծեցին հերոսական ողբերգություն մը»:

«Ցեղ եւ Հայրենիք»

1918թ. մայիս... Վեց դարերի խավարի վրա հառնում եր եռագույնը՝ խորհրդանշելով հայոց պետականության վերածնունդը:

1918-ի մայիսյան պատմական ճակատամարտերով հայությունը վերստին հաստատեց իր հարատեւելու կամքը՝ առաջ բերելով նույնիսկ թշնամու ակնածանքը:

Մայիս 28-ը սերունդներին փոխանցեց այն խորհուրդը, թե հաղթանակը վերջնական է, եթե մշտաբուն է ինքնիշխանության բնագոյը, եթե ներդաշնակ են գործում զենքն ու դիվանագիտությունը, եւ միասնական են ժողովուրդն ու իր ղեկավարությունը:

Ցավոք, այս խորհուրդները մենք հաճախ մոռացության ենք տալիս: Հայության մոտ թուլացել է ինքնիշխան լինելու, իր հաղթանակներին տեր կանգնելու կամքը: Արցախյան պատերազմում հաջողություններն ու մեր ժողովրդի այսօրվա պահվածքը աններդաշնակ են: Արտաքին սպառնալիքի հանդեպ մենք կարծես կորցրել ենք զգոնությունը՝ փոխարենը մեր եռանդը վատնելով դրսից հրահրվող ներքին պայքարներում:

Բայց արտաքին վտանգը եւ ազգի ճակատագրի խնդիրը, ինչպես 1918-ի մայիսին, կարող են համախմբել մեզ՝ անկախ քաղաքական համոզումներից, սոցիալական դիրքից ու աշխարհում գտնվելու վայրից:

Եվ նրանք, ովքեր մտահոգ են մեր ապագայով ու ելքեր են փնտրում, թո՛ղ վերստին հաղորդակցվեն Մայիս 28-ի խորհրդին եւ անկեղծորեն գործեն՝ մեր ներքին միությունը վերահաստատելու եւ հնարավոր արտաքին վտանգին հավաքականորեն դիմակայելու համար:

ՄԱՅԻՍ 9-Ի ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Պետք է հաստատել, որ թեև Երկրորդ աշխարհամարտը հայությանն իր ազգային խնդիրների իրականացման, հատկապես հայոց հայրենատիրության տեսակետից չտվեց ոչինչ և հերթական անգամ մեզ ապրեցրեց հիասթափության դառնությունը, այնուհանդերձ, Հայաստանի վերջին կտորն ու նրանում ամփոփված մի բուռ հայությունը խուսափեցին Առաջին աշխարհամարտի ողբերգության կրկնումից: Հենց այն հանգամանքը, որ ամբողջ երկրներ ավերող մահատարած պատերազմը չմտավ Հայաստան և հայությունը իր անվտանգության համար հատուցեց միայն մի քանի հարյուր հազար մարտնչած զոհերով, դրանով իսկ՝ Մայիս 9-ը արժանի է հիշատակության:

Պետք չէ նաև մոռանալ, որ հայության՝ նացիզմի հետ «համագործակցող» հատվածը ևս, արժանավորաբար լուծեց հայափրկումի խնդիրը: Առաջնորդվելով «զայլին կուշտ պահելու և գառնուկին փրկելու» սկզբունքով, հնարավոր եղավ գերմանական գրավման տարածքներում ապրող հարյուր հազարավոր հայությանը հեռու պահել հրեության ճակատագրից, իսկ համակենտրոնացման ճամբարներից՝ Հայկական լեգեոնի անվան տակ, ազատել տասնյակ հազարավոր հայ ռազմագերիների:

Եվ ամենակարեւորը...

Մայիս 9-ը արդեն ավանդականորեն նշվում է իբրև հայոց Շուշիի ազատագրության օր: Այս ազատագրումով՝ հայությունը սկզբնավորեց Հայրենի կորսված տարածքների վերատիրման գործը: Այո՛, Շուշիի հաղթանակը սկիզբն է մեր հայրենատիրական պայքարի, որը պիտի սրտեր վառի ու կամքեր փոթորկի, որպեսզի Կուրի աջ ափում ամուր հաստատված՝ վճռականորեն անցնենք միայն հայոց կամուրջները հանդուրժող Արաքսը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 21 - ԻՆՔՆԻՇԽԱՆ
ԱՊՐԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

«Հայ ժողովուրդը պահելու մասին մտածողը, պետք է մտածե հայու թվական, տնտեսական ու մտավորական ուժերու կենտրոնացման մասին, պետք է մտածե հայու ազգային զգացման ու գիտակցության ուժեղացման մասին. իսկ ասոնք հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կապրի հայ հոգիին մեջ իր անկախության համոզումը...»:

Լ. Շանթ

1991-ի սեպտեմբերով սկզբնավորվեց Հայոց նորագույն պետականությունը: Պատերազմ, արտագաղթ, օտար արժեքների ներխուժում, ժողովրդի բարոյալքում... բայց եւ՝ վերանվաճված Հայրենի հողակտոր, թուրքաթափված Հայաստան պետություն-այսպես նշանավորվեց մեր պետականության ծնունդը:

Այն, որ ազգերի հոգեվարքն սկսվում է նրանց՝ անկախ ապրելու կամքի թուլացմամբ, թե որեւէ ժողովրդի իրական անկախության նախապայմանը նրա հոգեբանական անկախությունն է՝ ինքնիշխան ապրելու իր ներքին մղումը, վաղուց ապացուցված է ազգերի պատմությամբ: Որ ոչ թե օտարի բարեհաճությամբ, այլ սեփական արյունով, արցունքով ու քրտինքով է կառուցվում անկախ պետականության շենքը, սա՛ էլ հաստատագրված է պատմությամբ՝ իբրեւ օրինաչափություն:

Սակայն ցավով պիտի արձանագրել, որ հայության հիմնական մասի մոտ անկախության կամ ինքնիշխանության գաղափարն առ այսօր չի դարձել հոգու պահանջ: Այս տարիներին մեր քաղաքական եւ մտավոր ընտրանին չարեց անհրաժեշտը՝ անկախության գաղափարը հայության համար իրապես կենսատու դարձնելու: Նույնիսկ վերջին տարիների մեր էական նվաճումները՝ Արցախի ազատագրում եւ Հայաստանի թուրքաթափում, մեզ համար ոգեւորության աղբյուր չդարձան:

Իսկ այս ընթացքում Հայաստանի կախվածությունը համաշխարհային տարաբնույթ կառույցներից մեծացավ այնքան, որ դարձավ սպառնալիք մեր ինքնիշխանությանը: Այսօր մեր «ընտրանու» հիմնական մասը մտածում է դրսից պարտադրված

կարծրատիպերով: Եթե այնտեղ ասում են «քաղաքացիական հասարակություն», այստեղ դա ընկալում են իբրև դրախտ: Եթե ասում են «գլոբալացում», մեզանում հասկանում են քաղաքակրթության վերջին նվաճում: Հաճախ մեզանում օտար կազմակերպությունների ներկայացուցիչներն ավելի յուրային են համարվում, քան հայրենի իշխանությունները, իսկ նրանց խորհուրդները գրեթե հայտնություն են մեր քաղաքական եւ պետական շատ այրերի համար:

Սակայն չնոռանանք, որ ազգի հավաքական կամքն ավելի զորեղ է, քան «նոր աշխարհակարգը» սահմանողների ցանկությունները: Հասկանանք, որ աշխարհում ոչ ոք չի փորձելու մեզ աջակցել, եթե առաջնորդվենք միայն հզորների կամքը կատարելու եւ նրանց «բարյացկամությունը» շահելու սկզբունքով եւ չունենանք սեփական ազատությունը եւ արժանապատվությունը պաշտպանելու վճռականություն:

Եվ ինքնիշխան ապրելու հրամայականից դրդված՝ մեր հավաքական գիտակցության մեջ պետք է վերստին բորբոքել ազգային անկախության գաղափարը եւ ամրագրել, թե իրական անկախությունը մեզ դեռ հարկ է նվաճել. նվաճել քայլ առ քայլ՝ մեր Հավերժի ճանապարհին օտարից կախվածություններն անընդհատ հաղթահարելով:

Եվ սա կարող են անել միայն մարդիկ, ովքեր ազգային ինքնահարգանքի զգացում ու հայության ապագայի նկատմամբ անբեկանելի հավատ ունեն:

Իսկ նրանց, ովքեր իրենց բարոյական եւ հոգեւոր տկարության բերումով, մեր այսօրվա դժվարին վիճակի համար պատճառ են տեսնում անկախությունը եւ աղմկում, թե մեզ պետք չէ Անկախ Հայաստան, կպատասխանենք Նժդեհի հանդիմանական խոսքերով՝ ժամանակին ուղղված նմաններին. *«Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ հոգով թզուկներիդ, դարձնե կատարյալ մարդ եւ Հայ, արժանի անկախության...»:*

Հավելված 2

Յ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ԵՎ ԱՆԵԼԻՔԻ ՇՈՒՐՁ*

Ի սկզբանե փաստենք, որ մեզ համար Յ.3.Գ. խնդիրը կարելուովում է նրա համահայկական եւ աշխարհասփյուռ կառույց լինելու, որով, իր նպաստավոր գործունեության դեպքում՝ ազգովի շահելու, իսկ ձախողելու պարագայում՝ ազգովի տուժելու հանգամանքով: Դաշնակցությունն ունի հմայք, առասպել եւ առաքելություն, բաներ, որոնք հատուկ են թերեւս միայն Հայ Եկեղեցուն, եւ որոնց բացակայության դեպքում այն դառնում է շարքային կազմակերպություն:

Ո՞րն է Յ.3.Գ. հմայքը: Որեւէ գաղափարական դաշնակցական կիսատատի, որ Դաշնակցության ուժն ու հմայքը իր Ծրագրի, Կանոնագրի կամ կազմակերպական կառույցի մեջ չէ, այլ՝ որոշակի ավանդույթներից ձեւավորված բարոյականի, որը հայտնի է Դաշնակցականություն անվամբ: Իսկ Դաշնակցականություն ասել է՝ ա) նվիրումի եւ նահատակության ոգի, բ) հեղափոխականություն, գ) մարտական եւ կազմակերպական կարգապահություն, միաժամանակ: Ահա այն բարոյականը, որը հայության հարյուրամյա կազմակերպությունը դարձնում է հմայքոտ: Այդ հմայքը պե՛տք է պահել:

Դաշնակցությունն ունի առասպել, որը ձեւավորվել է իր փոթորկոտ պատմությամբ, նվիրական հերոսներով եւ տասնամյակներ կենսունակ մնալու հանգամանքով: Առասպելը պե՛տք է փայփայել:

Դաշնակցությունն ունի առաքելություն: Նա պատմական ասպարեզ իջավ արեւմտահայոց ազատագրության դրոշով, բայց պատմությունը մեզ հեզմեց եւ մատուցեց սփյուռք: Դաշնակցության հիմնական առաքելությունը մնում է Սփյուռքի հայորեն պահպանունը եւ նրա Դարձը Արեւմտահայաստան: Այս առաքելության կայացումն անցնում է Հայկական պետության ինքնիշխանացման, Ջավախքի եւ Նախիջեւանի ազատագրման ճանապարհով:

Ի դեպ, Հայկական պետության ներսում Դաշնակցությունը պետք է գործի առավելապես իբրեւ բարոյական ուժ. նա պետք չէ հրապուրվի գործադիր իշխանության լծակներով՝

ա) այսօրվա ամիսուսափելի մրոտումից զերծ մնալու, որով՝ իր հնայքն ու առասպելը պահելու,

բ) դրսի ճնշումներից պետությանն, ըստ հնարավորի, ապահովագրելու,

գ) պետության հետ համագործակցությունը քողարկելու համար**:

Միաժամանակ, նա պետք է ունենա տեղեր խորհրդարանում՝ ընտրված համամասնական կարգով, որոնց միջոցով զգալ տա իր ներկայության մասին երկրում: Իսկ Ջավախքի ու Նախիջեւանի ազատագրման հարցերում Յ.Յ.Դ.-ն պետք է լինի հիմնական մուկետիկն ու գործադրողը:

* * *

Յ.Յ.Դ. այսօրվա ճգնաժամն, անշուշտ, նաեւ համազգային ընդհանուր ճգնաժամի արդյունք է, բայց եւ միանշանակ է, որ այդ ճգնաժամը պետք է հաղթահարվի նախ համահայկական կառույցների ներքին բարենորոգման շնորհիվ:

Հնարավոր է Յ.Յ.Դ. ներսում բարենորոգում: Ինչ-ինչ հիմնավորումներով՝ ո՛չ ասողները ակամա մերժում են բարեփոխման հնարավորությունը, ասենք, նաեւ Պետության եւ Եկեղեցու դեպքում: Հնարավորությունը չբացառողները կուսակցությունից ակնկալում են ինքնանորոգում՝ վերագնահատման ճանապարհով. այլապես, առկա ճգնաժամի շարունակումը կազմակերպության համար կլինի ինքնակործանում:

Մեր կարծիքով, Յ.Յ.Դ. ինքնանորոգման համար անհրաժեշտ են՝

ա) Կուսակցության ներսում պատմականորեն առաջացած եւ իրենց ժամանակների կուսակցական չափանիշներով գնահատված մի շարք շարժումների (Մարտկոցական, Ցեղակրոն, Տարոնական եւն) վերագնահատում՝ դրանք ներկայացնելով իբրեւ հիմնականում առարկայական գործոններով թելադրված՝ ներկուսակցական պայքարի օրինաչափ դրսեւորումներ: 1970-80-ականների Սփյուռքի զինյալ-ազատագրական պայքարի՝ համահայկական չափանիշներով վերարժեւորում:

բ) Մի շարք վերկուսակցականացած եւ հանիրավի մոռացության մատնված գործիչների (Շահան Նաթալի, Հայկ Ասատրյան եւն) նորովի արժեւորում: Այս առումով խիստ կարեւոր է

Դաշնակցություն-Նժդեհ՝ առաջին հայացքից կնճռոտ, բայց լիովին հաղթահարելի խնդրի լուսաբանումը:

Ի դեպ, այս ամենը պետք է անել առանց անհարկի քողարկումների, տեղ չտալու համար հակադաշնակցական շահարկումների:

գ) Յ.Յ.Դ. գաղափարաբանության ազգայնականացում, այսինքն՝ ազգային եւ ընկերվարական դրույթների հաշվեկշռի փոփոխում՝ ի նպաստ առաջինի:

դ) Կուսակցության հայաստանյան գործունեության եւ Ազգային գաղափարախոսության խնդրում՝ իր մենաշնորհ պահվածքի արմատական վերանայում՝ վերը շարադրված սկզբունքների համաձայն:

Ինչեւէ: Մենք ընդամենը ակնարկով փորձեցինք վերափնաստավորել Դաշնակցության դերն ու անելիքը մոտակա տարիներին: Մենք տեսնում ենք Յ.Յ.Դ. համահայկական արժեքը, եւ ուզում ենք, որ նա այդպիսին մնա նաեւ XXI դարում: Բայց կուսակցության պատմության էջերը թերթելով, մենք այս հարյուրամյակում կուզեինք տեսնել ո՛չ թե երիտթուրքերից խաբված կամ եվրասոցիալիզմ տենչող, այլ՝ իր ներսում Ցեղակրոն, Տարոնական շարժումներ ծնելու (նաեւ պահպանելու) ընդունակ Դաշնակցություն. ո՛չ թե Սովսես Տեր-Գալուստյանների ու Ջորջ Մարտիկյանների, այլ՝ Նաթալիների ու Նժդեհների Դաշնակցություն:

Եվ այդ տեսլականով մենք այսօր ուզում ենք զգալ Յ.Յ.Դ. ինքնանորոգման ճիգը եւ Նժդեհի լավատեսությամբ ասել. *«Դեռ իր լինելիության մեջ է Դաշնակցությունը: Նա դեռ չի ասել իր վերջին խոսքը»:*

* Հայաստանի քաղաքական դաշտի առումով՝ մենք հատկապես անդրադառնում ենք Յ.Յ.Դ.-ին, քանզի հայ իրականության մեջ տարիներ շարունակ հենց սույն քաղաքական ուժն է ազգային գաղափարախոսության հարցում ցուցաբերում ամենահավակնոտ, մենաշնորհ մոտեցումներ:

Ի դեպ, մեր համոզմամբ, Հայաստանում եւ, առհասարակ, հայկական միջավայրում գործող եւ ազգային ծրագրեր հռչակած

ցանկացած քաղաքական ուժի գաղափարախոսությունն պիտի ածանցվի Ազգային գաղափարախոսությունից: Իսկ առանձնահատկություններ ու տարբերություններ կարող են լինել Ազգային գաղափարախոսության առաջադրած խնդիրները լուծելու նոտեցումների մեջ միայն:

** Մեր գնահատմամբ, Պետություն-Դաշնակցություն հարաբերությունները պետք է լինեն Էջմիածին-Անթիլիաս ենթադրվելիք հարաբերությունների կարգի: Իհարկե, մեր եկեղեցիների պառակտվածությունը ազգային ողբերգություն է, բայց պատմական այս փուլում, հատկապես քաղաքական նկատառումներով, առավել կարելու է նրանց ներքին միությունը՝ արտաքին բաժանումով (օրինակ՝ Անթիլիասի եկեղեցին պետք է միանշանակ դեմ լինի Էկումենիստական շարժմանը, Արեւմտահայաստանի նկատմամբ լինի առավել պահանջատեր եւն): Այդպես է նաեւ Պետություն-Յ.Յ.Դ. հարաբերությունների պարագայում. Պետության համեմատ, Յ.Յ.Դ.-ն առավել կոշտ եւ արմատական դիրքորոշում պետք է ցուցաբերի բոլոր կարգի արտաքին եւ ներքին կարեւորության խնդիրներում (օրինակ՝ Արցախի շուրջ տարվող բանակցություններում՝ տարածքային զիջումների բացառում, Արեւմուտքի՝ մեզ պարտադրած «արժեքների» կոշտ դիմակայում եւն): Բայց մենք արդեն շոշափում ենք ազգային անվտանգության խնդիրների լուրտը, որոնց մասին կխոսենք այլ առիթով:

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄՆԵՐ

1915. ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Հավակնություն չունենալով պատմական համակողմանի վերլուծության, ինչպես եւ ուշացած մարզարեությունների՝ հպանցիկ անդրադառնանք դարասկզբի մեր ողբերգությանը՝ «1915»-ին, եւ նրա հետ կապված իրադարձություններին, հատկապես, որ այսօր էլ լսում ենք ավանդական արդարացումները՝ իսկ ի՞նչ կարող էինք անել. մեզ խաբեցին, դավաճանեցին...

Դեռ 1879 թ., Ռաֆֆին՝ գաղափարախոս-գրողը, ազգային այն երեւելիներին, որոնք մանկամտորեն հավատակից Եվրոպաներից ու Ռուսիաներից էին ակնկալում Արեւելյան խնդրի բարենպաստ վերջը, ինչպես նաեւ նրանց, որ քարոզում էին անշարժություն եւ հնազանդություն, զգուշացնում էր. *«Արեւելյան խնդիրը միշտ կա ու կմնա, եւ տաճկաստանցի հայը պետք է նախապատրաստվի օգուտ քաղել հարմար դեպքից, երբ մյուս անգամ կհուզվի այն: Իսկ եթե նա միշտ անպատրաստ մնա՞: Այն ժամանակ դժբախտ Հայաստանը, այդ Եվրոպայի եւ Ասիայի պատմական կանուրջը, ազգերի անցուդարձի ներքո կտրորվի եւ կոչնչանա...»:*

Ցավոք, հայությունը մնաց անպատրաստ ու անկազմակերպ, եւ արդյունքում՝ Հայրենիքի մեծ մասի կորուստ, 1,5 մլն կրավորական զոհեր...

19-րդ դարի վերջի Հայ ազատամարտը (այն ժամանակվա եզրաբանությամբ՝ թուրքահայ հեղափոխությունը) նախապատրաստված չէր գաղափարաբանորեն ու կազմակերպորեն, եւ արեւմտահայությունը հոգեբանորեն պատրաստ չէր կռվելու: Եթե մինչ այդ, ներքին՝ դավանաբանական զգվռտոցում «վարժված» հայոց հոգեւոր այրերը, իրենց աղերսագրերով, «թղթե շերեփը»

ծեռքներին, արդարություն էին մուրում եվրոպական մայրաքաղաքների կառավարական նախասենյակներում (Երվանդ Օտյանը մեզ դիպուկ բնորոշեց՝ «նախասենյակի ազգ»), եւ մեր թշվառ վիճակի ներկայացմամբ՝ փորձում նրանց գութը հայցել, ապա արեւմտահայ նոր Ազատամարտի ղեկավարները՝ հիմնականում արեւելահայեր, հայության իրական հնարավորություններին անտեղյակ, ոգելորված եվրոպական ժողովուրդների ազատագրական կռիվներով, հաճախ էլ միջազգայնականության տենդով վարակված, այբուբեն չիմացող մեր ժողովրդին ընկերվարություն էին քարոզում եւ հնչակ-դաշնակ կուսակցականություն խաղում:

Արեւմտահայ ազատամարտն անխուսափելի էր, անհրաժեշտություն՝ գոյության պայքարի եւ տարրական ինքնահարգանքի թելադրումով պարտադրված, բայց ճիշտ չէին ընտրված պայքարի միջոցներն ու զենքերը, հստակ չէր նպատակը: Մի նպատակ, որ հետապնդում էր Օսմանյան «հայրենիքում» հայերի ու թուրքերի ազատություն, նրանց համերաշխ դրացիություն, ի սկզբանե դատապարտված էր անհաջողության, քանզի գոյության կռիվ տրամաբանությունը պահանջում էր, որ այդ հողի վրա կան բնիկ հայերն ապրեն, կան՝ եկվոր թուրքերը: Թուրքերը լավ էին հասկացել այս եւ գործեցին հայերին տեղահանելու ու բնաջնջելու հաստատականությամբ: Իսկ մենք որդեգրեցինք հայդուկային անջատ կռիվները (այն ժամանակ էլ կային լուսավոր անհատներ, որոնք համընդհանուր ապստամբության նախապատրաստության կոչ էին անում, եւ դրանց շարքում հատկապես պետք է հիշել Յրայրին), սուլթանականության դեմ պայքարը, անհատ թուրքերի ահաբեկումները: Բայց երբեք թուրք ազգի:

Մեզ չսթափեցրեց նույնիսկ 1895-96թթ. 300 հազար հայության կոտորածը: Ո՞ւմ մեղադրենք, երբ այս անգամ էլ չհասկացանք, թե ով է թուրքը:

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո, սուլթանի դեմ մաքառող հայ հեղափոխականները, ինչ-ինչ պարտավորություններից մղված, սկսեցին պայքարել նաեւ ցարի դեմ: Արեւմտահայաստանում պայքարը լուրջ հիմքերի վրա չդրած՝ այն ծավալեցինք նաեւ Կովկասում. սուլթանի դեմ կռվել չկարողանալով՝ ցարին էլ մարտահրավեր նետեցինք: Այս գործելակերպի դեմ դուրս եկած միհրանականները հաջողություն չունեցան՝ որակվելով իբրեւ անջատական-պառակտիչներ եւ ցարիզմի գործակալներ:

Ո՞ւն մեղադրենք, երբ հայության քաղաքական ղեկավարությունը, 1908-ի Սահմանադրության օրերին, ինքնապահպանման ամենատարրական բնագոյը կորցրած, զինաթափում էր հայրուկային խմբերը. ղեկավարություն, որ համամարդկային ցնորքներով տարված, կամ միամտորեն խաբված, վերագոյային օթյակներում տեղ էր զբաղեցնում երիտթուրքերի կողքին եւ տիեզերական եղբայրություն տենչում, որ չանսալով իր բնագոյին, «ուղեղը սրտում տեղավորած», Գր. Օտյանից մինչեւ Ակնունի ու Ջարդարյան, ոգեւորված, օսմանցիություն էր քարոզում եւ թուրքերի քաղաքակրթման սին հույսը փայփայում. ղեկավարություն, որ հայերին ազգովին բնաջնջելու՝ թուրքերի վճռականությանը պատասխանում էր մարդասիրական «մեծահոգությամբ» եւ բավարարվում անհատների ու վարչակարգի դեմ պայքարով... Այդպիսի ղեկավարություն ունեցող ժողովուրդը ի՞նքն էր մեղավոր եւ, որպէս մեղքի արդյունք՝ պիտի կոտորվեր: Մի ժողովուրդ, որ չնայած իր լավագույն զավակների հորդորներին ու զգուշացումներին, համառորեն չզինվեց ու չնախապատրաստվեց վճռական կռիւի, չէր կարող խուսափել մորթվելուց:

Ո՞ւն մեղադրենք, որ դասեր չառանք նաեւ Ադանայի ջարդերից. երեւի ուրախացանք, որ մի քանի սեխագլխի կախեցին...

Մինչդեռ թուրքերը, որոնք հայ-թուրք բարեկամության խաղը (իմա՝ օսմանցիությունը) դիտում էին որպէս քողարկված հանգրվան իրենց համաթուրանական նպատակների համար (իսկ հայ գործիչները, հավանաբար, դրա անվճար լինելու հավաստիացումներն ստանում էին որմնադրական օթյակների ղեկավարներից), գիտեին, որ իրենց կյանքի համար անհրաժեշտ է հայության մահը:

Այս համոզումով գործեցին թուրքերը եւ հաջողությամբ իրականացրին ազգակերտումի գործը: Չմոռացան, անշուշտ, առաջին հերթին վերացնել այն հայ «եղբայրներին», որոնց հետ մինչ այդ սուլթանին տապալելու ձեռնարկն էին ծրագրել «Օսմանյան Մեծ Արեւելք» օթյակում, եւ որոնք, հավանաբար, ինչ-որ բան գիտեին: Իսկ Ջոհրայի պէս միամիտը, որ 1909-ի Յամիդյան հեղաշրջման օրերին իր բնակարանում թաքցրեց Խալիլին, իրեն ձերբակալող ոստիկաններին թող տարակուսանքով հարցներ՝ արդո՞ք իր «եղբայր» երիտթուրք պարագլուխները տեղյակ են...

Պայթեց Առաջին աշխարհամարտը, որի փորձությանը չդիմացանք, քանզի չէինք նախապատրաստվել: Ազգովին համախմբվելու եւ ինքնապաշտպանություն կազմակերպելու անընդունակ գտնվեցինք, որով՝ արիավիրքին դիմակայելու անկարող եղանք: Դաշնակցության 1914թ. Կարինի ժողովը բավարարվեց միայն «օրինապահության» որոշումով՝ գրեթե բթացնելով ինքնապահպանման մեր թուլացած բնագոր: Հնչակյանները, նաեւ իրենց անշնորհքությամբ, ձախողեցին 1913-ին Կոնստանցայի ժողովում ծրագրած նախահարձակ գործողությունը, որի արդյունքում՝ միայն 20 հնչակյանների հերոսական մահը բավարար չեղավ: Իսկ Հայկական լեգեոնը եւ կամավորական գնդերը, իրենց հերոսապատումով հանդերձ, ըստ էության, գործիք դարձան օտար կառավարությունների ձեռքին...

Արդարորեն՝ ջարդից չխուսափեցին նաեւ փրկագնին ապավինող հայանուն մեծահարուստները, որոնցից շատերը, ի դեպ, «Իթթիհատ»-ի անդամ էին եւ նյութապես էականորեն նպաստել էին այդ կուսակցության վերելքին, փոխարենը՝ գրոշներ զլանալով Հայ հեղափոխության գործին:

Եվ 1915-ին եղավ այն, ինչ այդպիսի դեպքերում լինում է... Դառնորեն, բայց եւ ճշմարտորեն է ասված. *«Ձու՞րկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից՝ նշանակում է նա զուրկ է ամեն առաքինությունից, զուրկ գոյության բարոյական իրավունքից»* (Գ. Նժդեհ):

Հայությունը դաժանորեն պարտվեց եւ, որ կրկնակի աններելի է, պարտվեց ի՛ր հողի վրա, պարտվեց ո՛չ հերոսաբար, այլ՝ կրավորաբար: Կրավորական զոհերի այն ստվար քանակը, որ տվեց մեր ժողովուրդը 1915-ին, եթե նրա զոհն փոքր մասը նահատակվեր մարտադաշտերում, հայությունն ազատագրված կլիներ:

Չնայած մի քանի հերոսամարտերի (որոնք, վերջին հաշվով հայության պատիվը փրկեցին՝ Հայրենիքի կորստյան հաշվին), 1915-ը հիմնականում սպանդ էր: Անշուշտ, հիանալ եւ հպարտանալ կարելի է Ուրֆայի դյուցազնամարտով, բայց եւ չես կարող չամաչել՝ իմանալով, թե ինչպէս են մի քանի զինված ասկարներ հազարավոր հայերի թալանել ու կոտորել: Չես կարող չնախատել հոգեւոր մեր դաստիարակիչներին, երբ գիտենում ես, որ հեզաբար մարագ քշված եւ կրակի տրված հայ բազմությունը,

աղոթող տերտերի փեշերից բռնած, աղերսում էր, որ իրենց էլ երկինք տանի:

Տեղին է հիշել կիլիկիահայերի հոգեւոր առաջնորդ Սահակ Բ. Խապայան կաթողիկոսի «անշնորհակալ» գործը, որը, հատուկ կոնդակով, տեղի հայերին «կատարյալ հնազանդության եւ օրինապահության» կոչ արեց, որով եւ՝ նրանց մեծ մասին դատապարտեց բռնազաղթի եւ տանջամահության:

Կան միամիտներ (այն ժամանակ էլ կային), որոնք պնդում են, թե չեզոքություն պահելու եւ Օսմանյան պետության հանդեպ օրինապահ լինելու դեպքում, կիսուսափեինք ջարդից*... Լուրջ չէ՝ թուրքական լծի տակ հարյուրամյակներով տառապող ժողովրդից չեզոքություն պահանջելը. հայությունը հոգեբանորեն չէր կարող անտարբեր մնալ եւ ըմբոստության փորձ չանել: Իսկ թուրքերը մեր չեզոքության համար երախտապարտ պիտի չլինեին, քանզի կոտորում էին, որ իրենք ապրեն եւ հիմար չէին, որ պատերազմի առիթը բաց թողնեին:

Մեծ եղեռնից փրկվածները խոստովանում էին, որ հայերս չենք ճանաչել թուրքերին, թեեւ հարյուրամյակներ շարունակ ապրել ենք նրանց հետ: Սովետական ժամանակաշրջանը, ինչպես եւ 1988-ի շարժման սկզբնական տարիները վկայում են, որ մենք Դեր-Չորից հետո էլ չճանաչեցինք թուրքերին:

Տա Աստված՝ հետայսու լավ ճանաչենք... Եվ ո՛չ միայն նրանց:

* Վերջին տարիներին մեր մամուլում երեւացին գրություններ, թե դարասկզբի «հեթանոսական շարժումն» էր (նկատի է առնվում Վարուժանի, Սիրունու, Շանթի, Ջարդարյանի եւ այլոց հեթանոսամետ տրամադրությունները) պատճառը, որ չհանդուրժեց Աստված ու պատժեց մեզ... Ո՛չ, Ցեղի աստվածներն էին խռովել մեզանից, քանզի նրանց զորությով չսնուցեցինք մեր թուլությունը, եւ օտար աստվածները պատժեցին մեր տկարությունը...

1918 - 1921. ՎԵՐԱԳՆԱՅԱՏՈՒՄՆԵՐ

Հայաստանի առաջին Հանրապետության պարտությունը
եւ Լեռնահայաստանի հաղթանակը

*«Ժողովուրդների պատմությունն այլ բան չէ,
քան իրենց գոյամարտի, իրենց հաղթությունների
եւ պարտությունների պատմությունը»:*

Գարեգին Նժդեհ

*Ընդհանուր հայացք զցելով 1918-21 թվականների հայտնի
իրադարձություններին եւ վերապրելով հայոց ողբերգականն ու
հերոսականը՝ փորձենք հասկանալ այն ժամանակվա մեր պար-
տությունների եւ հաղթանակների պատճառները՝ գնահատելու
համար մեր այսօրը:*

1918-ի մայիս 28... Վեց դարերի խավարի վրա հառնում էր
Եռագույնը՝ խորհրդանշելով Հայկական պետականության վերա-
ծնունդը:

Իսկ մինչ այդ տեղի էին ունեցել Մայիսյան պատմական
ճակատամարտերը (1), եւ վերջնական բնաջնջման եզրին
կանգնած հայությունը ոչ միայն հերոսաբար դիմադրել էր, այլեւ
շանթոլ իր բազուկն էր իջեցրել ասկյարի սեխազլխին՝ նրան
մատնելով փախուստի:

Հայ զենքը ցնծում էր... Թուրքերն առաջարկում էին
հաշտություն:

Բայց զենքի փառքը խամրում է Բաթումի դիվանագիտա-
կան սեղանների վրա: Թեեւ Հայաստանում զորքը պահանջում էր
մերժել հաշտությունը եւ ժողովուրդն էլ կողմ էր կռիվը շարու-
նակելուն, Թիֆլիսի հայ քաղաքագետներից բաղկացած պատվի-
րակությունը, որ ղեկավարվում էր Կովկասի մայրաքաղաքում
նստած Հայ Ազգային Խորհրդի կողմից, անտեղյակ ռազմաճա-
կատի կացությանը, իր հաղթանակած սվինի փոխարեն, թշնամու
ողորմածությամբ էր գծում Հայոց պետության սահմանները, եւ

հաշտագիրն ստորագրելուց հետո միայն, Վեհիբ փառայից իմանում, որ հայ զորքը կռվել է հերոսաբար:

- Ահա՛ թե ինչ չարիքներ են հասնում մի ազգի, որի քաղաքականությունը վարվում է սեփական հայրենիքից դուրս,- գրում է այս առիթով Հայկ Ասատրյանը:

Բաթումի դաշնագրով, Թուրքիան առաջինն էր ճանաչում Հայաստանի անկախությունը. անկախություն, որ պահանջում էին նաև իրենք՝ թուրքերը (2):

Անկախություն, որի փաստի առջեւ էր կանգնել Հայաստանը՝ Սեյմի լուծարումով, կանգնել ակամայից, շվարած: Շվարել էր, քանզի թե՛ հոգեբանորեն, թե՛ քաղաքականորեն պատրաստ չէր դրան: Այս առումով, բավական անաչառ են Ռուբեն Դարբինյանի վերագնահատումները.

«Մեր քաղաքական մտքի ապիկարության ամենից կարկառուն ապացույցը կրճա նկատվիլ Հայաստանի անկախության գաղափարի յուրացման տարապայման եւ տարօրինակ ուշացումը: Այն ժամանակ, երբ մեր կովկասյան բախտակից հարեւան ազգերը, համաշխարհային պատերազմի բռնկումեն ի վեր, գիտակցաբար կպատրաստվեին իրենց երկրների քաղաքականության անկախության համար, ու երբ այդ բաղձալի նպատակի իրագործման համար ստեղծվեցին նպաստավոր պայմաններ, հաստատուն եւ վճռական քայլերով դիմեցին դեպի իրենց կանխատեսած նպատակը,- մենք հայերս, առանց կուսակցական խտրության, հանկարծակիի եկանք եւ՝ միայն ճարահատյալ համակերպեցանք մեր կամքեն անկախ կատարված փաստին, Հայաստանի անկախության:

Եվ հայկական անկախ պետության մեջ իսկ, դեռ երկար ժամանակ չկարողացանք մարտել մեր անկախությունը եւ դարձնել այն մեր գերագույն քաղաքական նպատակը... Իսկ մեր ժողովրդի լայն խավերը յուրացրեցին ու զնահատեցին այդ գաղափարը միայն այն ժամանակ, երբ մենք կորցրինք մեր անկախությունը»:

Հայաստանի անկախությունը հռչակված էր, բայց դեռ մի ամսից ավելի էլ պետք էր, որ Հայաստանի անդրանիկ կառավարությունն ու Հայ Ազգային խորհուրդը բարեհաճեին Թիֆլիսից ժամանել Երեւան: Անկախ ամեն ինչից, աստիճանաբար ձեւավորվում էր պետական կյանքը, ու այդ գործում՝ ի նշան երախտագիտության, հատկապես պետք է հիշատակել Արամին ու

Դրոյին, որոնք «գլխավոր կերտիչն ու ոգին էին նորածին պետության»:

Բաթումի հաշտության դաշնագիրը, ի միջի այլոց, պարտավորեցնում էր Հայաստանին Բաքվից հեռացնել այնտեղ գտնվող հայկական ուժերը: Կատարե՞ց Հայաստանն իր պարտավորությունը, թե՞ ոչ, չգիտենք, բայց 1918թ. սեպտեմբերին Բաքվում 30 հազար հայեր մորթվեցին, որը թերեւս հատուցումն էր տեղի Հայ. Ազգ. Խորհրդի մեծահոգության՝ դեպի «անմեղ» թուրք բնակչությունը, որ նույն տարվա մարտին տասնյակ հազարով լցված էր (իրականում պատսպարված Հայ. Ազգ. Խորհրդի ջանքերով) հայկական զորանոցների մեջ: - *Եվ ո՞վ ոճրագործ ջենտլմենություն,- կբացականչեր հայոց Նեմեսիսը,- դուռներուն վրա պահակ դրած էինք, որպեսզի քառսային տակնուվրայության այդ օրերուն, հայ արդարագույն վրեժսնդրութենն ապահով մնար հայությունը կոտորող այս զանգվածը:*

Նույն «մեծահոգությունն» ենք տեսնում նաեւ Հայաստանում՝ այստեղի թաթար-թուրքերի եւ վխտացող բուլշեւիկների նկատմամբ:

1918թ. հոկտ. 30-ի Մուղրոսի զինադադարով՝ թուրքական զորքերի նահանջից հետո, Հայաստանը կարող եւ պարտավոր էր մաքրել վերագրավված տարածքները թուրքացեղ տարրերից: Բայց չարեց, քանզի չէր սերտել ազգակերտման ու հայրենակերտման պահանջները, իսկ թուրքերն ամեն կերպ հաջողացրեցին Նախիջեւանի հարավի մաքրագործունը հայերից: Հավանաբար վախենում էինք, որ «քաղաքակիրթ» աշխարհը կդատապարտի. բայց չէ՞ որ թուրքերը դրանից չէին վախենում...

- *Մեկ անգամ միայն հայ-թուրք գոյամարտին մեջ հայը ցույց տվավ ազգ կազմելու իրական զենքը,-* հետագայում գրում է Շահան Նաթալին՝ նկատի ունենալով Ջանգիբասարի մաքրագործունը 1920-ի ամռանը,- *եւ միայն անոր արդյունք է այսօրվան հայկական մեծամասնությունը հողամասի մը վրա, որ ... Հայաստան է այսօր եւ հայությունը՝ ազգություն:*

Իսկ Հայաստանի խորհրդարանում, ամոթ չլինի ասել, ոմանք բողոքում էին «թուրք խաղաղ ժողովրդի» կոտորածի դեմ: Իսկ այդ թուրք ժողովուրդը վճռականորեն, Հայաստան պետության մեջ պետություն էր ստեղծում. Արաքսի երկայնքով, իր մեջ ընդգրկելով Շարուրի, Ջանգի եւ Վեդի Բասարների շրջանները, ձեւավորվում էր այսպես կոչված «Արաքսյան հանրապետություն»:

նը»՝ իր սեփական զորքով եւ օրենքներով: Եվ այս ամենը հանդուրժվում էր...

Հանցագործ բարեհոգություն էր դրսևորվում նաեւ բուլշեւիկների ու նրանց կողմից տարվող հակապետական (իմա՝ հակահայկական) քարոզչության նկատմամբ: Այդ քարոզչության հաջողությունը, որ բարոյալքեց բանակն ու ժողովրդին, հետեւանք էր դեպի բուլշեւիկները՝ իշխանությունների խիստ հանդուրժողական եւ ներողամիտ կեցվածքի: Նույնիսկ կառավարության մեջ կային նարդիկ, որոնք տարակուսում էին, թե «ինչպե՞ս ձերբակալել մեզ պես ընկերվարական կոմունիստներին», իսկ խորհրդարանի էսէռ պատգամավորները բողոքում էին մի քանի բուլշեւիկ ձերբակալելու «ապօրինի» որոշման դեմ: Հայաստանը դեմոկրատակա՞ն երկիր էր...

Այնքան միամիտ ու անհեռատես էին Հայաստանի վարիչները, որ ամենուրեք հալածվող բուլշեւիկներին «գրկաբաց» ընդունեցին՝ թույլ տալով նրանց ապրել եւ աշխատել Հայաստանում: Իսկ վերջիններս էլ, իհարկե, խոսք տվեցին հակապետական, դավադրական քայլեր չանել: Սակայն... տրամաբանական էր, որ պիտի անեին: 1920 թվականի մայիսի առաջին օրերին, մի քանի տասնյակ բուլշեւիկներ կարողացան կազմակերպել (առանց դրսի օժանդակության) Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանի գրավումն ու տիրանալ գրահակիր գնացքին... Այդքան թույլ ու անտեղյակ էր մեր կառավարությունը:

Թեեւ ապստամբությունը ճնշվեց, սակայն այն թողեց մի շարք հետեւանքներ, որոնցից ամենաճակատագրականը եղավ հայկական բանակի (նաեւ ժողովրդի) բարոյալքումն ու քայքայումը: Այո՛, դավադրությունը ճնշվեց, բայց չէ՞ որ կառավարությունը կարող էր նախօրոք դրա դեմն առնել: Չէ՞ որ մինչեւ 1920թ. մայիսը, «Սպարտակյանները» հասցրել էին արդեն հակապետական թռուցիկներ փակցնել պատերին, որի մասին կառավարությունը տեղյակ էր, բայց չէր դիմում վճռական միջոցների... Խոսքի ազատութիւն էր:

Արդյունքում, պետական հստակ ծրագրերի չգոյությունն ու երեւույթները կամխատեսելու ընդունակ պետական այրերի գրեթե բացակայությունը, վերջին հաշվով, հանգեցրին նրան, որ պետականության լիարժեք կայացում այդպես էլ տեղի չունեցավ: Վարչապետ Հովհաննես Քաջազունին հետագայում արդարորեն խոստովանում է. *«Եթե ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախա-*

տեսել, ապա ուրեմն մենք միանգամայն անպետք կառավարիչներ ենք եղել, որովհետեւ հենց այդ նախատեսելու ընդունակությունն է, որ չենք ունեցել բնավ... Ապա չենք ունեցել որոշ ու հստակ գիտակցություն մեր անելիքի մասին, չենք ունեցել մի ղեկավարող սկզբունք ու տեւողական, հետեւողական սիստեմ, գործել ենք կարծես հանկարծակի ու պատահական ներշնչումների տակ... Չենք հասկացել դժվարությունների մեծությունը, արհամարհել ենք հակառակ ուժերը եւ թեթեւամտության աստիճանի անփոյթ ենք եղել մեզ սպառնացող վտանգների հանդեպ... Չենք կարողացել տարբերել պետությունը կուսակցությունից ու կուսակցական մտայնություն ենք մտցրել պետական կյանքի մեջ»:

Մինչ Փարիզում միեւնույն դատը պաշտպանող երկու առանձին, անհաշտ պատվիրակություններ վիճում էին Յայաստանի սահմանների մեծության շուրջ եւ ցնծում էին թղթի վրա արձանագրված Սեւրի՝ ոչ մի իրական արժեք չունեցող բարոյական հատուցմամբ, մեր թիկունքում կնքված թուրք-բոլշեւիկյան դաշինքը գալիս էր արագացնելու Յայաստանի անկումը:

Արեւմուտքի նկատմամբ չարդարացված նվիրումով այն աստիճան էր կուրացած կառավարությունը, որ միամտաբար հավատում էր, թե ինչ-որ «յանկի» կարող է Յայաստանի համար կայուն եւ իրական սահմաններ գծել: Եվ պիտի այպանել այն ղեկավար հայերին, որոնք ընդունակ չէղան ըմբռնելու միլիական շարժման թափը, արհամարհեցին այն, եւ, հետեւելով եվրոպական գործիչներին, Քեմալը հասարակ ավազակ կարծեցին:

1920թ. սեպտեմբերին սկսվեց Յայ-թուրքական պատերազմը: Այն անխուսափելի էր, բնական ընթացք գոյության պայքարի՝ մղվող միմյանց էությանը հակոտնյա երկու ցեղերի միջեւ: Այս առումով, սխալ պիտի համարել «հետադարձ մարգարեությանը» արված այն պնդումները, թե նախապես Քեմալի հետ բարեկամանալով՝ Յայաստանը կխուսափեր պատերազմից: Ի՞նչ է, Քեմալը պիտի սպասեր, թե երբ են հայերը ավելի հզորանալու...:

Քեմալի 25 հազարանոց բանակի դեմ Յայաստանն ուներ լավ զինված եւ հագնված 40 հազարանոց բանակ, որի զգալի մասը, սակայն, կազմում էին հապճեպ զորակոչված ու ընդամենը քանակ ավելացնող պատրաստի դասալիքները. բանակ, որ բարոյալքվել էր դեռ մայիսյան ապստամբության օրերին, բարոյալքվել ներքին թալանների ու բոլշեւիկյան քարոզների պատճառով: Եվ այս ամենի համար հանցավոր էին ոչ այնքան կռվող զինվոր-

ները, որքան քաղաքական ղեկավարությունն ու գինվորական նախարարությունը հատկապես. նախարարություն, որի քթի տակ Ղուկաս Ղուկասյանի պես անհայտենացածները բանակում «կարմիր թուրքերի դեմ» չկռվելու քարոզչություն էին ծավալում:

Հոկտեմբերի 30-ին, մի քանի ձեւական կրակոցներից հետո, Կարսի անառիկ թվացող ամրոցը հանձնվեց թուրք «եղբայրներին», եւ այդ անպատիվ անկման պատասխանատվությունը միայն մեկ նարդ քավեց՝ գնդապետ Մազմանյանը, որ ասպետաբար ինքնասպան եղավ:

Սակայն Կարսում պարտվողը միայն հայկական բանակը չէր, այլ ողջ հայությունը, որն իր ընդհանրության մեջ արիության ու մարտունակության մկրտություն չստացավ:

Ստեւնում էր Հայաստանի խորհրդայնացումը, ու խորհրդային Ռուսաստանը ամեն միջոցով արագացնում էր այն: Եվ նոյեմբերի վերջին Հայաստանի կառավարությանն ուրիշ բան չէր մնում, քան ընդունել Ռուսաստանի պայմանը՝ երկիրը հանձնել բոլշեւիկներին: Այդ պայմաններում Հայաստանի խորհրդայնացումը, հավանաբար, անխուսափելի էր, եւ դժվար թե թուրքերից պարտված հայկական բանակը կարող լիներ դիմակայելու Ռուսաստանի ծավալմանը: Սակայն, եթե Հայաստանի Հանրապետությունը արժանապատվորեն կռվեր եւ հաղթեր Քեմալին, կարելի էր ասել, որ Ռուսաստանը Հայաստանի՝ որպես կարող ուժի հետ հաշվի՝ կնստեր, եւ, թեկուզ խորհրդային, Հայաստանի տարածքներն ավելի լայն կլինեին: Անշուշտ, բոլշեւիկները «արեւմտյան իմպերիալիստներին» Առաջավոր Ասիայից դուրս մղելու ակնկալիքով էին դաշնակցում Քեմալի հետ, բայց պետք էր ասել նաեւ, եւ սա էական է, որ դաշնակցում էին ազգային շարժման ղեկավարի հետ, որը կարողացավ անկյալ վիճակից հանել թուրքիան եւ ոչ մեծաթիվ բանակով հաղթանակներ տանել նախ հայկական, ապա հունական ճակատներում:

Այնինչ Հայաստանի Հանրապետությունը պարտվեց: Եվ այդ պարտությունն արձանագրվեց դեկտեմբերի 2 - լույս 3-ի գիշերը՝ բոլշեւիկյան դավադրական միջնորդությամբ կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով, ուր թուրքերը, «ինտերնացիոնալի» երաժշտության ձայների ներքո, հաղթական արհամարհանքով, մի քանի ամիս առաջ 56 հազ. քառ. կմ տարածքով Հայաստանին էին թողնում ընդամենը 11 հազ. քառ. կմ հողակտոր:

Ինչո՞ւ պարտվեց Հայաստանի Հանրապետությունը. թուրք-բուլղերիկյան զինակցություն՞նն էր պատճառը, ճակատագրի հեզնա՞նքը, բուլղերիկյան քարոզչությունը, Եվրոպայի դավաճանությունը, խորհրդայնացման ուշացո՞ւմը... (3):

Թերեւս սրա լավագույն պատասխանը տալիս է Հովի. Քաջազունին. *«Բուլղերիկների դավադրությունը չէր մեր պարտության պատճառը, ոչ իսկ թուրքերի ուժը (որ շատ էլ մեծ չէր այն ժամանակ), այլ մեր սեփական ապիկարությունը»:*

Հայաստանի Հանրապետությունը պարտվեց ժողովրդի եւ հատկապես բանակի մեջ *ազգային ոգու պակասից*: Ո՞ւմ մեղադրենք, որ մեր 40 հազարանոց բանակը բարոյալքված էր եւ անկարող դիմակայելու 25 հազարանոց զորքին: Ազգային ոգու պակասն էր, որ պարարտ հող էր ստեղծել բուլղերիկյան քարոզչության համար. ոգու պակաս, որը դավադիրներին թույլ էր տալիս զինվորների մեջ հեշտությամբ բթացնել կռվելու կամքը, իսկ ստամոքսով նտահոզված ժողովրդին, նույնքան հեշտությամբ խաբել հացառատ խոստումներով: Այդ ոգու պակասն էր, որ հայության տարանուն հատվածներին, սեփական ուժերին ապավինելու փոխարեն, նետել էր օրինետացիաների գիրկը. ոմանք հավատարմագրվել էին անգլիացիներին,- որոնք հայերին դիտում էին իբրեւ անուղղելի ռուսասերներ, իսկ թուրքերին՝ հուսալի պատվար Ռուսաստանի դեմ,- ոմանք ռուսներին, որոնք ավելի շահագրգռված էին օգնել «արեւմտյան իմպերիալիզմի դեմ պայքարող» Քենալին, քան գնդապետ Հասկելի խորհուրդներով առաջնորդվող եւ Առաջավոր Ասիա ամերիկյան թափանցմանը ակամա օժանդակող հայերին...

Իսկ նրանք, ովքեր զերծ օրինետացիաներից, իսկ ավելի ճիշտ՝ հայկական կողմնորոշմամբ՝ ապավինել էին սեփական ոգու զորությանը, Ջանգեզուրի լեռներում Հայոց Դյուցազնականն էին կերտում:

* * *

Մինչ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Լեզրանի հետ համաձայնության էր եկել՝ Ջանգեզուրը Ադրբեջանին թողնելու, եւ մինչ ստեղծվում էր «ձախ»-երից բաղկացած նոր կառավարություն՝ երկիրը Կարմիր բանակի խնամակալության տակ դնելու (4) եւ իշխանությունը լավագույն ձեւով բուլղերիկներին

հանձնելու համար, Բալկաններում եւ Ղարաքիլիսայում արդեն հերոսացած, մտածող մի զինվորական, առաջնորդելով մի բուռ հայորդիների, վարում էր Սյունիքի հերոսամարտը:

Այդ ծանր օրերին Նժդեհը հղացավ եւ գործի դրեց փրկարար Դավիթբեկյան Ուխտերը: 1920թ. օգոստ. 25-ին, Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Նժդեհի զինվորները Դավիթ-Բեկի անունով ուխտեցին՝ *«հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռվել մինչեւ վերջին շունչը»*:

Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու զորությանը, Սյունիքի հայությունը, Նժդեհի ղեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազնամարտը: Լեռնահայության դիմումներին՝ որեւէ կերպ օգնելու, ՀՀ կառավարությունը, բացի մեկումեջ արվող քաջալերանքի կամ համակրանքի խոսքերից, ոչ մի կերպ չարձագանգեց:

Ավելին, դեռ 1920 թվականի օգոստոսին, ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, բոլշևիկների հետ կնքած զինադադարի համաձայն, Դրոյի միջոցով հեռագրում էր Նժդեհին՝ թողնել Կապանն ու Գեմվազը եւ անցնել Երեւան: Բայց Նժդեհը, չընդունելով ՀՀ զինվորական նախարարի՝ Ջանգեզուրը թողնելու հրամանը եւ մերժելով Դրոյի առաջարկը՝ անցնել Երեւան ապաքինվելու (Գորիսի ձորում վիրավորվել էր), նախընտրեց մնալ Սյունիքում եւ մեռնել, քան մեռնակ թողնել լեռնահայությանը:

Բացահայտած թուրք-բոլշևիկյան միացյալ դավադրությունն ու չընդունելով ՀՀ կառավարության կրավորական կեցվածքը, որը Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի հետ կնքած համաձայնագրով փաստորեն Ջանգեզուրը Ադրբեջանին հանձնելու նախաքայլ էր անում, Սյունիքը շարունակեց կռիվը եւ Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1920թ. դեկտեմբերին, իրեն հռչակեց ինքնավար:

1921թ. հունվարին Դրոն Բաքվից մի հեռագիր հղեց Նժդեհին՝ առաջարկելով նրան թույլ տալ Ջանգեզուրի խորհրդայնացումը, հավատացնելով եւ վստահեցնելով, որ այդպիսով Մոսկվայի առաջիկա կոնֆերանսում, ուր լուծվելու էին նաեւ վիճելի հողային հարցերը, Խորհրդային Ռուսաստանը բարյացակամ կլինի դեպի Հայաստանը եւ կպաշտպանի հայ աշխատավորության շահերը: Այս անգամ եւս, Նժդեհը, իբրեւ հեռատես քաղաքագետ, չհեռացավ Սյունիքից եւ շարունակեց մաքառել:

Իսկ Հայաստանի խորհրդայնացված մասում տիրում էին բոլշեվիկյան սանձարձակությունն ու վայրենությունը, եւ կարմիր կոմիսարները «դասակարգային թշնամիների» արյան պահանջված քանակն էին հեղում:

Եվ ցեղի ոգին պռթկաց... Հայության ըմբոստ ընտրանին, որի մեջ մեռած չէր ցեղային հպարտությունը, բռնության նկատմամբ անհանդուրժողականությունը, բնական մղումով՝ ցեղի ոգու կանչով, ընդվզեց: Թիկունք ունենալով Լեռնահայաստանը՝ խորհրդայնացված ժողովուրդը, 1921-ի փետրվարին, ապստամբությամբ տապալեց բոլշեվիկյան բռնատիրությունը:

Ապստամբությունն ի վերջո ճնշվեց. ներքին այդ կռիվների ընթացքում մոտ 20 հազար հայեր զոհվեցին: Սակայն, շնորհիվ ապստամբության, բոլշեվիկյան կացնից փրկվեց մեր մտավորականության զգալի մասը, մտավորականություն, որը հետագայում անգնահատելի ավանդ ունեցավ Սփյուռքի հայապահպանման գործում (5): Իհարկե, փրկվեց նաեւ մեր արժանապատվությունը...

Սակայն, նույնիսկ Փետրվարյան ապստամբության պարտությունը եւ դրա հետեւանքով՝ 12 հազար գաղթականության (որից 4 հազարը՝ զորք) նահանջը,- որոնք զգալիորեն ազդեցին Լեռնահայության բարոյահոգեբանական վիճակի վրա,- չընկճեցին Սյունիքը, եւ նա շարունակեց իր հաղթական կռիվները. ապրիլին հռչակվեց Լեռնահայաստանի Հանրապետություն՝ սպարապետ Նժդեհի վարչապետությամբ:

Հունիսի 1-ին, Ջանգեզուր անցած ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Լեռնահայաստանը հայտարարվեց Հայաստան՝ Սիմոն Վրացյանին նշանակելով վարչապետ (Նժդեհը մնում էր սպարապետ): Նոր կառավարությունը թույլ տվեց մի շարք կոպիտ սխալներ, որոնց մեջ ամենից ճակատագրականը եղավ երեք հազար թաթար-թուրքերի՝ իբրեւ քոչվոր, իսկ իրականում որպես ծայտյալ դավադիրներ, Սիսիան ազատ մուտքի արտոնումը: Իսկ Երեւանից նահանջած զորքը կամավոր անձնատուր եղավ կարմիրներին:

Այս ամենին ավելացրած՝ Վրաստանի խորհրդայնացումը, Փետրվարյան ապստամբության պարտությունը եւ Արարատյան գաղթականության՝ դեպի Սյունիք նահանջը, մասնավորապես, նահանջող մտավորականության եւ երիտասարդության վաղաժամ անցնելը Պարսկաստան, բարոյալքիչ ու հոռի ազդեցություն ունեցան Լեռնաշխարհի հայության վրա: Պարենի ու հացա-

հատիկի չգոյությունը, վարչական եւ զինվորական մարմինների միջեւ առաջ եկած անհամաձայնությունները եւս իրենց բացասական հետեւանքն ունեցան:

Այս պայմաններում, խուսափելու համար ավելորդ հալածանքներից, որոնց կարող էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի հայությունը, եւ հաշվի առնելով, որ Հայաստանի բոլշեւիկյան ղեկավարությունը իր 1921թ. հունիսի հռչակագրով Սյունիքը հայտարարում էր կցված մայր երկրին, հուլիսին Լեռնահայաստանը տեղի տվեց խորհրդայնացման առաջ: Թողնելով Ձանգեզուրը՝ Նժդեհը հրաժեշտին հավաստեց Լեռնահայությանը, որ ինքը ընդմիշտ չի հեռանում եւ պիտի վերադառնա, եթե Երեւանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի տերը: Իսկ Խորհրդային Հայաստանի Հեղկոմին ուղղած իր դիմումը հաղթական սպարապետն ավարտում էր սաստող տողերով. *«Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու, աշխատեք բավարարել հայ գյուղացիության եւ նրա մտավորականության արդար պահանջը»:*

Երկու տարվա կռիվների ընթացքում, թշնամու 15 հազար սպանվածի դիմաց Սյունիքը տվեց ընդամենը մի քանի տասնյակ զոհ, իսկ մոտ 200 գյուղեր մաքրագործվեցին թուրքերից ու վերադարձվեցին հայերին:

Շնորհիվ Լեռնահայաստանի հերոսամարտի, հնարավոր եղավ՝

- ա) փրկել Լեռնահայությանը կոտորածից,
- բ) Սյունիքը կցել Մայր Հայրենիքին՝ մահացու անդամահատումից զերծ պահելով Հայաստանը (6),
- գ) հոգեբանորեն եւ ռազմագիտորեն հնարավոր դարձնել Փետրվարյան ապստամբությունը,
- դ) ապահովել հայ մտավորականության եւ մարտական ուժերի նահանջն ու անցումը Պարսկաստան:

Ամփոփելով՝ փորձենք զուգադրաբար ցույց տալ այն գործոնները, որոնք, ի վերջո, հանգեցրին հանրապետության պարտությանն ու Սյունիքի հաղթանակին:

Մինչ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել էր արեւմտյան կողմնորոշում, Լեռնահայաստանն առաջնորդվում էր՝ սեփական ուժի եւ ոգու զորությանն ապավինելու սկզբունքով:

Եթե ՀՀ-ն իր քաղաքականության շեշտը դրել էր դիվանագիտության վրա եւ հաճախ ստիպված էր լինում ընդունել թելադրվող անբարենպաստ պայմանները, ապա Լեռնահայաստանը, ելակետ ընդունելով ուժի քաղաքականությունը, ինքն էր թելադրում պայմանները: Եվ եթե ՀՀ-ը հիմնականում հավատարիմ մնաց ի սկզբանե որդեգրած իր կրավորական կեցվածքին, ապա՝ Լեռնահայաստանը հաղթեց նաեւ իր վստահ ներգործականությանը:

ՀՀ-ն ուներ մեծաքանակ, լավ զինված, բայց բարոյազրկված բանակ, Լեռնահայաստանը՝ թեւ փոքրաքանակ, պակաս հագեցված, բայց ոգեղեն բանակ:

ՀՀ-ը հետեւողական չեղավ երկիրը թուրք-թաթարներից մաքրագործման մեջ, մինչ Սյունիքը վճռական գտնվեց գյուղերի թուրքաթափման գործում:

Եթե ՀՀ-ը չուներ ազգային քարոզչություն եւ հանդուրժում էր բոլշեւիկյան քարոզչությունը, ապա Լեռնահայաստանը առաջնորդվում էր ցեղային գաղափարներով եւ դրանցով դիմագրավում բոլշեւիկյան ազգամերժ քարոզչությանը:

Օրհասական այդ տարիներին, երկուսուկես տարվա ընթացքում, ՀՀ-ը փոխեց չորս կառավարություն, որտեղ միշտ բացակայեց ուժեղ ձեռքը, իսկ Լեռնահայաստանը ունեցավ կարող առաջնորդ, որն անվախորեն ստանձնեց Լեռնահայության ճակատագրի պատասխանատվությունը:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը պարտվեց ազգային ոգու պակասից, իսկ Լեռնահայաստանը հաղթեց այդ ոգու դրսեւորման շնորհիվ:

1. Տեղին է նկատել տալ, որ իրավամբ արժանին մատուցելով Սարդարապատին, մի տեսակ ստվերում են մնացել Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի կռիվները (հատկապես վերջինը, որն իր հերոսականությամբ եւ վճռորոշությամբ ոչնչով չի զիջում Սարդարապատին): Դա, հավանաբար, պայմանավորված է խորհրդային պատմագիտության ազդեցությամբ, որը լուսաբանելու համար Ղարաքիլիսայի ու Բաշ-Ապարանի կռիվները, ստիպված պիտի լիներ նաեւ մեծարել դրանց

«անցանկալի» հերոսներին (իմա՝ Նժդեհին ու Դրոյին), մի բան, որ համեմատաբար դյուրին էր Սարդարապատի պատմաշինության հարցում:

2. Թեև, հաշտության բանակցությունների համար նախապայման դնելով անկախության հայտարարումը (մայիսի 28-ին հայերն ընդունեցին թուրքերի պայմանը եւ պատվիրակություն ուղարկեցին Բաթում), թուրքերը նպատակ ունեին իրենց եւ Ռուսաստանի միջեւ, ապահովության համար, միջանկյալ (բուֆերային) պետություններ ստեղծել, այդուհանդերձ, եթե չլինեին մայիսյան հերոսական կռիվները, թուրքերը ոչ միայն չէին համաձայնի Հայաստանի անկախության հետ, այլեւ կփորձեին ավարտին հասցնել 1915-ի սեւ գործը:

3. Չենք կարծում, որ ավելի շուտ ընդունելով խորհրդային կարգերը (ինչպես դա արեց Ադրբեջանը), Հայաստանը շահած կլիներ: Այն փաստը, որ Խորհրդային Ռուսաստանը չաջակցեց Հայաստանում մայիսյան ապստամբությանը, խոսում է այն մասին, որ ռուսները արդեն դաշնակցել էին Թուրքիայի հետ, նրան էին ընտրել իբրեւ գործակից՝ միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարում:

4. 1920թ. օգոստոսի 10-ին Բ. Լեզրանի եւ Ա. Ջամալյանի միջեւ Թիֆլիսում կնքված համաձայնագրով, ՀՀ-ն իր համաձայնությունն էր տալիս Կարմիր բանակի մուտքին Ջանգեզուր, Ղարաբաղ եւ Նախիջեւան:

5. Բավական է թվարկել Լ. Շանթի եւ Ն. Աղբալյանի հիմնած «Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միություն»-ը եւ վերջինիս ճեմարանը Բեյրութում, Ռ. Դարբինյանի խմբագրած, առայսօր չգերազանցված «Հայրենիք» պարբերականը:

6. Երբեմն կարճամտորեն պնդվում է, թե առանց Նժդեհի վարած կռիվների էլ Խորհրդային Ռուսաստանը Ջանգեզուրը կթողներ Հայաստանին, քանզի, հակառակ դեպքում, Նժդեհի հեռանալուց հետո, այն կարող էր կցել Ադրբեջանին: Սակայն... Պետությունների միջեւ կնքվող պայմանագրերը հաստատում եւ արձանագրում են նրանց միջեւ տվյալ պահին առկա սահմանները, եւ եթե 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի նախօրյակին Ջանգեզուրում լինեին ոչ թե Նժդեհի մի խումբ ուխտյալները, այլ Կարաբեքիրի ասկյարները (եւ այդ դեպքում ոչ միայն շատ գյուղեր թուրքաբնակ կլինեին, այլեւ մնացածներն էլ հայաթափ), միանշանակ կարելի է պնդել, որ Ռուսաստանը Սյունիքը կարժանացներ Նախիջեւանի ու Ղարաբաղի ճակատագրին: Ավելին, Սյունիքը Ադրբեջանին թողնելուց հետո, արդյո՞ք Խորհրդային Ռուսաստանը հետագայում կհանդուրժեր Հայաստանի՝ իբրեւ առանձին խորհրդային հանրապետության գոյությունը, թե՞ այն կտարրալուծեր Վրաստանի եւ Ադրբեջանի մեջ:

Հավելված 4

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարց – Այսօր աշխարհում ընդունված գաղափարախոսական ուղղություններից ո՞րն է առավել համահունչ հայ ազգային գաղափարախոսության պահանջներին:

Պատ. – Ժամանակակից աշխարհում տարածում գտած գաղափարախոսական ուղղություններից հայ ազգային գաղափարախոսության պահանջներին, թերևս, առավել համահունչ է *դասական պահպանողականությունը*:

Հարց – Որո՞նք են պահպանողականության հիմնական դրույթները, եւ ինչո՞վ են դրանք տարբերվում այսօր տարածում գտած մյուս քաղաքական գաղափարախոսություններից՝ սոցիալիզմից (մասնավորապես, սոցիալ-դեմոկրատիզմից) եւ լիբերալիզմից:

Պատ. – Ընդհանրապես, «պահպանողականություն» ասել է մարդկության (ավելի շուտ՝ նրա ընտրանու) կողմից դրականորեն գնահատված եւ պատմականորեն արդարացված հիմնարար արժեքների, բարոյական նորմերի պահպանում: Այս իմաստով, հայկական պահպանողականությունը նկատի ունի հազարամյակներից մեզ ավանդված արժեհամակարգի՝ ժամանակի քննությանը դիմացած, մեր պատմական ուղին նախանշած արժեքների պահպանումը: Ու թեեւ ժամանակակից աշխարհում չկա պահպանողականության միասնական ընկալում եւ կան պահպանողական տարբեր հոսանքներ, այդուհանդերձ, կան առանցքային հասկացություններ, ընդհանրական սկզբունքներ, դրույթներ, որ բնորոշ են «պահպանողականություն» երեւոյթին առհասարակ: Ըստ այդմ, պահպանողական աշխարհընկալմանը բնորոշ են՝

Հավատն առ Աստված ու նրա պատվիրանները:

Նախապատվություն տալը մնայունին, հավիտենականին (հայրենիք, ընտանիք եւ այլն)՝ ի հաշիվ անցողիկի, ժամանակավորի (պետության կառավարման այս կամ այն ձեւը, հասարակության կազմակերպման որոշ մոդել եւ այլն):

Ստածելակերպի կոնկրետությունը՝ համեմատ վերացականությունների: Վերացական մտային կառուցվածքները, կա-

տարյալ թվացող տեսական սխեմաները խորթ են պահպանողականությանը: Այս առումով, եթե սոցիալիստներն ու լիբերալները, հետեւելով վերացական տեսությունների, օրինակ, իբրեւ պատմության վերջին հանգրվան տեսնում են, համապատասխանաբար, համայնավարական եւ լիբերալ-դեմոկրատական հասարակարգերը, պահպանողականները գտնում են, որ պետք է ընդունել իրերի նախասահմանված բնական կարգը (որն ի սկզբանե արդար է եւ ներդաշնակ) եւ պահպանել այն:

Ավանդական (ազգային, կրոնական) արժեքների հանդեպ նախանձախնդրությունը: Պահպանողականները հաճախ մեղադրում են ազատականներին եւ սոցիալ-դեմոկրատներին արտաքին աշխարհի նկատմամբ չափից ավելի բաց լինելու, որոշ առումով՝ կոսմոպոլիտիզմի դիրքերից հանդես գալու (օրինակ՝ օտար ներգաղթողների հանդեպ հանդուրժող լինելու) մեջ, ինչը հանգեցնում է ավանդական արժեքների կորստին, նյութապաշտության եւ հեղոնիզմի ազդեցության աճին:

Ի տարբերություն լիբերալիզմի ու սոցիալիզմի, որոնք ծեւավորվել են որպես, համապատասխանաբար, բուրժուազիայի եւ բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական հոսանքներ, պահպանողականությունն իր համախոհներն է գտնում մարդկանց տարբեր խմբերում, որոնք իրերի առկա վիճակը չեն ցանկանում փոխել հեղափոխությամբ եւ անորոշ ապագայի հեռանկարով: Այս առումով, թերեւս, *պահպանողականությունը դասակարգային բնույթ չունի:*

Չատկանշական է դասական պահպանողականության այն հիմնարար մոտեցումը, թե *հասարակության բարելավումը պետք է իրականացվի մասնակի եւ փուլային բարեփոխումների ճանապարհով, եւ ցանկացած բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին:* Ըստ այդմ, պահպանողականությունը սկզբունքորեն մերժում է հեղափոխականությունը, քանզի այն խախտում է հասարակական կյանքի բնականոն զարգացման ընթացքը: Պահպանողականության խնդիրն է՝ *բարեփոխումների միջոցով կանխել հեղափոխական իրավիճակները:* (Պետք է ասել, որ ամերիկյան նեոկոնները «մեղանչեցին» հատկապես այս սկզբունքի դեմ՝ հանուն աշխարհի դեմոկրատացման հեղափոխականությունը արտերկրում տարածելով):

Ըստ պահպանողականների, մարդու իրավունքներն իմաստավորված ու երաշխավորված են միայն կազմակերպված հասարակության շրջանակներում: Սա եւս տարբերվում է լիբերալների մոտեցումներից, որոնք գրեթե բացարձակացնում են մարդու իրավունքներն ու ազատությունները՝ այն հաճախ հակադրելով հանրույթի շահերին:

Պահպանողական արժեհամակարգում առանցքային տեղ ունեն հետեւյալ հիմնական հասկացությունները.

Ավանդական ընտանիք: Պահպանողականները բացասական վերաբերմունք ունեն պաշտոնապես չգրանցված զույգերի, միասեռական զույգերի, մանավանդ վերջիններիս պաշտոնապես գրանցելու եւ երեխաներ որդեգրելու իրավունքի նկատմամբ: Պահպանողականությունն ընդունում եւ արժեւորում է միայն «դասական» ընտանիքը:

Կրոնական կյանք: Պահպանողականները ընդունում են սովյալ հասարակության մեջ ավանդավորված կրոնական կյանքի նորմերը եւ սովորույթները՝ դրանց հետեւելը համարելով առողջ քաղաքական ու հասարակական կյանքի կարելոր նախապայման: Նրանք խիստ բացասական վերաբերմունք ունեն տարբեր տեսակի աղանդների նկատմամբ: Հասարակական եւ քաղաքական կյանքում կրոնի դերի մասին իր տեսակետով պահպանողականությունը էապես տարբերվում է լիբերալիզմից եւ սոցիալիզմից:

Բարոյական նորմերի հաստատուն համակարգ: Պահպանողականները հավատում են, որ գոյություն ունի Աստծո կողմից մարդուն տրված բարոյական նորմերի հաստատուն համակարգ, որին հետեւելը ինչպես անհատի, այնպես էլ հասարակության սրբազան պարտքն է, եւ որից շեղվելու դեպքում՝ խախտվում է աշխարհի ներդաշնակ կարգը:

Պահպանողականության հիմնարար արժեքներից են նաեւ *մասնավոր սեփականությունը եւ տնտեսական ազատականությունը:*

Անշուշտ, վերոնշյալ գաղափարական-քաղաքական ուսմունքների հետ պահպանողականությունն ունի նաեւ որոշ ընդհանուր եզրեր, բայց դա հարցի կոնտեքստից դուրս է:

Հարց – Որքանո՞վ է մեր հասարակության համար ընկալելի պահպանողական գաղափարախոսության արժեհամակարգը:

Պատ. – Ընդհանրապես, *հայ հասարակությունը եւ պահպանողական է, եւ անընդհատ նորին ձգտող:* Նա հետամուտ է թե՛ իր բուն արժեքների պահպանմանը, թե՛ արդիականացումից հետ չմնալուն, նորը յուրացնելուն:

Սակայն, համաշխարհայնացման (գլոբալացման) արդի գործընթացները լուրջ նարտահրավեր են ազգային ինքնությանը եւ պետական ինքնիշխանությանը: Միաժամանակ, այսօր աշխարհում, լիբերալ-դեմոկրատական համակարգի ճգնաժամի եւ սոցիալիստական գաղափարների վարկաբեկման պայմաններում, զգալի վերելք է ապրում պահպանողականությունը:

Այս իմաստով, *պահպանողականությունը գաղափարախոսական հուսալի զենք է ինչպես մեր հոգեւոր-մշակութային ինքնատիպությունը պահպանելու, այնպես էլ՝ համաշխարհային զարգացումներից հետ չմնալու առումով:* Ըստ այդմ, մեր հասարակության տարբեր շերտերին, համապատասխան քարոզչության դեպքում, այն ընկալելի է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգային գաղափարախոսության հիմնահարցերը -----	3
- «Ազգային գաղափարախոսություն» հասկացության սահմանումը, ընթացումները	
- Ազգային գաղափարախոսությունը եւ մեր առաքելությունը	
- Ե՞րբ է առաջացել, պատմական ի՞նչ դրսեւորումներ է ունեցել	
- Ո՞վ է այն որոշելու	
- Արդի վիճակը	
- Ազգային գաղափար	
Հայկական Դիմադրություն -----	10
Ազգային գաղափարախոսության հիմնադրույթները -----	13
Հայկական Բարձրավանդակը հայերի հայրենիքն է -----	15
Ցեղի շարունակելիությունը եւ արյան մաքրության խնդիրը -----	22
Գոյության կռիվը ազգերի կյանքում -----	30
Ներցեղային բարոյականը եւ ազգային միասնության խնդիրը -----	32
Ազգայինը եւ համամարդկայինը -----	38
Հայ եկեղեցու խնդիրները -----	43
Մեր հոգեբանական որոշ ախտերի մասին -----	48
Մահվան եւ հավիտենության խորհուրդը -----	53
Ազգային պետություն. ազգային եւ պետական	
գաղափարախոսությունների հարաբերակցությունը -----	59
Եզրափակում -----	66
Հավելված 1. Մեր տոների ուժական խորհուրդների մասին -----	67
Հավելված 2. Գ. Յ. Դաշնակցության դերի եւ անելիքի շուրջ -----	78
Հավելված 3. Պատմական վերարժեւորումներ -----	82
Հավելված 4. Պահպանողականության մասին -----	99